# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
# 6

## ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆ

դասագիրք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի համար

*Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ*
*թղթակից անդամ*
*Բ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ*

ՄԱՆՄԱՐ
MANMAR

ՀՏԴ
ԳՄԴ
Հ

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլ.Բարխուդարյան**
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Բ.Հարությունյան**
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գ.Սարգսյան**
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Հ.Ավետիսյան**
Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ **Ա.Մովսիսյան**
Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ **Պ.Հովհաննիսյան**

Դասագրքի մեթոդական աշխատանքներին մասնակցել են՝
**Ա. Գյուլբուդաղյանը, Ք.Յախշյանը** և **Վ.Պարսամյանը:**

**ISBN** ԳՄԴ

© Վլ. Բարխուդարյան, Բ. Հարությունյան, Գ. Սարգսյան,
Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, 2012թ.
© «ՄԱՆՄԱՐ», 2012թ.

«... դու պատկանում ես նախնական և քաջ ազգի, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով, որոնք մենք կհիշատակենք այս պատմության ընթացքում»:

***Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Ա, գլ. Ա***

## *Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն*

***Պատանի՛ բարեկամներ***

Այս ուսումնական տարվանից դուք սկսում եք սովորել մեր ժողովրդի պատմությունը, որը հայ ժողովրդի կենսագրությունն է: Ինչպես ամեն մի մարդ ունի իր կենսագրությունը, այդպես էլ ազգային պատմությունը մեզ է ներկայացնում մեր ժողովրդի անցած հազարամյակների ուղին: Մեր առաջ հառնում են հայ ժողովրդի աշխարհագրական միջավայրը,նրա կազմավորման գործընթացները, ստեղծագործ աշխատանքի ու հերոսական պայքարի անմահ դրվագները և, իհարկե, դարերի ընթացքում կերտած մշակութային մեծամեծ արժեքները: Ուստի հայ ժողովրդի յուրաքանչյուր զավակ պարտավոր է իմանալ իր ժողովրդի կենսագրությունը, այսինքն՝ Հայոց պատմությունը:

Հայոց պատմությունը ժամանակագրական առումով բաժանվում է մի քանի դարաշրջանների: Այդ բաժանումն անվանում են պարբերացում: Ներկայումս պարբերացումը կատարվում է հետևյալ սկզբունքով.

**Հնագույն շրջան** – անհիշելի ժամանակներից մինչև Վանի թագավորության անկումը:

**Հին շրջան** – Երվանդունիների թագավորության կազմավորումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակվելը Հայաստանում, այսինքն՝ մինչև IV դարի սկիզբը:

**Միջնադարի շրջան** – քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց մինչև XVII դարի կեսերը կամ հայ ազատագրական շարժման վերելքը: Այն իր հերթին բաժանվում է վաղ, զարգացած և ուշ միջնադարի ժամանակաշրջանների:

**Նոր շրջան** – սկսվում է XVII դարի II կեսի հայ ազատագրական շարժումներով և հասնում մինչև 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը:

**Նորագույն շրջան** – ընդգրկում է Հայաստանի առաջին, երկրորդ (Խորհրդային Հայաստանի) և երրորդ Հանրապետությունների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմությունը՝ հասնելով մինչև մեր օրերը:

Միջնադարից սկսած Հայոց պատմության անկապտելի բաղադրիչն է դառնում հայկական գաղթավայրերի և Սփյուռքի պատմությունը:

Սովորելով քո ժողովրդի պատմությունը, այլ խոսքով՝ ճանաչելով ինքդ քեզ, դու քո ամբողջ էությամբ՝ մտքով ու սրտով, կապվում ես քո մայր հողին, հպարտություն զգում քո ժողովրդի պատմության համար, սքանչանում կերտված արվեստով, համաշխարհային մշակույթի ու գիտության մեջ նրա ներդրած մեծ ավանդով: Երբ ճանաչես ու սիրես քո ժողովրդի պատմությունը, քո նախնիների օրինակը քեզ կմղի հերոսական սխրանքների, կհավատաս, որ կա մի շատ թանկ բան՝ Հայրենիքը, որին անհրաժեշտության դեպքում պետք է նվիրաբերվել անմնացորդ և ամբողջ էությամբ:

Հայ ժողովուրդն ապրել է հզորության ժամանակներ, ենթարկվել այլևայլ փորձությունների և՝ տոկալով դարերի արհավիրքներին, հասել է XXI դար՝ մեծ զոհողությունների գնով վերականգնելով իր անկախությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Սակայն նրա հարևանությամբ ապրող շատ ժողովուրդներ, որոնք անգամ կայսրություններ են հիմնել, չեն դիմացել պատմության փորձություններին և ընդմիշտ անհետացել են

պատմության թատերաբեմից: Այնքան ամրակուռ էր կերտվել հայ ժողովուրդը, այնքան հարուստ էր նրա մշակույթը և այնքան հզոր նրա ազգային ինքնագիտակցությունը, որ նա համառ, ազտագրական պայքարի շնորհիվ ոչ միայն գոյատևեց, այլև, վերականգնելով իր քաղաքական անկախությունը, իր արժանավոր տեղն զբաղեցրեց աշխարհի ժողովուրդների ընտանիքում: Բոլորովին վերջերս հայ ժողովրդի հերոսական պայքարի և նրա զավակների արյան գնով ազատություն ձեռք բերեց արցախահայությունը, որը մեր ժողովրդի դարավոր մաքառումների ու պայքարի մերօրյա դրսևորումն էր: Անմահ է այն ժողովուրդը, որի զավակները հանուն իրենց Հայրենիքի ազատության պատրաստ են իրենց արյունը թափել և անգամ կյանքը զոհաբերել: Մեր ժողովրդի պատմության իմացությունը մեզ մեծապես օգնում է ոչ միայն հասկանալ ու արժևորել անցյալը, իմաստավորել ներկան, այլև դասեր քաղել սեփական պատմությունից և կանխատեսել ու կերտել ապագան:

Մեր Հայրենիքն այսօր աստիճանաբար վերականգնում է իր ուժերը, զարգանում ու առաջընթաց ապրում: Մենք պետք է քաջ գիտակցենք, որ ոչ ոք մեզ համար հարուստ ու բարեկեցիկ երկիր չի ստեղծի: Ուստի մեր սրբազան պարտքն է ամբողջ ազգով լծվել մեր երկու պետությունների կայացման, զարգացման և բարգավաճման հայրենանվեր գործին:

Պատանի՛ բարեկամ, լա՛վ սովորիր քո պատմությունը, ճանաչի՛ր քո ազգը և Հայրենիքը, ինչը քեզ կօգնի դառնալու քո երկրի արժանավոր քաղաքացի:

# Թեմա 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

## 1. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

***Հայկական լեռնաշխարհը հայերի հայրենիք:*** Աշխարհագրական այն տարածքը, որի հետ ի սկզբանե կապված է հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, կոչվում է Հայկական լեռնաշխարհ: Այն բնության ստեղծագործություն է, սակայն, եթե բացառենք չնչին տարբերությունները, այն զարմանալիորեն համընկնում է մեր պատմական հայրենիքին, որտեղ կազմավորվել, զարգացել ու իր քաղաքական կյանքն է կերտել հայ ժողովուրդը: Հայերն իրենց հայրենիքը կոչում են Հայք կամ Հայաստան, իսկ հարևան ժողովուրդները՝ Արմենիա, և միայն վրացիներն են, որ մեր երկիրն անվանում են Սոմխեթի:

**նկ. Նեմրութ լեռան գագաթը կիսալուսնաձև լճով**

Հայկական լեռնաշխարհն ընդարձակ երկիր է՝ շուրջ 400 հազար քառ. կմ տարածքով: Նրա կենտրոնական մասն զբաղեցնում է Հայկական հրաբխային բարձրավանդակը, որի նշանակալից մասը զբաղեցնում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհը: Հայկական լեռնաշխարհը կտրտված է բազմաթիվ լեռնաշղթաներով, որոնց միջև ընկած են արգավանդ հարթավայրեր ու սարահարթեր, որտեղ էլ կենտրոնացած է եղել երկրի բնակչության մեծ մասը:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է Փոքրասիական բարձրավանդակի և Իրանական սարահարթի միջև, ունի ծովի մակերևույթից 1500-1800 մետր միջին բարձրություն և իշխող դիրք ունի դրանց նկատմամբ: Դրա հետևանքով որոշ աշխարհագրագետներ փոխաբերական իմաստով այն կոչել են Լեռնային կղզի:

**նկ. Այրարատյան դաշտը Մասիս և Սիս լեռնագագաթներով**

Սկիզբ առնելով Մասիս (Մեծ Արարատ) լեռնագագաթից (5165 մ) և ձգվելով արևելքից արևմուտք, Հայկական Պար լեռնաշղթան գրեթե երկու հավասար՝ հյուսիսային և հարավային մասերի է բաժանում Հայկական լեռնաշխարհը: Մասիսը համարվել է սրբազան լեռ, և նրա շուրջը բազմաթիվ առասպելներ ու ավանդություններ են հյուսվել: Աշխարհում կան Մասիսից ավելի բարձր լեռնագագաթներ, սակայն դրանցից և ոչ մեկն իր շրջակայքի նկատմամբ այնպես վեր չի

խոյանում, ինչպես Մասիսը: Նրա հարևանությամբ բարձրանում է Սիս կամ Փոքր Մասիս (Փոքր Արարատ) լեռան գեղեցիկ, կոնաձև գագաթը:

**նկ. Քառագագաթ Արագած լեռը**

Հայկական Պար լեռնաշղթան հարավից և Արագած քառագագաթ լեռնազանգվածը հյուսիսից եզերում են Այրարատյան դաշտը, որի անունը ժողովրդական ավանդությունը կապում է հայոց թագավոր Արա Գեղեցիկի անվան հետ: Ներկայումս այն կոչվում է Արարատյան դաշտ, որի կենտրոնով հոսում է Երասխ (ներկայումս՝ Արաքս) գետը: Արարատյան դաշտը, որ մեր հայրենիքի առավել ընդարձակ և արգասաբեր հարթավայրերից մեկն է, գրեթե մշտապես եղել է երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնը: Այստեղ են գտնվել Հայաստանի նշանավոր մայրաքաղաքներ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը և Դվինը: Այստեղ է գտնվում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքամայր Երևանը:

***Գետերն ու լճերը:*** Հայկական լեռնաշխարհն՝ իր լեռնային բարձր դիրքի շնորհիվ, Առաջավոր Ասիայի խոշոր ջրաբաշխն է[1]: Այստեղից են սկիզբ առնում Եփրատ, Տիգրիս, Երասխ, Կուր, Ճորոխ, Հալիս, Գայլ և մի շարք այլ գետեր, որոնք թափվում են Պարսից ծոց և Կասպից, Սև ու Միջերկրական ծովեր:

**նկ. Եփրատի կիրճը Կամախի մոտ**

Մեր հայրենիքի մայր գետը Երասխն է, որն սկիզբ է առնում Սերմանց կամ Բյուրակն լեռներից: Այնուհետև՝ ընդունելով Ախուրյան, Քասաղ, Հրազդան, Ազատ և մի շարք այլ վտակներ,այն միանում է Կուրին և թափվում Կասպից ծով: Հնում Երասխը մի մեծ բազուկով անմիջապես թափվել է Կասպից ծով: Երասխի և նրա վտակների ջրերով ոռոգվում է Արարատյան դաշտը: Երասխը Հայկական լեռնաշխարհի միակ խոշոր գետն է, որն ամբողջությամբ հոսում է մեր հայրենիքով: Երասխի կամ Արաքսի մասին նույնպես հյուսվել են այլևայլ ավանդություններ, իսկ ժողովուրդն այն կոչել է պարզապես Մայր Արաքս:

Հայկական լեռնաշխարհը հայտնի է իր երեք խոշոր և բազմաթիվ միջին ու փոքր մեծության լճերով: Դեպի ծով ելք չունեցող Հայաստանում խոշոր լճերը սովորաբար կոչվել են ծով կամ ծովակ: Խոշորներից Սևանա լիճը, որ հնում հայտնի էր Գեղամա կամ Գեղարքունյաց ծով անունով, ներկայումս գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այն աշխարհի բարձրադիր լճերից է, ունի քաղցրահամ ջուր: Այս ձկնառատ (իշխան, գեղարքունի և այլն) լիճն են թափվում 29 գետեր ու գետակներ, իսկ նրանից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Լճում եղել է մեկ կղզի, որը Սևան-Հրազդան կասկադի կառուցման և լճի հայելու կրճատման հետևանքով վերածվել է թերակղզու:

**նկ. Սևանա լիճը (տեսքը կղզուց)**

Հայկական լեռնաշխարհի չքնաղ լճերից է Վանա լիճը կամ Բզնունյաց ծովը, որն ավելի քան երկուսուկես անգամ մեծ է Սևանա լճից: Չնայած լճի աղիությանը, նրանում բազմանում է տառեխ ձուկը, որ հնում աղ դրած վիճակում արտահանվում էր հարևան երկրներ: Վանա լճում դեռ հին ժամանակներից զարգացած է եղել նավագնացությունը, իսկ նրա ափերին գտնվել են մի շարք նավահանգիստներ: Լիճն ունեցել է 7 կղզի, սակայն նրա ջրերի բարձրանալու հետևանքով երեքն անցել են ջրի տակ: Վանա լճի ամենամեծ կղզին Աղթամարն է:

Կղզու անունը նշանակում է Աղի ծով:

**նկ. Վանա լիճը: Առաջին պլանում Աղթամար կղզին Սբ Խաչ եկեղեցիով**

1 Ջրաբաշխ է կոչվում, քանի որ Հայկական լեռնաշխարհի գետերը երկրամասի ջրերը բաշխում են տարբեր ջրային ավազանների վրա:

Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասում գտնվում է մեր հայրենիքի ամենամեծ լիճը, որ հնում կոչվել է Կապուտան, իսկ ներկայումս Ուրմիո: Լճի ջրերը խիստ աղի են, որի պատճառով լիճը զուրկ է կենդանական և մասամբ բուսական աշխարհից:

Հայկական լեռնաշխարհի միջին և փոքր մեծության լճերից հիշարժան են Հյուսիսային ծովակը կամ Չըլդըրը, Գայլատու ծովակը, Արճիշակը կամ Արճակը և Թորթումի լիճն իր նշանավոր ջրվեժով:

Հայկական լեռնաշխարհը հաճախակի կրկնվող երկրաշարժերի գոտի է: 1988 թ. տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ:

Հայկական լեռնաշխարհն այսօր հանգած հրաբուխների երկիր է: Դրանցից են Մասիսը, Արագածը, Նեխ-Մասիքը կամ Սիփանը:

**նկ. Տարոնի դաշտը**

***Բուսական և կենդանական աշխարհը:*** Հայկական լեռնաշխարհն ունի հարուստ բուսական և կենդանական աշխարհ: Երկրի ցածրադիր հարթավայրային շրջաններում արհեստական ոռոգման շնորհիվ աճում են բամբակ, նուռ, թուզ, բրինձ և այլն: Հայաստանը հնուց ի վեր հռչակված է անուշահամ պտուղներով՝ խնձոր, տանձ, ծիրան, դեղձ, բալ, կեռաս, սալոր և այլն: Հատկապես հռչակված է ծիրանը, որն օտարների կողմից ստացել է հայկական (armeniaca) անունը: Հացահատիկային կուլտուրաների (ցորեն, գարի, հաճար, կորեկ) մշակությամբ նշանավոր են եղել Շիրակը, Բագրևանդը, Տարոնը, Սևանի ավազանը, Երզնկայի և Խարբերդի դաշտերը: Հայաստանը եղել է վայրի ցորենի նախահայրենիքներից մեկը:

Ցամաքային կլիմայի պատճառով անտառները համեմատաբար փոքր տարածք են զբաղեցնում, չնայած հնում, շատ ավելի տարածված են եղել: Անտառները, որոնք մեծ մասամբ կոչվում էին մայրի, օղակում էին Հայկական լեռնաշխարհը՝ զբաղեցնելով նրա եզրային և տեղ-տեղ կենտրոնական շրջանները: Ծառատեսակներից առավել տարածված են կաղնին, հաճարենին, բոխին, թխկին, հացենին, կեչին, սոճին և այլն: Արցախի, Ուտիքի, Սյունիքի, Գուգարքի, Տայքի, Աղձնիքի, Կորճայքի անտառներում ամենուրեք հանդիպում են վայրի պտղատու ծառեր և թփեր: Հայաստանի կենտրոնական շրջաններում, որտեղ չոր կլիմայի պատճառով գործնականում բացակայում են անտառները,տնկվել են արհեստական անտառներ: Դրանցից Խոսրովի անտառը ներկայումս վերածված է պետական արգելոցի:

Հնուց ի վեր ընտանի կենդանիներից Հայաստանում բուծել են ոչխար, այծ, կով, գոմեշ, ձի և պահել զանազան թևավորներ՝ հավ, բադ, սագ: Վայրի կենդանիներից տարածված են գայլը, աղվեսը, արջը, նապաստակը, կինճը (վայրի խոզ), վիթը, եղջերուն, այծյամը, վայրի ոչխարը և այլն: Վայրի թռչուններից հանդիպում են արծիվը, անգղը, բազեն, արագիլը, կաքավը, բադը, սագը, լորը և այլն: Մարդու գործունեության հետևանքով բավականին կրճատվել է կենդանական աշխարհը: Սեպագիր աղբյուրների համաձայն՝ հեռավոր ժամանակներում Հայաստանի հարավում եղել են փղեր, ջայլամներ և առյուծներ, որոնցից վերջինները հիշատակվում են նաև «Աշխարհացոյց»-ում[2]:

Հայաստանի մի քանի աշխարհներ հնուց ի վեր հռչակված են եղել որպես ձիաբուծության խոշոր կենտրոններ: Երկրի լեռնային և նախալեռնային ծաղկառատ վայրերում մեծ զարգացման էր հասել մեղվապահությունը: Արարատյան դաշտում բազմացող մի տեսակի որդից պատրաստում էին որդան կարմիր կոչվող ընտիր ներկ, որն արտահանվում էր տարբեր երկրներ:

***Կլիման:*** Հայկական լեռնաշխարհի կլիման գերազանցապես ցամաքային է, որը պայմանավորված է եզրային բարձրաբերձ լեռնաշղթաներով, որոնք արգելակում են օդային զանգվածների մուտքը տարածաշրջան: Այդ իսկ պատճառով մեր հայրենիքի կլիման աչքի է

2 «Աշխարհացոյց»-ը աշխարհագրական երկ է՝ ստեղծված V դարում Պատմահայր Մովսես Խորենացու կողմից:

ընկնում շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Սառը օդի զանգվածների ներխուժումը լեռնաշխարհ նրա տարածքի մեծ մասում հաճախ առաջ է բերում ձյան առատ տեղումներ: Եզրային լեռնաշղթաները ձյունածածկույթը պահպանում են տարվա ցուրտ ժամանակի ողջ ընթացքում, իսկ Մասիս լեռը ծածկված է հավերժական ձյան շերտով: Ցածրադիր վայրերում տեղումները սակավ են, ուստի երկրագործությունը հնարավոր չէ առանց արհեստական ոռոգման: Բնակչությունը դեռ հին ժամանակներից արհեստական ոռոգման նպատակով անցկացրել է ջրանցքներ ու առուներ: Հայկական լեռնաշխարհում հանդիպում են մերձարևադարձայինից մինչև ալպիական կլիմայական բոլոր գոտիները:

**նկ. Ջերմուկի կիրճը**

***Ընդերքը: Օգտակար հանածոները:*** Հայկական լեռնաշխարհն ունի հարուստ ընդերք: Դեռ վաղնջական ժամանակներից շահագործվել են պղնձի, կապարի, արծաթի և ոսկու մի շարք հանքեր, իսկ Ք.ա. II հազարամյակի վերջերից՝ նաևերկաթահանքերը: Ոսկի արդյունահանվել է Սպերում, Հայկական Տավրոսում և այլուր, արծաթ՝ Ծոփքում, պղինձ՝ Գուգարքում, Աղձնիքում, Սյունիքում (Կապան) և այլուր, կապար՝ Վանա լճից հարավ ընկած շրջաններում: Երկաթի հարուստ հանքավայրեր կան Աղձնիքում և այլուր:

Դեռ հնուց ի վեր հռչակված էին Կողբի, Նախճավանի (Նախիջևանի) և Կաղզվանի աղահանքերը:

Հայկական լեռնաշխարհը հռչակված է իր բազմաթիվ սառը և տաք հանքային ջրերով, որոնցից վերջինները մեծ մասամբ հայտնի էին ջերմուկ անունով: Հնում նշանավոր էին Էլեգիայի (Եղեգի),Վարշակի, Վայոց ձորի ջերմուկները և այլն: Մեր հանրապետության տարածքում մեծ հռչակ ունեն Ջերմուկի, Դիլիջանի, Արզնիի, Բջնիի և այլ հանքային աղբյուրները, որտեղ գործում են առողջարաններ:

Գործնականում անսպառ են Հայկական լեռնաշխարհի ոչ մետաղական հանքավայրերը: Հանդիպում են տուֆի, բազալտի (որձաքար), հրաբխային կավերի, գրանիտի, մարմարի և այլ հանքավայրեր: Համաձայն «Աշխարհացոյց»-ի՝ Տուրուբերանում հանդիպել է սև և սպիտակ նավթ: Հայաստանի Հանրապետությունում հայտնի են Ջաջուռի և Ջերմանիսի ածխահանքերը:

***Պատմական Հայաստանը վարչաքաղաքական բաժանումներում:*** Միասնական Հայաստանի թագավորությունը, որ տարածվում էր Կուրի և Երասխի ջրկիցից մինչև Կեսարիա կամ Մաժակ քաղաքը, Ք.ա. IV դարում բաժանվեց երկու քաղաքական միավորի՝ Մեծ և Փոքր Հայքերի թագավորությունների: Ք.ա. III դ. կեսերին Մեծ Հայքի թագավորությունից առանձնացավ Ծոփք-Կոմագենեի թագավորությունը, որը շատ չանցած, իր հերթին բաժանվեց Ծոփքի և Կոմագենեի թագավորությունների: Արտաշես Ա-ի (Ք.ա.189-160 թթ.) օրոք մարերից Փայտակարան-Կասպքի ու հարևան երկրամասերի գրավումով և Տիգրան Բ Մեծի կողմից Ծոփքի վերամիավորումով (Ք.ա.94) վերջնականապես ձևավորվեց Մեծ Հայքի տարածքը: Վերջինս, հույն աշխարհագրագետ Պտղոմեոսի նկարագրության համաձայն, բաժանված էր 20/21, իսկ ըստ «Աշխարհացոյց»-ի՝ 15 աշխարհների կամ նահանգների: Դրանք էին Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք և Այրարատ աշխարհները: Յուրաքանչյուր աշխարհ բաժանվում էր գավառների, որոնց ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 200: Մեծ Հայքի թագավորությունն IV դարում ուներ շուրջ 300 հազար քառ. կմ տարածք:

Եփրատ գետից արևմուտք տարածվում էր Փոքր Հայքի թագավորությունը, որի տարածքը, ամենաընդարձակ ժամանակաշրջանում կազմել է 80 հազար քառ. կմ:

Հայկական լեռնաշխարհը կապող օղակ էր Արևելքի և Արևմուտքի միջև: Նրա վրայով անցնում էին Առաջավոր Ասիայի[3] առևտրական և ռազմական մայրուղիներից երկուսը, որոնց խաչմերուկում ընկած էր Մեծ Հայքի թագավորության Արտաշատ մայրաքաղաքը: Հայաստանը կապող օղակ էր նաև Միջերկրածովյան ավազանի, Միջագետքի և Կովկասյան երկրների միջև:

Հայաստանի Հանրապետությունը ներառում է պատմական Հայաստանի տարածքի ընդամենը 1/13-րդ մասը՝ 29,8 հազար քառ. կմ: Հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը,ներառում է շուրջ 12,5 հազար քառ. կմ տարածք: Հայաստանի Հանրապետությունը կազմված է Մեծ Հայքի Այրարատ, Սյունիք, Գուգարք և Ուտիք աշխարհների տարածքի մի մասից, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեջ են մտնում Արցախը գրեթե ամբողջությամբ, Սյունիքի նշանակալից մասը և Ուտիքի որոշ հատվածներ:

***Ընթերցանության համար***

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻՆ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՄԱՍԻՆ

«...Արշակ թագավորը լքեց, թողեց իր նախնյաց բարի ու բնիկ ժառանգությունը՝ հոյակապ, հռչակավոր, երևելի գավառն Այրարատյան, որն ամեն ինչ բուսցնող է, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն: Լերանց բարձր կատարներից ջրեր են հոսում՝ լիուլի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով: Իսկ թե հայացքդ առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեշերը կամ սարահարթները, ապա նրանց վրա սփռվածը հանդերձներ կկարծես և ոչ թե ծաղկաբույս երանգներ՝ տարածված փարթամորեն, անուշահամ ու պարարտ արոտներ, որոնց թանձրախիտ աճած խոտերն արոտական ընտանի անթիվ էշերին ու վայրի կատաղի կենդանիների խմբերին հագեցնելով՝ նրանց գիրացնում են, գավակները պարարտացնում, ճարպակալած մարմինները տոզացնում: Իսկ անուշահոտ ծաղկանց բույրերը, որ քաջ նետաձիգ ու որսասեր տղամարդկանց և բացօթյա ապրող հովիվներին պարգևում են առողջություն, զորացնում են մտքի զգոնությունը և թարմացնում: Այնտեղ կան նաև տեսակ-տեսակ բույսերի արմատներ՝ դեղերի համար պիտանի ու օգտակար, որոնք ըստ ճարտարագետ ու հմուտ բժիշկների երկասիրությունների ճարտարագետ ճանաչողության՝ ախտերն արագորեն բուժում են իբրև սպեղանի և ցավերի մեջ երկար տառապածներին պարգևում առողջություն:...

...Նրանք... ցույց են տալիս երկրի տակ ծածկված գանձերը, որպեսզի նրանք հավաքեն ի շահ իրենց, ի վայելումն այս աշխարհի թագավորական մեծությունների և ի հաստատություն հարկահանների: Եվ այդ գանձերն են ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորների ձեռքը, թագավորներին զուգում են գեղեցկատեսիլ զարդերով ու բանվածքներով, ինչպիսին են խույրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուզված ոսկեհուռ պաճուճանքները: Այլև լուծելով ջրերի մեջ, բնական մի առանձին անուշություն են հաղորդում ամեն տեսակի խորտիկներին: Բայց ամենաբաղձալի դաշտն Այրարատյան իր վրա զուր տեղը չի սնում եղեգնաձև բույսերի արմատները: Չէ որ նրանցից ծնված որդերն էլ կարմրախայտ զարդերի գույներ են տալիս՝ օգտասերներին ընծայելով շահ ու շքեղություն: Իսկ գետերի ընթացքը՝ բազմատեսակ, մեծամեծ ու մանր, տարբեր համի ու տեսքի ձկներով: Ուրախացնելով լցնում է հարստության շնորհները և հագուրդ է տալիս ժրաջան ու անդանդաղ աշխատողների որովայններին:

3 Առաջավոր Ասիա է կոչվում Մերձավոր և Միջին Արևելքի ներկայիս տարածաշրջանը, որի մեջ մտնում են Հայաստանը Հանրապետությունը,ԼՂ, Թուրքիան, Իրանը, Սիրիան, Իրաքը և այլ երկրներ:

Երկիրը, հուրախություն և ի զվարճություն որսատենչ ազատների, իր մեջ անապական ջրերով սնում է բազմատեսակ թռչուններ՝ կաղկաղող ու քաղցրաձայն, առապարասեր, վիմասույզ ու ծովամուտ կաքավների ու սալամբների երամներ, և կամ եղեգնաբնակ, թփերում ու մացառներում թաք կացող պարարտամարմին, անուշահամ վայրի տեսակն աքարների, այլև ջրասուզակ, մամռասեր խոզակեր մեծամարմին թռչուններ, փորը, թանձրն ու սագը և այլազան, անթիվ-անհամար ցամաքային ու ջրային թռչունների բազմություններ: Իսկ նախարարների գունդը, ազատների որդիների հետ, թակարդների շրջափակությամբ երագազինք ուռկաններով, հատուկ կողովներով, որսի էին ելնում. ոմանք ցիռերի ու այծյամների հետևից արշավելով՝ իրենց աղեղների մասին էին հորդորալից բարբառում: Ուրիշները, եղջերուների և եղնիկների հոտերի հետևից ձիարձակ սլանալով, կորովաձիդ տղամարդկանց արիությունն էին ցույց տալիս: Մնացածներն էլ սուսերով, մենամարտիկների պես, վարազների երամակն էին գետին տապալում, կոտորում: Եվ նախարարազուն շատ մանուկներ էլ դաստիարակների ու ծառաների հետ, բազեներով տարատեսակ թռչուններ որսած, դարձյալ բերում էին, ճոխացնում ուրախության ընթրիքները...

Եվ ահա այսպիսի ըղձալի գավառը, չնաշխարհիկ, ամենախնամ արարիչ Աստծո տվչությամբ ամեն ինչով լցված գավառն Այրարատյան, որ գլուխն է Հայոց աշխարհի, գավառը բարեհամբավ, գավառն ամենալի, որ ինքնին օրինակ է առատաբաշխության, ինչպես Սուրբ գրքի երկիրը Եգիպտացվոց ու դրախտն Աստծո ...»:

## ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍԸ
## ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Մեծ Հայքը, որը սկսվում է Պարիադրես լեռներից, ինչպես ասացինք, Կապադովկիայից բաժանված է Եփրատով, և Եփրատից հետո Միջագետքից բաժանված է Տիգրիսով, որը նվազ հայտնի գետ չէ: (Մեծ Հայքը) ծնունդ է տալիս թե՛ մեկին, թե՛ մյուսին և կազմում է սկիզբը Միջագետքի, որը տարածվում է երկու գետերի միջև. այնտեղ միջանկյալ տարածությունը բնակեցված է Արոեացի արաբների կողմից: Այսպիսով այն ձգում է իր սահմանը մինչև Ադիաբենե, նրանից բաժանված լինելով լայնակի մի լեռնաշղթայով, իսկ ձախ կողմում լայնությամբ տարածվում է մինչև Կյուրոս գետը՝ անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ իր երկարությամբ տարածվում է մինչև Փոքր Հայքը, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի մեջ թափվող Ապսարոս գետով և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես լեռներով:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները: Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք այդ սահմանները:**
2. **Ի՞նչ լեռնաշղթաներ գիտեք Հայկական լեռնաշխարհում:**
3. **Քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերն ու գետերը:**
4. **Ի՞նչ կենդանիներ են ոչնչացել Հայկական լեռնաշխարհում մարդու գործունեության հետևանքով:**
5. **Նշե՛ք և քարտեզի վրա ցո՛ւյց տվեք Հայկական լեռնաշխարհի օգտակար հանածոների կարևոր հանքերը:**
6. **Վարչական ի՞նչ բաժանում ուներ Մեծ Հայքը: Թվարկե՛ք Մեծ Հայքի «աշխարհները»՝ նահանգները:**
7. **Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պատմական Հայաստանի ո՞ր «աշխարհների» տարածքն են ընդգրկում:**

# **ԹԵՄԱ 2.** ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

## *1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԸ*

### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՀՐՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆՕՐՐԱՆ

***Մարդու հեռավոր նախնիները:*** Երկրագնդի վրա մարդու նախնիներն առաջացել են 2,5-3 միլիոն տարի առաջ: Դրանց անվանում ենք **նախամարդ:** Նախամարդը երկրի վրա ապրել է տաք կլիմա և նպաստավոր պայմաններ ունեցող տարածքներում, որը նպաստել է նրանց գոյատևմանը և բազմացմանը: Նախամարդն իր արտաքինով նման էր կապկի: Նրա դեմքը կոպիտ էր, քիթը տափակ, ծնոտը խոշոր: Նա քայլում էր երերուն քայլվածքով: Ձեռքերը ոտքերից երկար էին, որոնք կախվում էին ծնկներից ցած:

Նախամարդիկ իրար հետ «խոսում» էին ձեռքերի և դեմքի շարժումներով կամ արտահայտած ձայնային ճիչերով: Նախամարդիկ բազմանալով՝ կամաց-կամաց տարածվում են աշխարհով մեկ, այդ թվում նաև՝ Հայկական լեռնաշխարհում, շուրջ մեկ միլիոն տարի առաջ: Դրա համար մեր երկիրը համարվում է մարդու բնակության բնօրրաններից մեկը:

Նախամարդը չունենալով ոչ մի աշխատանքային գործիք՝ բնության դեմ պայքարում օգտագործում էր սովորական քարը, փայտը կամ մեկ այլ առարկա՝ իր գոյությունը պահպանելու համար: Փաստորեն նախամարդը վարում էր վայրի կենդանիների նման ապրելակերպ:

Կարիքը ստիպում էր նրանց աստիճանաբար անցնել աշխատանքային գործիքներ պատրաստելուն: Այդ ընթացքում կատարելագործվում է նրա քայլվածքը: Ձեռքի թաթը հարմարվում է ավելի նուրբ աշխատանք կատարելուն:

Զարգանում է խոսելու ընդունակությունը՝ իրար հետ շփվելու և հաղորդակցվելու համար: Այդ ամենի արդյունքում զարգանում է գանգի կառուցվածքը, մեծանում՝ ուղեղը: Նախամարդը ձեռք է բերերում մտածելու կարողություն:

**նկ. Վանակատի (օբսիդիանի) նմուշներ**

Նախամարդիկ ապրում էին փոքր խմբերով՝ ***մարդկային հոտերով***: Խմբի բոլոր անդամները զբաղվում էին հավաքչությամբ և որսորդությամբ: Նրանք ուտում էին պտուղներ, ուտելի բույսեր, արմտիք, թռչունների ձվեր, մանր կենդանիներ ու սողուններ: Իսկ որսորդությունը նրանք կատարում էին խմբերով՝ հանդես բերելով թե՛ հնարամտություն, և թե՛ ճարպկություն: Օգտվում էին պարզագույն թակարդներից: Սովորաբար որսում էին մանր կենդանիներ, իսկ խոշոր կենդանիներից՝ միայն հիվանդներին ու զառամյալներին, որոնք ետ էին մնում իրենց հոտերից:

***Աշխատանքի հնագույն գործիքները:*** Նախամարդը վերափոխվեց մարդու այն պահից, երբ սկսեց քարից, փայտից և ոսկրից աշխատանքային գործիքներ պատրաստել: Սկզբում նա օգտագործում էր ձեռքի տակ ընկած պատահական առարկաները, բայց դա անարդյունավետ էին: Պահանջն ստիպեց նրանց պատրաստել գործիքներ, որը և նպաստեց մարդու զարգացմանը: Մարդը քարին որոշակի տեսք և ձև էր տալիս՝ վերածելով այն աշխատանքային գործիքի: Քարե գործիքները սկզբում կիսամշակ էին և քիչ էին տարբերվում բնական քարից: Բայց մարդը զարգանալով՝ կատարելագործեց քարի մշակումը: Աշխատանքային գործիքների կատարելագործումը նպաստում էր սննդի հայթայթմանը:

**նկ. Նախնադարյան մարդու գործիքներ**

***Կրակի հայտնագործումը:*** Մարդը սկզբում օգտվում էր բնական կրակից, որը կարող էր առաջանալ կայծակից, հրաբուխներից կամ հրդեհներից: Հետագայում մարդն կրակ սկսեց ստանալ արհեստական եղանակով:

Ամենայն հավանականությամբ մարդը կրակ ստացավ փայտը փայտին շփելու միջոցով: Հայտնագործելով կրակը՝ մարդը կարողացավ ոչ միայն պաշտպանվել վայրի գազաններից, տաքանալ ցրտից, այլև խորովեց կենդանու միսը: Արդյունքում ունեցավ ավել համեղ և հեշտ մարսվող կերակուր: Կրակը հնարավորություն տվեց, որ մարդը բնակություն հաստատի երկրագնդի համեմատաբար ցուրտ կլիմա ունեցող տարածքներում: Միևնույն տեղում նա ստիպված էր երկար բնակվել, որովհետև կրակը տեղից տեղ փոխադրելը բավականին դժվար էր:

Նախնադարյան հասարակության դարաշրջանը գիտնականները բաժանում են մի քանի շրջանների՝ հիմք ընդունելով թե հնագույն մարդկանց աշխատանքային գործիքների հիմնական տեսակները ինչ հումքից էին պատրաստվում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Երբ և որտեղ են ապրել հնագույն մարդիկ:**
2. **Ինչպես են անվանել գիտնականները Հայկական լեռնաշխարհի հնագույն մարդկանց օրրանը:**
3. **Ինչպես են կոչվում հնագույն մարդկանց խմբերը:**
4. **Ի՞նչ գործիքներ են օգտագործել հնագույն մարդիկ:**
5. **Ինչպես էին որս անում հնագույն մարդիկ:**

**Քննարկման հարց**

**Ի՞նչ դեր ունեցավ կրակը մարդկանց կյանքում:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

- **Նախամարդ • Նախնադարյան հասարակություն • Մարդկային հոտ • «Հայկական միջանցք» •**

## *2. ՔԱՐԻ ԴԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ*

***Հին քարի դար (պալեոլիթ):*** Մարդկային հասարակության ամենավաղ շրջանը անվանում են հին քարի դար, քանի որ աշխատանքային գործիքների հիմնական մասը պատրաստում էին քարից՝ վանակատ (օբսիդիան), կայծքար և այլն: Անկասկած գործիքների մի մասը պատրաստել են նաև փայտից և ոսկրից: Բայց դրանք ժամանակի ընթացքում ոչնչացել են ու մեզ չեն հասել:

Քարի դարը տևել է 100 հազարավոր տարիներ: Այն բաժանվում է երեք շրջանի՝ Հին քարի դար (պալեոլիթ), Միջին քարի դար (մեզոլիթ), Նոր քարի դար (նեոլիթ):

Հին քարի դարն ավարտվել է մեզանից 14.000 տարի առաջ: Հայաստանի տարածքում նշանավոր են Արագածի լանջին գտնվող Արտին լեռան (Թալինի տարածաշրջան), Արզնիի (Կոտայքի մարզ), Արցախի հնավայրերը: Այստեղ հայտնաբերվել են մեծ քանակությամբ աշխատանքային քարե գործիքներ: Դրանք ունեն 800-900 հազար տարվա հնություն:

**նկ. Հին քարեդարյան ձեռքի հատիչներ**

Հին քարի դարի ժամանակ երկրագնդի կլիման հաճախակի ցրտում էր և այդ պատճառով նախամարդիկ հիմնականում բնակվում էին բնական քարայրներում: Նրանք ապրում էին համեմատաբար փոքր խմբերով՝ մարդկային հոտերով: Նախամարդիկ միասին աշխատելով և ապրելով՝ ապահովում էին իրենց սնունդը և պաշտպանվում վայրի գազաններից: Համատեղ աշխատանքը հեշտացնում էր նաև սննդի ձեռք բերումը: Մարդկային այդ հոտերը՝ խմբերը,

հիմնականում զբաղվում էին հավաքչությամբ, մանր կենդանիների, թռչունների և սողունների որսով:

Հին քարի դարի մարդը՝ հմտանալով որսորդության մեջ, սկսեց որսալ նաև խոշոր կենդանիներ՝ մամոնտ, եղջերու, ցուլ, վայրի ձի: Գետերի և լճերի ափերին մարդիկ զբաղվում էին ձկնորսությամբ:

Նախամարդու հիմնական աշխատանքային գործիքը կոպիտ քարե ձեռքի հատիչն էր և սրածայր փայտը՝ հողից ուտելի արմատներ հանելու համար: Ժամանակի ընթացքում, թեև դանդաղ, սկսեցին պատրաստել բազմատեսակ գործիքներ և զենքեր: Դրանցով հնարավոր էր քերել, կտրել, տաշել, ծակել և այլ գործողություններ կատարել:

Շուրջ 40 հազար տարի առաջ նախամարդն իր արտաքինով նմանվեց ժամանակակից մարդուն՝ մեզ: Նա ուներ արդեն զարգացած ուղեղ և ձեռք էր բերել խոսելու կարողություն: Նրան գիտնականները անվանում են **բանական մարդ:**

***Միջին քարի դար*:** Մարդկային հասարակությունը շատ ավելի արագ սկսեց զարգանալ Միջին քարի դարի (մեզոլիթ) և Նոր քարի դարի (նեոլիթ) շրջաններում:

Միջին քարի դարը Հայկական լեռնաշխարհում տևել է Ք. ա. XII-ից մինչև XI հազարամյակը: Հնագիտական պեղումները հավաստում են, որ մարդն արդեն հայտնաբերել էր նետն ու աղեղը: Դա հեշտացրել էր վայրի կենդանիների որսը: Բնականաբար մեծացավ մարդու սննդի մեջ մսի չափաբաժինը: Իսկ միսը նպաստում էր մարդու ուղեղի զարգացմանը: Այդ ժամանակ ընտելացվել էր նաև շունը՝ որսորդի հավատարիմ օգնականը:

**նկ. Նոր քարի դարի կոթող Արևմտյան Հայաստանում**

Միջին քարի դարի մարդը հավաքչությունից անցում է կատարում պարզունակ բրիչային հողագործության: Դա նպաստեց մարդու բուսական, հատկապես հացահատիկային սննդի պաշարների մեծացմանը: Որսորդությունից անցում կատարվեց վայրի կենդանիների ընտելացմանը, ինչն էլ նպաստեց անասնապահության առաջացմանը: Վերջինս նպաստում էր սննդի կայուն պաշարների ավելացմանը՝ միս, կաթ, անասնապահական մթերքներ, բուրդ, կաշի և այլն: Խիստ մեծացավ տղամարդու դերը՝ կապված որսորդության, ձկնորսության և անասնապահության զարգացման հետ: Կանայք նախկինի պես զբաղվում էին հավաքչությամբ, բրիչային հողագործությամբ և երեխաների դաստիարակությամբ:

Այդ բոլորի արդյունքում աճեց բնակչության քանակը: Մարդկային հոտը, որ բազմանալով բաժանվում էր երկու և ավելի մարդկային հոտերի, մարդկային հասարակության զարգացման հետևանքով սկսեց բաժանվել մոր գծով արյունակից հարազատների խմբերի: Դրանք կոչվում էին տոհմեր կամ տոհմային համայնքներ: Տոհմերը նոր հողեր մշակելու, ձկնառատ և որսի կենդանիներով հարուստ տարածքներ յուրացնելու համար ՝բաժանվելով տեղափոխվում էին նոր տարածքներ: Ազգակից տոհմերը միասին կազմում էին ավելի խոշոր միավորում՝ ցեղ:

***Նոր քարի դար* (նեոլիթ):** Այն թվագրվում է Ք. ա. X հազարամյակից մինչև VII հազարամյակը: Այս դարաշրջանում մարդը քարի մշակման տեխնիկան առավել կատարելագործում է, գործիքները կարողանում է հղկել, փայլեցնել, ծակել: Հայտնագործվեց քարե կացինը, որով հեշտանում էր ծառեր կտրելը, փայտ մշակելը, սայլերի ու փոխադրամիջոցների կատարելագործումը: Ծառերի հաստ բնից փորում էին փոքր նավակներ, պատրաստում թիեր, տնային անհրաժեշտ իրեր, հացահատիկի մշակման համար անհրաժեշտ փայտե գործիքներ և առարկաներ:

**նկ. Սրբատեղի Արևմտյան Հայաստանում (Նոր քարի դար)**

Ի հայտ են գալիս մշտական կացարանները,ծնունդ են առնում ընդարձակ և բազմամարդ բնակավայրեր: Մարդը հայտնագործում է կավից ամաններ պատրաստելու տեխնիկան: Կավե ամանները կրակի վրա թրծելուց հետո կարելի էր դրանք երկար ժամանակ օգտագործել: Մարդը կարող էր արդեն կերակուրը եփել, որը դառնում էր հեշտ մարսելի: Բացի այդ կարելի էր կենդանիների կաթը հավաքել, վերամշակել և դրանով հարստացնել սննդի պաշարը:

Փաստորեն, մարդը նոր քարի դարում ոչ միայն օգտագործում էր բնության պատրաստի բարիքները, այլև նպաստում էր դրանց բազմացմանը՝ բրիչային հողագործությամբ և անասնապահությամբ:

Բերրի հողերը և արոտավայրերը նպաստեցին մարդկային տոհմերի զանգվածային անցմանը նստակեցության: Իսկ այն տոհմերն ու ցեղերը, որոնք զբաղվում էին որսորդությամբ, համատեղում էին իրենց սեզոնային զբաղմունքը և հաճախ տեղափոխվում էին տեղից տեղ՝ հիմնելով նոր բնակատեղիներ:

## 3. *ՊՂՆՁԱՔԱՐԻ (ԷՆԵՈԼԻԹ) ԵՎ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ*

***Պղնձաքարի դարաշրջան*** **(էնեոլիթ):** Ք. ա. VI հազարամյակից սկսվում է պղնձաքարի ժամանակաշրջանը: Հայկական լեռնաշխարհը հարուստ է բազմապիսի մետաղական հանքերով: Տեղաբնիկները շատ վաղուց ծանոթ են եղել ոսկուն, արծաթին, պղնձին: Պղնձի մշակության հայտնագործումը մեծ իրադարձություն էր մարդկային հասարակության կյանքում: Պղինձը հեշտ էր մշակվում, բայց փափուկ էր: Դրա համար պղնձե գործիքները չկարողացան գործածությունից դուրս մղել քարե գործիքները: Ուստի ըստ անհրաժեշտության օգտագործում էին թե՛ քարը, թե՛ պղինձը:

Պղնձաքարի դարաշրջանում, որն ավարտվեց Ք. ա IV հազարամյակի կեսերին, աշխատանքային գործիքների տեսականին առավել մեծացավ ու որակը բարձրացավ: Դա նպաստեց մի քանի արհեստների առաջացմանը: Ընտելացվեցին մանր — խոշոր եղջերավոր կենդանիները: Որպես քաշող ուժ սկսեցին օգտագործել լծկան կենդանիներ՝ եզներ, ձիեր, ավանակներ, ջորիներ: Լուրջ զարգացում ապրեց կավագործությունը, ջուլհակությունը, կաշվի — կաթի մշակումը:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչպե՞ս է կոչվում մարդկության պատմության հնագույն շրջանը:**
2. **Ինչպե՞ս է պարբերացվում քարի դարը:**
3. **Ի՞նչ զարգացումներ ունեցավ մարդկային հոտը:**
4. **Ո՞ր մետաղներն են ծանոթ եղել Հայկական լեռնաշխարհում ապրող մարդկանց:**

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Տետրերում գծե՛ք աղյուսակ և լրացրե՛ք այն.**

| Դարաշրջանը | Դարաշրջանի տևողությունը և առանձնահատկությունները |
|---|---|
| | |
| | |
| | |

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Քարի դար • Հին քարի դար կամ հնաքար (պալեոլիթ) • Վանակատ •**
**• Որձաքար • Կայծքար • Արտին լեռ • Արզնի • Ազոխի քարայր • Հատիչ •**
**• Բանական մարդ • Միջնաքար կամ մեզոլիթ • Տոհմ • Ցեղ •**
**• Նորաքար կամ նեոլիթ • Պղնձաքարի դար կամ էնեոլիթ •**

**Բրոնզի դարը Հայկական լեռնաշխարհում:** Պղնձաքարի դարաշրջանին հաջորդում է բրոնզի դարը: Այն Հայաստանում տևել է Ք. ա. IV հազարամյակի կեսից մինչև II հազարամյակի կեսը: Մաքուր պղինձն իր փափկության պատճառով գործածության ավելի փոքր շրջանակներ ուներ: Մարդը պղնձի և անագի կամ կապարի խառնուրդից ստանում է մի այլ մետաղ՝ բրոնզ, որը շատ ավելի ամուր էր քան պղինձը և հեշտ մշակելի: Սկսեցին գործիքները պատրաստել բրոնզից, ինչը զարկ տվեց արհեստների զարգացմանը և մասնագիտացմանը: Մեծ հաջողությունների հասավ մետաղների մշակումը:

Հայկական լեռնաշխարհում լայնորեն շահագործում են պղնձի, անագի, կապարի, ոսկու ու արծաթի հանքերը: Շատ հարուստ ու լավ պահպանված իրեր են գտնվել Մեծամորի, Լճաշենի, Շիրակի, Լոռու շրջանների բրոնզեդարյան դամբարանների պեղումներից: Դրանք կացիններ, մանգաղներ, դանակներ, զենքեր և տնտեսության մեջ օգտագործվող տարբեր բնույթի առարկաներ են: Դրանց թվում շատ կան ոսկուց, արծաթից և բրոնզից պատրաստված զարդարանքի առարկաներ, գեղարվեստական իրեր և արձանիկներ: Բրոնզի հայտնագործումով մեծ զարգացում ապրեց հատկապես զենքերի պատրաստումը: Հայկական լեռնաշխարհը դարձավ մետաղամշակության կարևոր կենտրոն:

Բրոնզե գործիքների հանդես գալը նպաստում է բերքատվության բարձրացմանը, տնտեսության բոլոր ճյուղերի արագ զարգացմանը: Զգալի զարգացում է ապրում հողագործությունը: Ընդարձակվում են մշակովի հողերը, հատկապես հացահատիկային ցանքստարածքները, բարելավվում են աշխատանքային գործիքները: Մշակում են գարի, ցորեն, կորեկ, հաճար: Հիմնում են պտղատու այգիներ, մասնավորապես՝ խաղողանոցներ: Մեր երկիրը իրավամբ համարվում է խաղողի մշակության հնագույն վայրերից մեկը:

Հողագործության արդյունավետ զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ հողը վարելու արորի հայտնագործումը, որի համար օգնագործում էին լծկան կենդանիների ուժը: Դրանով ընդարձակվում են հերկովի տարածքները: Նախկին բրիչային հողագործությունը փոխարինվում է արորայինով: Ընդարձակվում է ոռոգման ցանցը: Ամենուրեք անցկացվում են առուներ դաշտերի ոռոգման համար: Չորացվում են ճահիճները: Սկսում են պարարտացնել հողը՝ առատ բերք ստանալու նպատակով: Կարևոր դեր ունեցավ վայրի ձիու ընտելացումը: Ձին սկսեցին օգտագործել թե՛ տնտեսության մեջ և թե՛ պատերազմական գործում:

**նկ. Բրոնզեդարյան խեցեղեն**

Անասնապահության և հողագործության զարգացման ու ընդարձակման շնորհիվ Հայաստանի լեռնային շրջաններում ապրող տոհմերն ու ցեղերն առավելապես սկսում են զբաղվել անասնապահությամբ, իսկ դաշտավայրերում ու բերրի տարածքներում բնակվողները՝ երկրագործությամբ՝ մասնագիտանալով յուրաքանչյուրը իր բնագավառում:

**նկ. Զորաց քարերի համալիրը Սիսիանում**

Զգալի զարգացում են ապրում կավագործությունը, կտավագործությունը, կաշեգործությունը, փայտամշակությունը, քարագործությունը: Ավելանում է այդ արհեստների արտադրանքը:

Բրոնզի դարում աշխուժանում է ապրանքափոխանակությունը ինչպես հարևան տոհմերի ու ցեղերի, այնպես և հեռու երկրների միջև: Յուրաքանչյուրը առաջարկում էր այն, ինչից հարուստ էր, և ձեռք էր բերում՝ ինչի կարիքը զգում էր: Դա իր հերթին նպաստեց փոխադրամիջոցների ու ճանապարհների զարգացմանը:

## *4. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ*

Նախնադարում մարդիկ ապրում էին իրար հավասար: Գոյություն չունեին հարուստներ և աղքատներ: Հնում առանձին անհատը չէր կարող իր գոյությունը պահպանել մենակ: Դրա համար ապրում էին խմբերով, աշխատում էին բոլորը միասին և ձեռք բերված բարիքները օգտագործում էին հավասարապես:

**նկ. Զորաց քարերի համալիրը Սիսիանում**

Սակայն աշխատանքային գործիքների կատարելագործումը նպաստեց արտադրողականության բարձրացմանը և մարդն սկսեց արտադրել ավելին, քան պետք էր իր գոյությունը պահպանելու համար: Առաջացավ մթերքների ավելցուկ: Հասարակության հետագա զարգացման շնորհիվ նախկին համայնքն սկսեց բաժանվել խոշոր ընտանիքների կամ գերդաստանների, որտեղ համատեղ ապրում և աշխատու էին մի քանի արյունակից սերունդներ: Ընտանիքներն ունեին իրենց սեփական տնտեսությունը: Այլևս վերացավ ողջ տոհմի անդամների համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը: Հետևաբար ստացված բերքը դառնում էր տվյալ ընտանիքի սեփականությունը: Բարձրանում է շահագրգռվածությունն ավելի շատ արտադրելու համար, մեծանում է ընտանիքների միջև մրցակցությունը: Ինչպես և պետք էր սպասել, դա հանգեցրեց բնակչության մի մասի հարստացմանը և մյուսների աղքատացմանը: Նախնադարի հավասարների հասարակությունը շերտավորվեց: Առաջացան հարուստներ և աղքատներ: Աստիճանաբար հարստացան հատկապես տոհմացեղային ավագանին, ռազմական և կրոնական առաջնորդները, հեքիմներն ու կախարդները: Նրանք ձեռք բերեցին լավագույն ու բերրի հողերը, անասունների հոտերը, որսատեղիները, ձկնառատ գետերն ու լճերը, մետաղների հանքերը:

**նկ. Միջին բրոնզեդարյան խեցեղեն**

Արդյունքում նրանց հաջողվեց կուտակել հսկայական հարստություն: Այդ են հավաստում տոհմացեղային ավագանու ու ռազմական առաջնորդների դամբարանների պեղումները, որոնք աչքի են ընկնում իրենց հարստությամբ: Հնում մահացողի հետ դնում էին բազմաթիվ իրեր, նույնիսկ ձիեր, մարտակառքեր, սայլեր, ստրուկներ ու ծառաներ, որոնք իբր անհարժեշտ էին նրան հանդերձյալ կյանքում: Այս ամեն, որ գտնվել է Լոռու, Շիրակի, Լճաշենի, Աշտարակի և այլ դամբարանների պեղումների ժամանակ, կարելի է տեսնել պատմության թանգարանում: Ի հակադրություն սրա՝ տոհմի և ցեղի հասարակ անդամների դամբարանները պարունակում են մի քանի կավե ամաններ, դանակի շեղբեր, հասարակ զարդեր:

Արոտավայրերի, անասունների, գույքի ու սննդամթերքի կողոպուտի համար մղվող միջցեղային կռիվներն ու ընդհարումներն այս շրջանում սովորական երևույթ են դառնում: Դա հեշտ ճանապարհով հարստություն դիզելու միջոց էր: Սկզբում այդ կռիվներին մասնակցում էին տոհմի կամ ցեղի բոլոր չափահաս տղամարդիկ: Հետագայում պատերազմը, թալանը և կողոպուտը նրանց մի մասի համար դարձավ միակ զբաղմունքը: Առաջացան կռվող ռազմիկների խմբերն իրենց առաջնորդով:

Արտաքին թշնամիների դեմ համատեղ պաշտպանվելու անհրաժեշտությունն ստիպում է Հայկական լեռնաշխարհի տոհմերին և ցեղերին միավորվելու ռազմականապես ավելի ուժեղ ցեղային միությունների մեջ: Արյունալի և հաճախակի կրկնվող կողոպուտը, մարդկանց ստրկացումը ստիպում էին Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին ոչ միայն միավորվելու, այլև կառուցելու պարսպապատ ամրություններ՝ ամրոցներ: Այդ ամրոցները կառուցվում էին մեծ քարերով և ստացել են Կիկլոպյան անունը, իբրև թե հսկաներն են դրանք կառուցել: Նման բազմաթիվ ամրոցներ կան Սևանի ավազանում, Սյունիքում, Շիրակում և այլուր:

Հայկական լեռնաշխարհում բրոնզի դարի վերջում կազմավորվում են առաջին պետական կազմավոևումները: Դրանք ավագանու և հարուստների ձեռքում վերածվում են բռնության և շահագործման միջոցի: Ստեղծվում են կառավարման առաջին մարմինները և հարկադրանքի միջոցները՝ բանտը, դատարանը, բանակը: Տոհմացեղային ավագանին, ռազմական և կրոնական առաջնորդները իրենց ձեռքը վերցրին կառավարման մարմինները: Առաջնորդների իշխանությունն սկզբում սահմանափակվում էր ավագների խորհուրդով, ընդհանուր ժողովներով:

Աստիճանաբար նրանց իշխանությունը դառնում է գրեթե բացարձակ, անսահմանափակ: Նրանց հրամանները ստանում են օրենքի ուժ: Չենթարկվողներին մահ կամ այլ պատիժ էր սպառնում:

Այսպիսով, նախնադարի հասարակությունը Հայկական լեռնաշխարհում թևակոխում է պետությունների առաջացման փուլը, այսինքն քայքայվում է նախնադարյան հավասարների հասարակությունը: Ձևավորվում են առաջին պետությունները: Դրան առավել նպաստեց Ք.ա. II հազարամյակի կեսին երկաթի հայտնագործումը և դրա լայնորեն կիրառումը աշխատանքային գործիքների, պատերազմի զենքերի պատրաստման ու որսորդության մեջ:

***Երկաթի հայտնագործումը:*** Երկաթի հանքերը բնության մեջ շատ ավելին են, քան պղնձինը՝ հատկապես Հայաստանում: Բայց երկաթը հանքաքարից ստանալու համար անհրաժեշտ էր շատ ավելի մեծ ջերմաստիճանի կրակ, ինչը մարդուն երկար ժամանակ չէր հաջողվում ստանալ: Երբ մարդը կարողացավ երկաթ ձուլել, հասարակությունն ստացավ երկաթե գործիքներ և զենք պատրաստելու էժան հումք: Երկաթն ավելի ամուր էր, քան բրոնզը:

Երկաթի որպես հումքի լայնորեն օգտագործումը մարդկային հասարակության մեջ հեղաշրջիչ նշանակություն ունեցավ:Էլ ավելի զարգացան արհեստները, ընդլայնվեց ու մեծացավ առևտուրը:

Նախնադարյան համայնական կարգերն սկսեցին արագորեն քայքայվել և: առաջացան առաջին խոշոր պետությունները:

***Պաշտամունքը և կրոնը:*** Նախամարդը ոչ մի պատկերացում չուներ պաշտամունքի մասին: Միայն այն ժամանակ, երբ առաջացավ բանական մարդը, նա փորձեց իմանալ՝ ինչու է անձրև գալիս, կայծակ խփում, հրաբուխ ժայթքում կամ ովքեր են իր նախնիները: Դրանց պատասխանը չգտնելով՝ այն վերագրեց նախնիներին, կուռքերին, չար ու բարի ոգիներին: Տոհմերը սովորաբար կարծում էին, թե իրենք առաջացել են որևէ կենդանուց, բույսից կամ առարկայից: Հաճախ իրենց տոհմերը կոչում էին դրանց անուններով (արծվի, աղավնու, արջի, ցուլի, կաղնու կամ օձի) տոհմեր: Չհասկանալով բնության մեջ տեղի ունեցող բնական երևույթները (ձյուն, անձրև, կարկուտ, կայծակ, հեղեղ)՝ մարդն սկսեց պաշտել դրանք: Օրինակ ջրի պաշտանմունքին էին նվիրված ձկնակերպ քարե կուռքերը, որոնց մեր ժողովուրդը կոչում է ***վիշապներ:***

**նկ. Վիշապաքար (Գեղամա լեռներ)**

Բնության զարթոնքը, ծառերի ծաղկումը, մահը, հիվանդությունը վերագրում էին բարի և չար ոգիներին: Զոհեր էին մատուցում նրանց՝ խնդրելով խնայել ու բարյացվակամ լինել իրենց նկատմամբ: Նախնադարի մարդը կարծում էր, որ մահացածների հոգիները միշտ հետևում են իրենց, հաջողություն կամ անհաջողություն բերում: Դրա համար նրանց զոհեր էին մատուցում, որ բարյացակամ լինեն, չպատժեն, չանիծեն:

Աստիճանաբար ձևավորվում է կրոնը: Առաջանում են սիրո, պտղաբերության, որսորդության, անասնապահության և այլ աստվածություններ:

**նկ. Մեծամորի աստղադիտարանը**

Նախնադարյան հասարակության մարդու հավատալիքներն իրենց պատկերումը գտան նոր ձևավորվող արվեստի մեջ: Մեզ են հասել քարից ու կավից, մետաղներից ու ոսկրից պատրաստված մեծ ու փոքր արձաններ և ժայռերին փորագրված ժայռապատկերներ: Հատկապես մեծ արվեստով են արված Սյունիքի և Գեղամա լեռների ժայռապատկերները: Դրանք պատկերում են մարդկանց, կենդանիների, որսի, պաշտամունքային ծիսական շուրջպարերի ու աշխատանքի տեսարաններ:

Ուսումնասիրությունները պարզել են, որ հնում մարդիկ լավ գիտեին իրենց շրջապատող աշխարհը, կենդանիների վարքը, բուսական աշխարհը, օրվա և տարվա տևողությունն ու եղանակները, թռչունների ձվադրման շրջանը և այլն:

**նկ. Վաղ բրոնզեդարյան խեցեղեն**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչպե՞ս հանդես եկան գերդաստանները:**
2. **Որտե՞ղ ձևավորվեցին առաջին պետական կազմավորումները և պետությունները:**
3. **Ի՞նչ հեղաշրջիչ դեր ունեցավ բրոնզի և երկաթի գյուտը:**
4. **Ինչպե՞ս էր բացատրում մարդը բնության անհասկանալի երևույթները:**
5. **Երբվանի՞ց Հայկական լեռնաշխարհի բնակչությունը պատկերացում կազմեց արեգակնային տարվա մասին:**

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Ի՞նչ դեր ունեցավ պաշտամունքի առաջացումը:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Հին Արևելք • Հին Եգիպտոս • Շումեր • Աքքադ • Նեղոս •**
**• Բրոնզի դարաշրջան • Արոր • Երկաթի դար •**

**2-րդ թեմայի ամփոփում**

1. Հայկական լեռնաշխարհը հանդիսանում է նախնադարյան մարդու հնագույն օրրաններից մեկը: Համաձայն ընդունված պարբերացման, նախնադարյան մարդկային հասարակության պատմությունը բաժանվում է ներքոհիշյալ դարաշրջանների՝ քարի դար, որն իր հերթին բաժանվում է հնաքարի (պալեոլիթ), միջնաքարի (մեզոլիթ) և նորաքարի (նեոլիթ), պղնձաքարի (էնեոլիթ) դար, բրոնզի դար և երկաթի դար:
2. Մասնավոր սեփականության առաջացմամբ ծնունդ է առնում գույքային անհավասարություն, որի արդյունքում ցեղային ավագանին արագ հարստացավ՝ իր ձեռքում կուտակելով մշակելի հողատարածքների նշանակալից մասը, անասունների շատ հոտեր և այլևայլ հարստություններ: Հանդես են գալիս առաջին զինված ջոկատները, ցեղային միությունները, առաջին պետական կազմավորումները և պետությունները:
3. Չկարողանալով բացատրել բնության երևույթները և զգալով իր անզորությունը դրանց նկատմամբ՝ նախամարդը դրանց գերբնական ծագում էր վերագրում և փորձում զոհաբերությունների միջոցով ձեռք բերել դրանց բարյացակամությունը: Օրավուր կուտակվող հավատալիքների հիմքի վրա առաջացավ կրոնը:

## ԹԵՄԱ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

### *1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ*

***Հնդեվրոպական նախահայրենիքը:*** Հայ ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում: Ք.ա. III հազարամյակում և II հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում ապրում էին տասնյակ և հարյուրավոր ցեղեր: Նրանց մեծագույն մասը պատկանում էր հնդեվրոպական լեզվաընտանիքին: Սկզբնապես հնդեվրոպացիների նախահայրենիքն ընդգրկել է Փոքր Ասիայի արևելյան հատվածը, Հայկական լեռնաշխարհը և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները:

**նկ. Արծաթյա թաս պատկերներով Քարաշամբից (Ք.ա.XXII-XXI)**

Հիշյալ տարածքներում, բացի հայերի նախնիներից, ապրել են նաև գերմանացիների, հույների, ռուսների, հնդիրանական և այլ հնդեվրոպական ժողովուրդների նախնիները: Նրանց լեզուների ամբողջությունը կազմում է հնդեվրոպական լեզվաընտանիքը, քանի որ դրան պատ-

կանող ժողովուրդները բնակեցնում են Հնդկաստանից մինչև Եվրոպայի արևմուտքը ձգվող երկրների գրեթե ամբողջ տարածքը: Հնդեվրոպական լեզուներով խոսող շատ ցեղերը ժամանակին իրենց նախահայրենիքից շարժվել են դեպի իրենց ապագա հայրենիքները: Այնտեղ բնակվող ցեղերից ավելի ուժեղ, կենսունակ և կազմակերպված լինելով՝ նրանք տեղացիներին են փոխանցել իրենց լեզուները և՝ձուլելով նրանց,կազմել են տարբեր ժողովուրդներ:

Հայերը, փաստորեն, միակ հնդեվրոպական ժողովուրդն են, որը ձևավորվեց հնդեվրոպական նախահայրենիքում և հասավ XXI դար: Հետևաբար հայերը Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ժողովուրդ են:

***Հայ ժողովրդի կազմավորման մասին ավանդազրույցները:*** Հայ ժողովուրդը պատկանում է աշխարհի հնագույն ժողովուրդների թվին, որոնց կազմավորման գործընթացների մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Այդ պատճառով պատմաբանները ստիպված են դիմել ժողովրդական ավանդազրույցներին, որոնք թվով երեքն են. Հայկի և Բելի պատմությունը, հունական և վրացական ավանդապատումները:

**նկ. Հայկի արձանը**

Դրանց մեջ ժամանակագրական առումով առավել հինը հունականն է, որը գրի է առել և սերունդներին թողել հույն աշխարհագետ Ստրաբոնը: Հունական ավանդազրույցը, որի ակունքները, անշուշտ,նույնպես հայկական են, հարմարեցված է հունա-մակեդոնական քաղաքական շահերին: Պատմվում է այն մասին, թե ինչպես արգոնավորդ Յասոնի հետ Կողքիս (Կոլխիդա) եկած Արմենոսը, որ Հունաստանի Թեսալիա երկրամասից էր՝ Արմենիոն քաղաքից, չի վերադառնում Հունաստան: Նա՝ իջնելով հարավ, իր ուղեկիցների հետ հաստատվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում՝ տարածվելով անգամ մինչև Հյուսիսային Միջագետք: Ավանդազրույցի համաձայն երկիրը Արմենոսի անունից ստանում է Արմենիա անվանումը:

Հայկի և Բելի պատմությունից, որ մեզ է հասել Մովսես Խորենացու (V դարի պատմիչ) և Սեբեոսի (VII դարի պատմիչ) աշխատությունների միջոցով, պարզ է դառնում, որ հայկական և հունական ավանդապատումները ոչ թե իրար հակասում են, այլ լրացնում: Հայկական ավանդապատումը ծագում է հեթանոսական անհիշելի ժամանակներից: Հետագայում քրիստոնյա հայ պատմիչների կողմից այն հարմարեցվել է քրիստոնեական աշխարհընկալմանը: Ասվում է, որ հայերի նախնի Հայկը չի կամենում ճանաչել բռնակալ Բելի իշխանությունը: Բաբելոնում անհաջող աշտարակաշինությունից հետո, իր ամբողջ գերդաստանով և միացած մարդկանցով ու ստրուկներով, թվով 300 հոգի, չվում է դեպի Արարադի երկիրը: Հաստատվում է մի լեռան ստորոտում գտնվող դաշտավայրում: Հնազանդեցնելով տեղի սակավաթիվ բնակիչներին և երկիրը հանձնելով իր թոռ Կադմոսին՝ նա շարժվում է հյուսիս-արևմուտք և բնակություն հաստատում Հարքի դաշտավայրում: Բելը փորձում է խաղաղ միջոցներով իրեն ենթարկել Հայկին, սակայն, հաջողության չհասնելով, որոշում է ուժով հպատակեցնել Հայկին և Հայկյաններին:

Իմանալով Բելի հարձակման մասին՝ Հայկը շարժվում է նրան ընդառաջ և ճակատամարտ տալիս նրա զորքերին Վանա լճից արևելք՝ Հայոց ձորում: Հայկի և Հայկյանների կատաղի դիմադրությունից զարհուրած Բելը փորձում է նահանջել դեպի թիկունքում գտնվող բլուրը և սպասել իր հիմնական զորքերի գալստյանը: Սակայն աղեղնավոր Հայկը, կռահելով այդ, առաջ է շարժվում և նետով խոցում Բելի զրահապատ կուրծքը: Բելը տապալվում է և հոգին փչում, իսկ նրա զորքը ցրվում է: Հայկը հաղթանակի վայրում դաստակերտ է շինում՝ անվանելով Հայք, իսկ երկիրն էլ Հայկի անունով կոչվում է Հայք: Հայկի մահից հետո Արամանյակը, շարժվելով հյուսիս, հաստատվում է Այրարատյան դաշտում, իսկ նրա որդի Արամայիսը հիմնադրում է Արմավիրը:

Նրա հաջորդներից էր Արա Գեղեցիկը, որի անունով էլ Արագած և Մասիս լեռների միջև ընկած դաշտը ստանում է Այրարատ անունը:

Ավանդության շարունակությունից պարզվում է, որ Հայկի սերնդից էր Արամը, որն ընդարձակում է Հայաստանը բոլոր ուղղություններով, և նրա սխրագործությունների պատճառով օտարները Հայաստանը կոչում են Արամի անունով Արմենիա, իսկ հայերին՝ արմնիկ (իմացի՛ր արմանիկ):

Վրացական ավանդապատումի համաձայն՝ Հայկը և նրա եղբայրներ Քարթլոսը, Եգերոսը, Հերոսը և մյուսները եղել են Թարգամոսի (Թորգոմի) որդիները: Կովկասի ժողովուրդների նախահայր Թորգոմն իր որդիներով և ամբողջ ժողովրդով Բաբելոնից գալիս է և հաստատվում Մասիս և Արագած լեռների միջև փռված դաշտում: Շուտով Թորգոմի ժողովուրդը բազմանում է, և նրա որդիները տարածվում են ու ընդարձակում իրենց բնակության սահմանները մինչև Կովկասյան լեռները և դրանից հյուսիս: Հոր մահից հետո անդրանիկ որդի Հայկն իր եղբայրների հետ ապստամբում է աշխարհի առաջին բռնակալ Նեբրովթի (Բելի) դեմ և մարտում սպանում նրան: Դրանից հետո Հայկի եղբայրները շարժվում են իրենց երկրները և ապրում փոխադարձ սիրո մեջ:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Որտե՞ղ է գտնվել հնդեվրոպական նախահայրենիքը:**
2. **Ո՞ր ժողովուրդն է, որ չի հեռացել հնդեվրոպական նախահայրենիքից:**
3. **Ի՞նչ ավանդազրույցներ գիտեք հայ ժողովրդի մասին:**

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Տետրում գծե՛ք աղյուսակ և լրացրե՛ք այն՝ մի կողմում գրելով Հայկի սերնդի անունները, մյուս կողմում՝ դրանցից առաջացած տեղանունները:**

| Անուն | Տեղանուն |
|---|---|
| | |
| | |
| | |

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Հնդեվրոպական լեզվաընտանիք • Յասոն • Կողքիս (Կոլխիդա) •**
**• Թեսալիա • Արմենոս • Արմենիա • Քարթլոս • Եգերոս • Հերոս •**
**• Նեբրովթ (Բել) •**

## *2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ*

Հայկական լեռնաշխարհը վաղնջական ժամանակներից բնակեցված է եղել բազմաթիվ ցեղերով, որոնց գերակշիռ մասը հայկական էր: Որոշ գիտնականների կարծիքով՝ Հայկական լեռնաշխարհի առաջին վաղ պետական կազմավորումը կոչվել է Արատտա (Ք.ա. XXVIII-XXVII դդ.): Այն հիշատակվում է որպես բարձր լեռնային երկիր՝ հարուստ մետաղներով և այլ օգտակար հանածոներով, որոնք նշանակալից մասով արտահանվում էին: Երկրի կառավարման գործում առաջնակարգ դեր էին խաղում քրմերը, իսկ արքան միաժամանակ երկրի գլխավոր քուրմն էր:

Փոքր Ասիայի շրջանում բնակվող խեթական ցեղերը Ք.ա. XVIII դարում ստեղծում են ուժեղ Խեթական պետությունը, որը գոյատևեց մինչև Ք.ա. XII դարը: Հայկական լեռնաշխարհի

արևմտյան մի շարք երկրամասեր գրավվեցին խեթերի կողմից և հայտնվեցին նրանց քաղաքական ազդեցության ներքո:

**նկ. Աղեղ և կապարճ Շիրակավանից (Ք.ա.XIV-XII դդ.)**

Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավային մի քանի շրջաններում Ք.ա. XVII դարում ստեղծվում է Միտաննի պետությունը, որը նույնպես նշանակալից ազդեցություն ունեցավ Հայկական լեռնաշխարհի բնակչության զարգացման վրա:

Հայկական ցեղային միություններն ու պետական կազմավորումներն ավելի վաղ հանդես եկան հենց նրանց ազդեցության հիշյալ շրջաններում: Ցավոք, պատմությունը ցեղային միությունների մասին գրեթե տեղեկություններ չի պահպանել, իսկ պետական կազմավորումների մասին տեղեկություններ պահպանել են սեպագիր արձանագրությունները:

***Թորգոմի տուն, Հայասա, Մելիդ, Իսուվա (Ծուփանի):*** Հայկական լեռնաշխարհի ծայր արևմուտքում գտնվել է Թորգոմի տուն կամ Թեգարամա պետական կազմավորումը, որին բախտ էր վիճակված կարևոր դեր խաղալու հայ ժողովրդի կազմավորման գործում: Նրա մասին տեղեկությունները գալիս են դեռևս Ք.ա. II հազարամյակի սկզբներից: Նրանից դեպի հյուսիս-արևելք գտնվում էր Հայասա կամ Հայասա-Ազզի թագավորությունը (Ք.ա. XV-XIII դդ.), որն անմիջականորեն սահմանակցում էր Խեթական պետությանը: Պետական այս կազմավորումը եղել է հայկական իշխանություններից մեկը, որը կարող էր մարտադաշտ դուրս բերել 700 մարտակառք և 10 հազար հետևակ զինվոր: Բնակչությունն զբաղվում էր հիմնականում երկրագործությամբ և խաշնարածությամբ: Սկսել էին զարգանալ արհեստները: Հայասայի կենտրոններից էր Կումախան (հետագայում՝ Անի-Կամախ), որտեղ հետագայում գտնվում էր հայոց թագավորների դամբարանը:

Խեթական թագավորները հաճախ են պատերազմել Հայասայի դեմ, բայց չեն կարողացել վճռական հաղթանակ տանել նրա նկատմամբ: Ք.ա. XIV դարի սկզբներին Հայասան երկու անգամ հարձակման ենթարկվեց խեթերի կողմից, սակայն կարողացավ պահպանել իր անկախությունը:

Թեգարամայից հարավ ընկած էին Մելիդ երկիրը և քաղաքը (ներկայումս՝ Մալաթիա): Սրանց հարևաններն էին հարավից Խաթե երկիրը և արևելքից Իսուվան կամ Ծուփանին (Ծոփքը): Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում էին գտնվում Արմե և Ուրմե նույնպես հայկական իշխանությունները:

**նկ. Բարձրաքանդակ Մալաթիայից (Ք.ա.XII-X դդ.)**

Վանի թագավորության շրջանում (IX-VII դդ.) Այրարատյան դաշտում և նրանից հյուսիս տարածվում էր Էթիունի պետական կազմավորումը, որը ներառում էր նաև Սևանա լճի ավազանը: Միության մեջ մտնում էին ավելի քան քսան ցեղեր, իսկ նրա բնակիչների կենցաղի մասին պատմում են Սևանի ափին՝ Լճաշենում, պեղված դամբարանների հարուստ նյութերը՝ զենք ու զրահ, կենցաղի առարկաներ, արձանիկներ, զարդեր և այլն: Նրա կենտրոնական մասն էր կազմում Ազա երկիրը, որի տարածքի վրա ներկայումս գտնվում է մեր հանրապետության մայրաքաղաք Երևանը:

**նկ. Ռազմիկների կուռքեր**

**նկ. Պատկերազարդ բրոնզեպատ գոտի Լճաշենից (XII-X դդ.)**

***Նաիրի ցեղային միություն:*** Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան շրջաններում առաջին ցեղային միությունները հիշատակվում են սեպագրերում միայն Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսից: Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները՝ Վանա լճի և Եփրատի հովտի միջև, զբաղեցնում էր նաիրի ցեղային միությունը, որի մեջ մտնում էին մի քանի

տասնյակ ցեղեր: Նաիրյան ցեղային միության ուժեղացմանն էապես նպաստեցին ասորեստանյան թագավորների ավերիչ ու ավարառուական արշավանքները: Դրանց դիմադրելու համար Նաիրյան ցեղերը թշնամու դեմ դուրս էին բերում պատկառելի միացյալ ուժեր՝ միավորելով մի քանի տասնյակ ցեղերի զինուժը: Նաիրյան միության բնակչության գերակշիռ մասը կազմում էին հայալեզու ցեղերը:

**նկ. Սայլեր Լճաշենից (Ք.ա. XIV-XIII դդ.)**

Հիշատակության արժանի է Դիաուեխի ցեղային միությունը, որի անունը պահպանվել է հայկական Տայք աշխարհի վրա: Վանա լճից դեպի հարավ ընկած շրջաններում գտնվել է Ուրուատրի ցեղային միությունը, որը միավորում էր 8 ցեղեր:

Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել նաև այլ ցեղային միություններ, որոնց բնակչության մի մասը ոչ հնդեվրոպական էր, որը ժամանակի ընթացքում հայացավ:

Հայ ժողովրդի կազմավորման գործընթացները ուղեկցվում էին Ասորեստանի կողոպտիչ արշավանքներով, որոնք ստիպում էին լեռնաշխարհի բնակչությանը միավորվել և միացյալ հարված հասցնել թշնամուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ո՞րն է մեզ հայտնի առաջին պետական կազմավորումը Հայկական լեռնաշխարհում:**
2. **Ինչո՞վ էր հիմնականում զբաղվում Հայասայի կամ Հայասա-Ազզիի բնակչությունը:**
3. **Ո՞ր պետության արշավանքներին էր ենթարկվում Հայասա երկիրը:**
4. **Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասում է գտնվել Էթիունի պետական կազմավորումը:**
5. **Ինչպե՞ս է կոչվել Վանա լճի և Եփրատի հովտի միջև ընկած հզոր ցեղային միությունը: Քանի՞ ցեղեր էր այն միավորում:**
6. **Ինչի՞ մասին են պատմում Լճաշենի դամբարանների նյութերը:**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հայկական լեռնաշխարհի քարտեզի վրա փորձե՛ք գտնել այնտեղ կազմավորված ցեղային միությունների և պետական կազմավորումների տեղերը:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Արատտա • Խեթական պետություն • Միտաննի • Թորգոմի տուն •**
**• Հայասա-Ազզի • Մելիդ • Իսուվա(Ծուփանի) • Անի-Կամախ • Արմե • Ուրմե • Էթիունի • Ազա • Ուրուատրի •**

## 1. *ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ*

**նկ. Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ(Վ. Սուրենյանց)**

***Արամայիսը և Հայկյանների Այրարատյան թագավորության հիմնադրումը:*** Հայկական լեռնաշխարհի հնագույն միասնական հայկական պետությունը եղել է Այրարատյան թագավորությունը: Տոմարագիտական հաշիվները ցույց են տալիս, որ վաղ համահայկական թագավորությունը ծնունդ է առնում Արամայիսի օրոք Ք.ա. 1032 թ., երբ հիմնադրվում է Արմավիր քաղաքը: Նրա հաջորդների օրոք Հայկյանների թագավորության մեջ են ներառվում Շիրակը և նրա շրջակա գավառները, Գուգարքը կամ նրա մի մասը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը: Հայկյանների վերջին ներկայացուցիչներից էր Արամե-Արամը: Հարկ է նշել, որ Վանի թագավորները երբեք իրենց պետությունը չեն կոչել Ուրարտու, որը հանդիպում է միայն ասորեստանյան թագավորների թողած արձանագրություններում: Ասորեստանցիները հայկական թագավորության անունը Ուրարտու ձևով, որ նույնական է Այրարատին և Աստվածաշնչի Արարատին,

պարզապես տարածեցին Հայկական լեռնաշխարհում նոր ծնունդ առած Վանի թագավորության վրա: Հայկյանների շնորհիվ կազմավորված ժողովուրդն իրեն կոչում էր հայ կամ Թորգոմի ազգ, իսկ երկիրը՝ Թորգոմի տուն, ինչը հավաստում են հայ պատմիչները: Երբ Վանի թագավորության անկումից հետո Հայկյանները վերականգնեցին իրենց իշխանությունը, պետությունը կոչվեց նախկինի պես Այրարատյան թագավորություն կամ Թորգոմի տուն, որն Աստվածաշնչում հիշատակվում է Թոգարմա ձևով: Այն արդեն կազմավորված հայ ժողովրդի հայրենիքն էր, որի զինված ուժերով, ըստ Աստվածաշնչի, հրեա մարգարեները սպառնում էին իրենց թշնամիներին:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ե՞րբ է հանդես եկել առաջին համահայկական թագավորությունը Հայկական լեռնաշխարհում և ինչպե՞ս է այն կոչվել:**
2. **Ո՞վ է կառուցել Արմավիր քաղաքը:**
3. **Ինչպե՞ս է ծագում Հայաստանին տրված Ուրարտու անվանումը:**

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հայկական լեռնաշխարհի քարտեզի վրա փորձե՛ք գտնել այնտեղ կազմավորված ցեղային միություն-ների և պետական կազմավորումների տեղերը:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Այրարատյան թագավորություն • Արամե-Արամ • Արմավիր •**
**• Վանի թագավորություն (Ուրարտու) •**

***Ընթերցանության համար***

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՀԱՅԿԻ ՄԱՍԻՆ

«Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների ու դյուցազունների վրա տիրապետելու: Սա խրոխտանալով ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ՝ երբ մարդկային ցեղը սփռվում, տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա՝ բազմամբոխ հսկաների, անչափ կատաղիների և ուժեղների մեջ:... Հայկը, չկամենալով սրան (Բելին) հնազանդվել, Բաբելոնում[4] իր Արամանյակ որդուն ունենալուց հետո, չվեց գնաց Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում՝ իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի, և ուրիշ ընդոծիններով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով»:

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՀԱՅԿԻ և ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սրանից հետո, ասում է նա, Հայկը դառնում է իր բնակության տեղը. իր Կադմոս թոռին պարգևում է շատ ինչք պատերազմի ավարից և անվանի մարդիկ իր ընդոծիններից: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակություն հաստատել, իսկ ինքը գնում դադար է առնում Հարք կոչված դաշտում: Սա տարիներ ապրելով... մեռավ, ամբողջ տոհմը հանձնելով իր Արամանյակ որդուն:

Իսկ սա իր եղբայրներից երկուսին՝ Խոռին և Մանավազին իրենց ամբողջ աղխով, ինչպես Մանավազի որդի Բազին թողնում է Հարք կոչված տեղում: ... Իսկ Արամանյակը ամբողջ բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիս-արևելք և գնում իջնում է բարձրագագաթ լեռներով շրջապատված մի խոր դաշտավայր, որի միջով մի կարկաչահոս գետ է անցնում արևմտյան կողմից,

4 Հայկին բերելը Բաբելոնից Պատմահոր կողմից տուրք է քրիստոնեական վարդապետությանը, որը բոլոր ժողովուրդներին բերում է Բաբելոնից՝ անհաջող աշտարակաշինությունից հետո:

և դաշտի արևելյան մասը կարծես մեջքի վրա պառկած երկարությամբ ձգված է արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում են բազմաթիվ ականակիտ աղբյուրներ,... Իսկ հարավային արեգակնասլաց լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել է երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով,... Արամանյակն այս խոր դաշտում բնակվելով՝ շենացնում է մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում, լեռն իր անվան նմանությամբ կոչում է Արագած, իսկ կալվածքը՝ Ոտն Արագածո...

Արամանյակը տարիներ ապրելուց հետո սերեց Արամայիսին... Նրա որդին՝ Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գետի ափին՝ մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան՝ Երաստի անունով դնում է Երասխ: Իսկ իր որդուն՝ բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թեկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ»:

## ՀՈՒՆԱԿԱՆ ԱՎԱՆԴԱՋՐՈՒՅՑԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Այս ազգի մասին կա մի այսպիսի հնախոսություն: Արմենոսը թեսսալական Արմենիոն քաղաքից, որը գտնվում է Փերեյի և Լարիսայի միջև, Բոյբեիսի մոտ, ինչպես ասվեց, Յասոնի հետ արշավեց Արմենիա: Կյուրսիլիոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին, որոնք արշավել են Ալեքսանդրի հետ, (և) նրանց հետ եկողները ասում են, թե երկիրը նրա անունից կոչվել է Արմենիա: (Ասում են) նաև, թե Արմենոսի հետ եղողներից ոմանք բնակեցրել են Ակիլիսենեն, որը նախապես Սոփենեի (իշխանության) տակ էր, մյուսները՝ Սյուսպիրտիսում մինչև Կալաքենե և Ադիաբենե, Հայաստանի սահմաններից դուրս..»:

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻՆ ՏՐՎԱԾ «ԱՐՄԵՆ» ԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

«Արամի մասին (իմացի՛ր Արամանի) պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ»:

**3-րդ թեմայի ամփոփում**

1. Հայկական լեռնաշխարհը վաղնջական ժամանակներից բնակեցված է եղել բազմաթիվ ցեղերով, որոնց գերակշիռ մասը հայկական էր: Առաջին պետական կազմավորումը՝ Արատտան, հանդես է եկել Ք.ա. III հազարամյակում:
2. Փոքր Ասիայում ապրող խեթական ցեղերը Ք.ա. XVIII դ. ստեղծում են Խեթական ուժեղ պետությունը, Հյուսիսային Միջագետքի ցեղերը՝ XVII դ. Միտաննի պետությունը, որոնք, գրավելով Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջանները, նշանակալից ազդեցություն են ունենում Հայկական լեռնաշխարհի բնակչության զարգացման վրա:
3. Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում ծնունդ է առնում Թորգոմի տուն կամ Թեգարամա պետական կազմավորումը, որին բախտ էր վիճակված վճռական դեր խաղալ հայ ժողովրդի կազմավորման գործում:
4. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում Ք.ա. XV-XIII դդ. խեթական աղբյուրներում հիշատակվում է Հայասա կամ Հայասա-Ազզի պետական կազմավորումը, որը Խեթական պետության դեմ մղած երկարատև և ծանր կռիվներից հետո պահպանում է իր անկախությունը:

5. Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել մի շարք ցեղային միություններ և այլ պետական կազմավորումներ, որոնցից հիշատակության արժանի են Նաիրի և Ուրուատրի ցեղային միությունները, Մելիդի, Էթիունիի, Իսուվայի կամ Ծուփանիի պետական կազմավորումները:
6. Համահայկական առաջին պետությունը, որ հայկական աղբյուրներում հայտնի է Այրարատյան թագավորություն կամ Թորգոմի տուն, իսկ Աստվածաշնչում՝ Թոգարմա անուններով, հանդես է գալիս Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 1032 թվականին: Առաջին թագավորը եղել է Արամայիսը:

## ԹԵՄԱ 4. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք. Ա. IX-VII ԴԴ.)

### *1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ, ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ*

**նկ. Վանի (Տուշպայի) միջնաբերդը**

***Վանի թագավորության ծնունդն ու ամրապնդումը:*** Ք.ա. IX դարում Հայկյանների Այրարատյան թագավորության՝ Ասորեստանից կրած պարտությունների հետևանքով Հայկական լեռնաշխարհում ծնունդ է առնում մեկ այլ պետություն: Վերջինս նրա արքաների թողած սեպագիր արձանագրությունների մեջ կոչվում է Բիայնիլիի թագավորություն, իսկ ասորեստանյան արձանագրություններում՝ Ուրարտու: Եվ քանի որ Բիայնիլի անունից ծագում է Վան քաղաքի անունը, պատմագիտության մեջ ընդունված է այն կոչել Վանի կամ՝ համաձայն ասորեստանյան անվանման, Ուրարտուի թագավորություն:

Սկզբում այն փոքր պետություն էր, որ դժվարությամբ դիմադրում էր ասորեստանյան արշավանքներին: Սակայն քաղաքական բարենպաստ պայմանների շնորհիվ այն աստիճանաբար տարածվում է և ծավալվում: Շուրջ մեկ դարի ընթացքում զենքի ուժով Վանի թագավորությունն իր իշխանությունն է հաստատում Հայկական լեռնաշխարհի մեծ մասի վրա: Ասորեստանցիները, որ սկզբում բախվել էին Այրարատյան թագավորության հետ, վերջինիս անունը Ուրարտու արտասանությամբ տարածեցին նոր հանդես եկած պետության վրա:

Վանի թագավորության հիմնադիրը եղել է Սարդուրի Ա-ն, որն իր մայրաքաղաք Տուշպայի (Վանի) կառուցման մասին թողած արձանագրության մեջ իրեն կոչում է «Մեծ արքա, տիեզերքի արքա, Նաիրի երկրի արքա, արքաների արքա, որը բոլոր թագավորներից հարկեր է ստացել»:

***Վանի թագավորությանն Առաջավոր Ասիայի հզոր փերության:*** Վանի թագավորությունը նշանակալից չափով ամրապնդվեց Իշպուինիի գահակալության շրջանում:

**նկ. Տուշպայի հիմնադրման արձանագրությունը**

Նա և նրա որդի Մենուան (Ք.ա. 810-786 թթ.) մեծապես ընդարձակեցին իրենց թագավորության տարածքը՝ ծավալվելով դեպի Արածանի գետի հովիտը և Ուրմիո լճի ավազանի հարավային շրջանները: Սակայն Վանի թագավորությունն էապես հզորացավ Մենուայի օրոք: Նրան հաջողվեց իրեն ենթարկել ոչ միայն Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, այլև համառ պայքար սկսել Ասորեստանի դեմ՝ Առաջավոր Ասիայում քաղաքական գերիշխանության հասնելու համար: Նրա օրոք գրավվեցին Այրարատյան դաշտի հարավային մասը, Հայկական լեռնաշխարհի արևմտյան մի շարք շրջաններ, Դիաուեխի երկիրը, իսկ Մասիս լեռան հյուսիսային փեշերին կառուցվեց Մենուախինիլի քաղաքը:

Մենուայի կառավարման շրջանում նվաճված ցեղերի վրա պետության գերիշխանությունն ապահովելու համար կառուցվում են հզոր ամրոցներ ոչ միայն տերության կենտրոնական

երկրամասերում, այլև ծայրամասային մարզերում: Մենուան ավարտեց դեռևս Սարդուրի Ա-ի ժամանակ սկսված մայրաքաղաք Տուշպայի պաշտպանական կառույցների շինարարությունը: Արքունիքը հոգ էր տանում գյուղատնտեսության զարգացմանը՝ մեծ ուշադրություն նվիրելով, առաջին հերթին, այգիների և ցանքատարածությունների ընդլայնմանը: Մենուայի ժամանակներից սկսած երկրում մեծ զարկ տրվեց ջրանցքաշինությանը, որի շնորհիվ յուրացվեցին և ոռոգվեցին ընդարձակ հողատարածություններ: Թագավորը Հայոց ձոր (այժմ՝ Խոշաբ) գետից 72 կմ երկարությամբ ջրանցք կառուցեց մինչև պետության մայրաքաղաք Տուշպա: Ջրանցքն այնքան լավ էր կառուցված, որ գործում է մինչև այսօր՝ ջուր մատակարարելով Վանի բնակիչներին և այգիներին: Ջրանցքի ամբողջ երկարությամբ Մենուայի թողած արձանագրություններից մեզ են հասել 14-ը, որոնցում նա աստվածների անունից սպառնում է բոլոր նրանց, ովքեր կջարդեն արձանագրությունը և կփորձեն իրենց վերագրել ջրանցքի կառուցումը: Ավելի ուշ հայերը ջրանցքը կոչում էին Շամիրամի ջուր՝ Ասորեստանի թագուհի Շամիրամին վերագրելով դրա կառուցումը:

Մեծ նվաճումների և Ասորեստանի դեմ մղած հաջող կռիվների արդյունքում Վանի թագավորությունը վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության:

***Արգիշտի Ա: Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաքների կառուցումը:*** Գահ բարձրացած Արգիշտի Ա-ն (Ք.ա. 786-764) շարունակեց իր հոր քաղաքականությունը: Մեծ արշավանք ձեռնարկելով դեպի տերության եփրատյան սահմանները՝ նա ոչ միայն ամրապնդեց դրանք, այլև ձեռք բերեց հարուստ ավար և մեծ թվով գերիներ:

Արգիշտի թագավորի վարած կռիվների մեջ առանձնանում է Այրարատյան դաշտի նվաճումը, որը վերածվում է պետության տնտեսական և ռազմական կարևոր նշանակություն ունեցող շրջանի: Ք.ա. 782 թվին նա մեր հանրապետության մայրաքաղաք Երևանի տարածքում կառուցում է Էրեբունի քաղաքը, որի անունից էլ ծագում է Երևանի անվանումը: Իր թողած արձանագրությունների մեջ նա նշում էր, որ Էրեբունին կառուցվել է «ի բարօրություն Բիայնիլի երկրի, ի տապալումն թշնամական երկրների»: Էրեբունին վերածվեց տերության հյուսիսային կարևոր հենակետի: 2018 թվին կլրանա Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակը:

**նկ. Էրեբունիի ամրոցը**

Այրարատյան դաշտը մշտապես գտնվում էր արքունիքի ուշադրության կենտրոնում: Կամենալով վերջնականապես ամրապնդել պետության իշխանությունն այստեղ՝ Արգիշտի Ա-ն Արամայիսի Արմավիր մայրաքաղաքի հարևանությամբ կառուցում է Արգիշտիխինիլի մեծ քաղաքը, որը վերածվում է տերության հյուսիսային շրջանների կարևոր վարչական կենտրոնի և ռազմական մի նոր հենակետի: Արգիշտիխինիլին, որ սերտաճել էր Արմավիրին, հետագայում վերածվեց Երվանդականների թագավորության մայրաքաղաքի՝ պահպանելով հինավուրց Արմավիր անունը: Արգիշտի թագավորը մեծ թվով արշավանքներ ձեռնարկեց Շիրակ, որը նրան հրապուրում էր հացահատիկի առատությամբ: Արգիշտիի զորքերը հասան մինչև Սևանա լճի ափերը:

Հաջող էին կռիվները Ասորեստանի դեմ: Ուրմիո լճի ավազանում և այլ վայրերում մղված կռիվներում Ասորեստանի գահակալները պարտություն կրեցին, և Վանի թագավորության հաղթարշավը շարունակվեց: Այնքան սարսափազդու էր նրա անունը, որ ասորեստանյան զորքերի հրամանատարը խոստովանել է. «Արգիշտին, որի անունն անգամ ահարկու է»:

***Սարդուրի Բ: Վանի թագավորության և Ասորեստանի միջև հակամարտության ուժեղացումը:*** Վանի թագավորությունը շարունակեց ռազմական և տնտեսական վերելք ապրել Արգիշտի Ա-ի որդի Սարդուրի Բ-ի օրոք (Ք.ա. 764-735 թթ.): Ինչպես իր նախնիները, Սարդուրի

Բ-ն էլ սկզբում ուշադրություն դարձրեց իր տերության հյուսիսային երկրամասերի վերջնական հնազանդեցմանը, ինչպես նաև նոր երկրների նվաճմանը: Արշավանք ձեռնարկվեց անհնազանդ Շիրակի դեմ, Սևանա լճի արևմտյան ափին նվաճվեցին Վելիքուխի (Գեղարքունիք) և նրան հարևան երկրները՝ պետության սահմանը հասցնելով մինչև Արցախ: Հյուսիսում նա գրավեց Կողքիս (Կոլխիդա) երկիրը, Ջավախքի տարածքը և Աղստևի ավազանը: Սարդուրի Բ-ն ոչ միայն կարողացավ վերստին հնազանդեցնել Մելիդի թագավորությունը և այն ծանր հարկի տակ դնել, այլև՝ Եփրատի հոսանքով շարժվելով հարավ, իր իշխանության տակ առավ Սիրիայի նշանակալից մասում: Հաստատվելով Բաբելոնի հարակից շրջաններում (Բաբիլու երկիր)՝ նա ձգտում էր աքցանի մեջ առնել Ասորեստանը և՛ արևմուտքից, և՛ արևելքից: Չնայած սկզբնական հաջողություններին՝ թագավորը, ցավոք, բախվեց վերստին ուժեղացած և վերելքի ուղին բռնած Ասորեստանի դիմադրությանը:

**նկ. Որմնանկար Էրեբունիից (Ք.ա. VIII)**

Սարդուրի Բ-ի պայքարը Ասորեստանի դեմ, որ ռազմավարական լուրջ պլաններ էր շոշափում, դժբախտաբար, ավարտվեց անհաջողությամբ: Ասորեստանյան գահ բարձրացած Թիգլաթ-Պալասար Գ-ն, որ կարողացել էր վերստին ամրապնդել Ասորեստանի բանակը, Ք.ա. 743 թ. պարտության մատնեց Եփրատի հոսանքով հարավ շարժվող Սարդուրիի զորքերին: Ավելին, Ք.ա. 735 թ. ասորեստանյան բանակը մոտեցավ մայրաքաղաք Տուշպային և պաշարեց այն: Ճիշտ է, քաղաքի միջնաբերդը թշնամուն գրավել չհաջողվեց, սակայն Տուշպան ավերվեց, և թշնամին ավարով ու գերիներով հեռացավ:

***Վանի թագավորությունը վերջին գահակալների օրոք: Թագավորության անկումը:*** Սարդուրի Բ-ին հաջորդած Ռուսա Ա-ն (Ք.ա. 735-713 թթ.) հսկայական ջանքեր գործադրեց պետության հզորությունը վերականգնելու համար: Նա մեծ նվաճումներ կատարեց Սևանա լճի ավազանում և նրանից արևելք ու հարավ ընկած տարածքներում: Ամենուրեք կառուցվում էին ամրոցներ՝ պետության իշխանությունը նվաճված երկրներում ամրապնդելու համար: Նա ստիպված էր ծանր կռիվներ մղել Հյուսիսային Կովկասից ներխուժած կիմմերական ցեղերի դեմ, որոնք սկզբում ծանր հարվածներ հասցրին Վանի թագավորությանը: Ի վերջո Ռուսայի դիվանագիտությունը հաղթեց, և վտանգավոր թշնամին նրա հորդորներով շարժվեց դեպի Փոքր Ասիա: Կիմմերները հաստատվեցին Կապադովկիայում, որը նրանց անունով ստացավ Գամիրք անվանումը: Այստեղից նրանք հաճախակի հարձակվում էին Ասորեստանի վրա:

**նկ. Գինու մառան (Կարմիր Բլուր, Ք.ա. VII)**

Վանի թագավորությունը ծանր հարված ստացավ Ռուսա Ա-ի գահակալության վերջին շրջանում: Ռուսա Ա-ն սկզբում ամեն կերպ խուսափում էր Ասորեստանի հետ բախումից: Իսկ երբ պարզ դարձավ, որ դա անհնար է, նա սկսեց վարել արտաքին ակտիվ քաղաքականություն: Դրան ի պատասխան, ասորեստանյան բանակը Ք.ա. 714 թ. ներխուժեց թագավորության կենտրոնական երկրամասերը: Թշնամին՝ անխնա ավերելով ու ավարի ենթարկելով երկիրը, անգթորեն ոչնչացնում էր ոչ միայն բնակավայրերը, այլև այգիներն ու ցանքսերը: Վերադարձի ճանապարհին թշնամին հարձակվեց Վանի թագավորությանը ենթակա Մուծաիրի իշխանության վրա, որտեղ գտնվում էր թագավորության գլխավոր աստված Խալդիի հռչակավոր մեհյանը: Մեհյանը, որն իր ոճով հիշեցնում էր Գառնիի տաճարի նախատիպը, ավերվեց և կողոպտվեց:

Այսուհանդերձ, դրանից հետո կիմմերական ցեղերի և այնուհետև քաղաքական ասպարեզում հայտնված սկյութական ցեղերի արշավանքները նշանակալից չափով մեղմացրին հակամարտությունը երկու երկրների միջև: Բախումները նրանց միջև գործնականում դադարեցին:

Վանի թագավորությունը հզորության մի փայլատակում էլ ունեցավ Ռուսա Բ-ի օրոք (Ք.ա. 685-645 թթ.): Նա հայտնի էր շինարարական աշխատանքներով Տուշպայում և Այրարատյան դաշտում, որտեղ նրա ջանքերով կառուցվեց Թեյշեբաինի քաղաքը (ներկայիս Կարմիր բլուրը Երևանի տարածքում): Թեյշեբաինին աստիճանաբար վերածվեց երկրամասի տնտեսական կենտրոնի և հյուսիսային կարևոր ռազմական հենակետի: Հնարավոր եղավ կասեցնել սկյութների արշավանքները, և վերջիններս անգամ բարեկամական հարաբերություններ հաստատեցին Ռուսա Բ-ի հետ:

Ռուսա Բ-ից հետո հիշատակվում են ևս մի քանի գահակալներ, սակայն նրանք չկարողացան վերականգնել պետության երբեմնի հզորությունը: Վանի թագավորությունը գնալով թուլանում էր: Շուտով նրա մի մասում հանդես եկավ Պարույր Սկայորդու թագավորությունը, որը Մարական թագավորության կողմից ճանաչվեց Հայոց թագավոր:

***Ընթերցանության համար***

## ՍԱՐԴՈՒՐԻ Ա-Ի ԱՍՍՈՒՐԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՇՊԱ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Սարդուրիի արձանագրությունը, որդու Լութիպրիի, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես.– Ես քարերն այս Ալնիունու (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»:

## ԱՐԳԻՇՏԻ Ա-Ն ԷՐԵԲՈՒՆԻ ԲԵՐԴ-ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Խալդյան մեծությամբ Արգիշտի Մենուայորդին այս ամրոցը հոյակապ կառուցեց: Հաստատեցի Էրեբունի անունը՝ Բիայնիլի (երկրի) զորությունը լուլուական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար): Արգիշտին ասում է.– Հողը չոր (?) էր: Կատարեցի մեծագործություններ հզոր այնտեղ»:

## ՄԵՆՈՒԱՅԻ ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Խալդյան զորությամբ Մենուա Իշպուինորդին այս ջրանցքը անցկացրեց: «Մենուայի ջրանցք» (է) անունը: Խալդյան մեծությամբ Մենուան արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի»:

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՇԱՄԻՐԱՄԻ (ԻՄԱՑԻՐ ՄԵՆՈՒԱՅԻ) ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Այս տեղի վրա աչք դնելով՝ այրասիրտ ու վավաշոտ Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս տեղերից փափագած տեղը բերել չորս բյուր և երկու հազար սևագործ բանվորներ, վեց հազար՝ իր ընտիր փայտագործ, քարագործ, պղնձագործ և երկաթագործ արհեստավորներից, որոնք ըստ ամենայնի կատարյալ լինեն իրենց գործի մեջ: Եվ գործը հրամանի համապատասխան կատարվում է. անմիջապես բերվեցին սևագործ բանվորներ և բազմարվեստ հմուտ վարպետներ: Եվ հրամայում է նախ գետի ամբարտակը շինել ապառաժ խոշոր քարերով, կրի և ավազի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է: Գետի այս ամբարտակի ճեղքվածքներում այդտեղի մարդիկ, ինչպես լսում եմ, փախչում ամրանում են ասպատակությունների և գաղթերի ժամանակ, որպես թե ամրանալիս լինեին ապառաժ լեռների

գագաթներին: Եվ եթե մեկը կամենա փորձել, չի կարողանա ամբարտակի շինվածքից պոկել թեկուզ պարսատիկի մի փոքր քար, որչափ էլ աշխատի: Եվ երբ մարդ նայի քարերի շուրջն եղած կրի ծեփին, նրան այնպես կթվա, թե ճարպ է թափված այնտեղ: Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Երբ ծնունդ առավ Վանի թագավորությունը: Ուրիշ ինչ անուններով է այն հայտնի:**
2. **Ո՞վ է եղել Վանի թագավորության հիմնադիրը:**
3. **Ինչ գիտեք Վանի թագավորների շինարարական գործունեության մասին:**
4. **Ինչ ռազմական հենակետ-քաղաքներ կառուցեցին Վանի թագավորները պետության հյուսիսում:**
5. **Ինչպես էին Վանի թագավորներն ամրապնդում իրենց իշխանությունը նոր նվաճած երկրամասերում:**
6. **Վանի թագավորությունը ո՞ր թագավորների օրոք դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետություն:**
7. **Հյուսիսային Կովկասից եկած ինչ ցեղերի դեմ էր պայքարում Վանի թագավորությունը:**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Տետրում գծեք և լրացրեք Վանի թագավորների նվաճած տարածքների աղյուսակը.**

| Թագավորի անունը | Նվաճած տարածքները |
|---|---|
| | |
| | |
| | |

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Բիայնիլի • Վան (Տուշպա) • Սարդուրի • Իշպուինի • Մենուա •**
**• Մենուախինիլի • Մելիդ (Մալաթիա) • Արգիշտի • Դիաուեխի (Տայք) •**
**• Էրեբունի • Արգիշտիխինիլի • Վելիքուխի (Գեղարքունիք) • Ջավախք •**
**• Կողքիս (Կոլխիդա) • Աղստև • Թիգլաթ-Պալասար Գ • Ռուսա •**
**• Կիմմերներ • Գամիրք • Մուծածիր • Խալդի • Պարույր Սկայորդի • Թեյշեբաինի •**

## *2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ*

***Գյուղատնտեսություն և արհեստներ:*** Վանի թագավորությունը մեծ հաջողությունների հասավ գյուղատնտեսության և արհեստների զարգացման գործում: Երկրագործությունը խթանելու համար Վանի թագավորները զարկ տվեցին ջրանցքների շինարարությանը: Բացի Մենուայի (Շամիրամի) ջրանցքից, Տուշպա-Վան քաղաքից ոչ հեռու անցկացվում է 25 կմ-ոց Ռուսայի ջրանցքը և կառուցվում Ռուսայի ծով կոչված ջրամբարը: Թեյշեբաինիում (Կարմիր բլուր) անցկացված ջրանցքը, որ մինչև օրս պահպանվել է, Հրազդանի ջրերը թունելի միջոցով հասցրել է Այրարատյան դաշտի անջրդի հողերը: Երկրագործությունը, հատկապես այգեգործությունն ու խաղողագործությունը, մեծ զարգացման են հասել Վանա լճի ավազանում, Այրարատյան դաշտում, Եփրատ-Արածանիի և այլ գետահովիտներում: Լեռնային և նախալեռնային շրջաններում բնակչությունն առավելապես զբաղվում էր խաշնարածությամբ:

**նկ. Բրոնզե վահան և սաղավարտ (Ք.ա. VIII դ.)**

Վանի թագավորության շրջանում ծաղկեցին արհեստները: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ արհեստագործները պատրաստել են անհրաժեշտ քանակությամբ զենք ու զրահ,

մետաղներ, առօրյա կյանքի գործիքներ ու իրեր, ինչպես նաև տարբեր տեսակի զարդեր: Դրանք պատրաստվում էին բրոնզից, պղնձից, երկաթից, ոսկուց, արծաթից, քարի տարբեր տեսակներից, կավից, ոսկրից և այլ նյութերից: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև բրդից, վուշից և կաշվից պատրաստված հագուստների ու գորգերի մնացորդներ:

***Քաղաքաշինություն:*** Վանի թագավորությունը եղել է զարգացած քաղաքների երկիր, որոնց մի մասը ձևավորվել է բերդերի և ամրոցների շուրջը: Տուշպան, Էրեբունին, Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին և այլն պեղվել են հնագետների կողմից: Նշանակալից թիվ էին կազմում բերդ-քաղաքները, որոնց՝ քաղաքի վրա իշխող բարձրադիր վայրերում կառուցվում էր հզոր միջնաբերդը՝ պարսպապատված 2-3 շարք պարիսպներով: Միջնաբերդի շուրջը փռված քաղաքը մեծ մասամբ նույնպես պարսպապատում էին: Քաղաքները կառուցապատվում էին հատուկ նախագծով, որի արդյունքում նրանք ունեին ուղիղ և զուգահեռ փողոցներ: Միջնաբերդում կամ ամրոցում բնակվում էր մարզային կառավարիչը՝ իր սպասավորներով և զինվորներով: Այդ մասում կային նաև արհեստանոցներ ու մառաններ: Սակայն արհեստավորների մեծ մասը բնակվում էր պարսպապատ քաղաքի տարածքում:

Նվաճված երկրներում բերդաքաղաքները ծառայում էին որպես տնտեսական և ռազմական հենակետեր: Այստեղ էին կուտակվում արշավանքների ժամանակ ձեռք բերված ավարը և բնակչությունից գանձված հարկերը՝ հացահատիկը, պտուղը և անասունները:

**նկ. Թեյշեբա աստծու արձանիկը**

Քաղաքներում գտնվում էին Խալդի աստծո կամ տվյալ քաղաքի հովանավոր աստծո մեհյանները: Ինչպես ասվել է, Մուծածիրի Խալդի աստծու նշանավոր մեհյանը նախատիպն է Գառնիի և համանման տաճարների: Տաճարների մյուս տեսակը հայտնի է եղել աստծու դարպաս անունով: Որպես շինանյութ ծառայել են քարը, աղյուսը (մեծ մասամբ չթրծված) և փայտը: Շինությունները ծածկվում էին երկար ու հաստ գերաններով: Ամրոցի աշտարակները և տաճար-մեհյանները կառուցելիս օգտագործվում էր տաշած քարը:

***Կերպարվեստը:*** Հմուտ վարպետների ձեռքերով պալատների և տաճարների պատերը ներսից ծածկվում էին գունավոր նկարներով, որոնց մեջ հանդիպում էին ոչ միայն աստվածների, այլև կենդանիների պատկերներ: Սովորաբար նկարները եզերվում էին գեղեցիկ զարդանախշերով: Հանդիպում են բարձրաքանդակներ, ինչպիսին էր Թեյշեբա աստծու քանդակը: Պահպանվել են մետաղից, քարից ու եղջյուրից պատրաստված աստվածների, կենդանիների ու մարդկանց բազմաթիվ մանր արձաններ: Վանյան թագավորների կամ զորապետերի բրոնզե սաղավարտները, վահանները և կապարճները (նետաման) զարդարվում էին հոյակապ բարձրաքանդակ պատկերներով: Պատկերների մեջ հանդիպում էին մարտակառքեր ու հեծյալներ, առյուծներ ու ցուլեր, քրմեր ու թևավոր ինչ-ինչ էակներ:

**նկ. Խոռխորյան տարեգրությունից մի հատված (Ք.ա. VIII դ.)**

***Լեզուն և սեպագրությունը:*** Ինչպես ցույց են տվել լեզվաբանները, վանյան սեպագիր արձանագրությունների լեզուն ազգակից է խուռիերենին: Մեզ են հասել ավելի քան 800 արձանագրություններ, որոնցից մի քանիսը բաղկացած են մի քանի հարյուր տողից: Արձանագրությունները, որ բավականին միատիպ են և ոճով միատեսակ, պարունակում են 500-ից մի փոքր ավելի բառեր, որոնց մի մասի նշանակությունը մինչև օրս պարզված չէ: Ըստ երևույթին վանյան սեպագրերի լեզուն շատ արագ դադարեց օգտագործվել առօրյա կյանքում, որի հետևանքով արձանագրությունների լեզուն խիստ աղքատիկ է, միօրինակ ու միալար: Նրանցում միևնույն բառերն անընդհատ կրկնվում են:

Տերության տարածքային աճի հետ մեկտեղ այդ լեզուն, որպես արքունի գրագրության լեզու, տարածվել է տերության նվաճված երկրամասերում ևս: Տերության բնակչության մեծ մասի համար այն անհասկանալի էր: Վանյան սեպագիրը տերության սահմաններից դուրս երբեք չի օգտագործվել: Մեծաթիվ հայ բնակչության ազդեցության հետևանքով վանյան լեզվում հայտնվում են արծիվ, ծառ, թիվ և այլ բառեր, իսկ հայերը փոխ են առնում այնպիսի բառեր, ինչպիսիք են բուրգը, ծովը, ուղտը և այլն:

**նկ. Վանյան սեպագիր արձանագրություններ**

Վանյան սեպագիրը փոխ է առնված ասսուրականից: Սեպագիրն այբուբենային գրից տարբերվում է նրանով, որ այնտեղ մի քանի տասնյակ տառերի փոխարեն (օրինակ՝ ա, դ, ժ, թ) հանդիպում են վանկեր նշանակող հարյուրավոր սեպախմբեր՝ բա, բի, բու, ագ, իգ, ուգ և այլն: Սեպախմբերը կարող են և բառեր նշանակել՝ տուն, ձի, ուտել, գնալ և այլն: Հարկ է խոստովանել, որ մենք այսօր էլ օգտվում ենք այդպիսի նշաններից. օրինակ՝ գրում ենք 2 և կարդում ենք երկու, թեև այնտեղ գրված չէ ե-ր-կ-ու: Սակայն սեպագրերում այդպիսի նշանները բազմաթիվ են: Վանյան արձանագրություններն իրենց բովանդակությամբ նվաճումների կամ ռազմական հաջող արշավանքների նկարագրություններ են կամ էլ շինարարական ու կրոնական բնույթի գրություններ: Սեպագրով գրել են սովորաբար քարի վրա, թեև սեպագիր արձանագրություններ պահպանվել են նաև մետաղե իրերի և կավից պատրաստված սալիկների վրա: Չնայած գիտնականների մեծ սպասելիքներին, մինչև օրս կավից պատրաստված սալիկների վրա գրված գրությունների գրադարաններ չեն հայտնաբերվել:

Սեպագրից զատ օգտագործվել են տեղական մեհենագրերը, որոնց վերծանությունը դեռ նոր է սկսվել, սակայն առաջին արդյունքները խոսում են համակարգի հայալեզու լինելու մասին:

**նկ. Դիցաբանական էակի արձանիկ Էրեբունիից**

***Կրոնը և աստվածների պանթեոնը:*** Վանյան աստվածների պանթեոնը ներկայացրել են գրեթե 100 աստվածներ և աստվածություններ: «Միերի դռան» վրա պահպանվել է արձանագրություն, որտեղ թվարկված են նրանք՝ իրենց զոհաբերվող կենդանիների թվաքանակի նշումով: Գլխավոր աստվածը Խալդին էր, որը համարվում էր արքայատոհմի և թագավորի հովանավորը: Նրան հաջորդում էին պատերազմի աստված Թեյշեբան և արևի աստված Շիվինին: Կային նաև աստվածուհիներ: Գոյություն են ունեցել նաև գետերի, լեռների և լճերի աստվածներ:

***Պետական կարգը, բանակը:*** Պետության գլուխ կանգնած թագավորի իշխանությունն անսահմանափակ էր ու ժառանգական: Վարչական առումով պետությունը բաժանվում էր խոշոր մարզերի, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից: Ելնելով քաղաքական ինչ-ինչ շարժառիթներից՝ որոշ դեպքերում նվաճված երկրներում իշխանությունը թողնվում էր նախկին թագավորներին կամ ցեղապետերին, որոնք պարտավորվում էին հարկ վճարել և իրենց զորաջոկատներով մասնակցել թագավորի արշավանքներին:

**նկ. Մուծածիրի նվաճումը (ասորեստանյան բարձրաքանդակ)**

Թագավորի հովանավորը գլխավոր աստված Խալդին էր, իսկ թագավորը՝ նրա ներկայացուցիչը, որն իր բոլոր գործերը կյանքի էր կոչում նրա անունից:

Վանի թագավորության բանակը, հին արևելյան բանակների օրինակով, կազմված էր հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Հետևակն էլ իր հերթին բաղկացած էր տեգավորների, տապարակիրների և աղեղնաձիգների զորամասերից: Թագավորության հատուկ ձիաբուծարանները բանակն ապահովում էին մարտական նժույգներով: Բանակը բաժանվում էր 3000-անոց գնդերի, որոնք էլ իրենց հերթին կազմված էին 50-ական զինվորից բաղկացած վաշտերից: Վանյան մարտիկների հոյակապ պատկերներ են պահպանվել պեղումների ժամանակ հայտնաբերված բրոնզե սաղավարտների վրա:

Ազատ արտադրողներից հետո հասարակական ամենամեծ խավը ստրուկներն էին, որոնց հայթայթման հիմնական աղբյուրը հաղթական պատերազմներն էին: Մոտավոր հաշիվներով միայն Արգիշտի Ա և Սարդուրի Բ թագավորների օրոք Վանի թագավորություն են բերվել ավելի քան կես միլիոն ռազմագերի-ստրուկներ: Նրանց աշխատեցնում էին քաղաքների ու ամրոցների, տաճարների, ջրանցքների ու ճանապարհների կառուցման ու նորոգման վրա: Այսուհանդերձ, պետության հիմնական արտադրող ուժը երկրագործ ու անասնապահ ազատ բնակչությունն էր և արհեստավորությունը, որոնցից էլ հիմնականում համալրվում էր Վանի թագավորության բանակը:

***Ընթերցանության համար***

## ՌՈՒՍԱ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՋՐԱՄԲԱՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հողաշերտը կիտեցի լեռան ստորոտում, դաշտը հեղեղեցի, ուղղեցի ջրերը այնտեղ՝ առուների ու առվակների, դրեցի անունը Ռուսայի ծով: Անցկացրի ջրանցք այնտեղից դեպի Ռուսախինիլի (քաղաքը), հենց այդ հողով, որ չոր (?) էր…

Ռուսան ասում է.– Հիմնեցի հենց այդ հողում խաղողուտ, անտառ, արտ ցորենի: Հզոր մեծագործություններ այնտեղ կատարեցի»:

## ՁԻՈՒ ՑԱՏԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՌԵԿՈՐԴ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Խալդյան զորությամբ Մենուա Իշպուինորդին ասում է.– Հենց այս տեղից նժույգը՝ Արծիբի անուն(ով), Մենուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն[5]….»:

## ՌՈՒՍԱՅԻ ՈՐԴԻ ԱՐԳԻՇՏԻԻ ՆԵՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արգիշտի Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուրա (գյուղի) (?) անտառի առջև(ից), մինչև Իշպիլի Բատուորդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն»:[6]

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

**1. Ի՞նչ կառուցվածք ուներ Վանի թագավորության բանակը:**
**2. Ի՞նչ ջրանցքներ են կառուցվել Վանի թագավորությունում:**
**3. Որո՞նք էին ստրկական աշխատանքի կիրառության բնագավառները:**
**4. Ի՞նչ է սեպագիրը և ի՞նչ ծագում ուներ վանյան սեպագիրը:**
**5. Արվեստի ո՞ր ճյուղերն էին զարգացած Վանի թագավորությունում:**
**6. Վանի թագավորության ի՞նչ նշանավոր քաղաքներ գիտեք:**

### ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Ինչո՞ւ էին Վանի թագավորները որոշ նվաճված երկրներում իշխանությունը թողնում նախկին թագավորներին կամ ցեղապետերին:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Ռուսայի ծով • Աստծու դարպաս • «Միերի դուռ» • Թեյշեբա • Սեպագիր •**
**• Մեհենագիր • Շիվինի • Հետևակ • Հեծելազոր • Մարտակառք •**
**• Տիգավորներ • Տապարակիրներ • Աղեղնաձիգներ •**

---

5 Քանի որ կանգունը հավասար էր 51,8 սմ-ի, ապա 22 կանգունը կլինի 11 մ 39 սմ: Մենուայի Արծիբի (իմացիր՝ արծիվ) նժույգի սահմանած ռեկորդը պահպանվել է ընդհուպ մինչև 1975 թ., երբ գերմանացի Կ. Բերգմանն իր Սվինգեր նժույգով ցատկեց 12 մ 16 սմ:

6 Քանի որ կանգունը հավասար էր 51,8 սմ-ի, Արգիշտի Բ-ն նետն արձակել է 292 մ:

**4-րդ թեմայի ամփոփում**

1. Ք.ա. IX դարում Վանա լճի ավազանում ծնունդ է առնում Վանի կամ Բիայնիլիի թագավորությունը, որը ասսուրական սեպագիր արձանագրություններում հանդես է գալիս Ուրարտու անունով: Մենուա, Արգիշտի Ա և Սարդուրի Բ թագավորների իշխանության շրջանում այն վերածվում է Առաջավոր Ասիայի հզորագույն տերության: Արգիշտի Ա-ն Ք.ա. 782 թ. հիմնադրում է Էրեբունի բերդաքաղաքը, որից էլ իր անունն է ստացել Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը:
2. Գրեթե մեկ դար շարունակ Վանի թագավորությունը փորձում է կործանել իր վտանգավոր հակառակորդ Ասորեստանին, սակայն պարտվում է այդ պայքարում: Հասարակական-տնտեսական զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող ցեղային երկրներից կազմված Վանի թագավորությունը՝ ենթարկվելով կիմմերների ու սկյութների ավերիչ հարձակումներին և Ասորեստանի նվաճողական արշավանքներին, աստիճանաբար թուլանում է ու կործանվում:
3. Վանի թագավորությունում բարձր զարգացման հասան գյուղատնտեսությունն ու արհեստները: Պետության ինչպես կենտրոնական, այնպես էլ նվաճված երկրամասերում կառուցվում էին բերդ-քաղաքներ և ամրոցներ, որոնք ոչ միայն ռազմական, այլև տնտեսական նպատակներ էին հետապնդում: Մեծ զարկ ստացավ ջրանցքաշինությունը. օրինակ՝ Վան քաղաքը ջրով ապահովող Մենուայի կամ Շամիրամի ջրանցքը: Բուռն զարգացում ապրեցին արհեստները, կերպարվեստը, քանդակագործությունը և այլն: Այս ամենի մասին մենք իմանում ենք պեղումների հետևանքով հայտնաբերված նյութերից և վանյան ու ասսուրական սեպագիր արձանագրություններից:

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

## Թեմա 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

### *1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ*

***Պարույր թագավոր:*** Ք.ա. VII դարի վերջերին Վանի թագավորությունը խիստ թուլացավ: Դրան մեծապես նպաստեցին Հյուսիսային Կովկասից ներխուժած կիմմերների և սկյութական ցեղերի ավերիչ ասպատակությունները: Վանի թագավորության փլատակների վրա հանդես եկան մի շարք իշխանություններ, որոնց մեջ սկսեց առանձնանալ Պարույրի թագավորությունը: Հայոց ավանդական պատմության համաձայն՝ նա Հայկ Նահապետի սերունդներից էր:

**նկ. Արմավիրի բլուրը**

Հավանաբար նրա թագավորությունը միավորում էր մեր պատմական հայրենիքի հարավային և հարավարևելյան շրջանները: Պարույրն ակտիվորեն ներառվում է Առաջավոր Ասիայում հանդես եկած երկու հզոր պետությունների՝ Մեդիայի (Մարաստան) և Բաբելոնիայի՝ Ասորեստանի դեմ մղած պայքարին: Կամենալով Պարույրին իրենց կողմը գրավել՝ թե՛ Ասորեստանի և թե՛ Մարաստանի թագավորները նրան թագ են խոստանում: Որոշ տատանումներից հետո նա ամբողջությամբ անցավ Ասորեստանի հակառակորդների կողմը: Նա մարական թագավորից թագ ստացավ Նինվեի վրա մարա-բաբելոնյան զորքերի արշավանքին մասնակցելու համար: Անդրադառնալով Պարույրի թագադրությանը՝ Պատմահայրը, որ հոգեկան հրճվանք էր զգում Հայոց պետության մեծագործությունների մասին գրելիս, նշում է. «Ահա այժմ ես կուրախանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում»: Անկախ հայկական պետականության մեծ ջատագով Պատմահայրը՝Մովսես Խորենացին, որն իր երկը ստեղծում էր մարզպանության շրջանում, գրում է. «Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ... աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի»:

**նկ. Ոսկե մեդալիոն(Ք.ա.VI-V դդ.): Արմավիր**

***Հայաստանի Երվանդական թագավորությունը:*** Պարույրի թագավորությանը բախտ չվիճակվեց երկար իշխել Հայաստանի քաղաքական թատերաբեմում: Մեկ թագավորության ներքո ամբողջ երկիրը միավորելու գործը իրականացրեց Երվանդական արքայատոհմը, որի իշխանության կենտրոնն սկզբում Այրարատն էր: Պատմահայրը շփոթում է Հայկյան թագավոր Արամին Երվանդական Արամանիի հետ, որին նա նույնպես Արամ է կոչում: Վերջինս պայքար է սկսում օտար զավթիչների դեմ, ջախջախում նրանց առաջնորդ Նյուքար Մադեսի զորքերը, իսկ Մադեսին հրամայում գամել Արմավիրի պարսպի աշտարակին: Արամանին, որ իր մայրաքաղաք դարձրեց Արմավիրը, հանդես բերեց մեծ քաղաքագետի և զինվորական գործչի հատկություններ: Դաշնակցելով մարերի հետ՝ նա գրավեց Ասորեստանի դաշտի մեծ մասը: Նա մեծ բանակով արշավանք է ձեռնարկում դեպի արևմուտք՝ գրավելով Մաժակ (հետագայում՝ Կեսարիա) քաղաքը և Հայաստանի սահմանները հասցնելով մինչև Սև ծովի ափերը: Ռազմական և քաղաքական այս հաջողությունների շնորհիվ Հայաստանի Երվանդականների թագավորությունը վերածվում է Առաջավոր Ասիայի կարևոր ու ուժեղ պետության:

***Հայ ժողովրդի կազմավորման ավարտը:*** Հայ ժողովրդի կազմավորումը, որ ակտիվացել էր Ք.ա. II հազարամյակի վերջերին, բուռն ընթացել Վանի թագավորության շրջանում, Երվանդականների թագավորության օրոք թևակոխեց իր ավարտական փուլը: Արամանի թագավորի կողմից արևմուտքում գրավված երկրների բնակչությունը, որ հնդեվրոպական էր և շատ մոտ հայերին, աստիճանաբար ներառվեց հայ ժողովրդի կազմավորման գործընթացների մեջ: Այնքան մեծ էին Հայոց թագավորի քաջագործությունները և այնքան հաղթական նրա զորքը, որ շուտով հարևան ժողովուրդները նրա Արամանի անունը տարածեցին թագավորության բոլոր բնակիչների վրա: Հայերը հարևանների կողմից դիտվում էին որպես Արամանի թագավորի ժողովուրդ, ուստի, հակառակ նրանց հայ ինքնանվանման, նրանց սկսեցին անվանել արամանի (որը ժամանակի ընթացքում վերածվեց արմենի), իսկ երկիրը կոչվեց Արմենիա: Բնավ էլ զարմանալի չէ, որ պարսիկները հայերին մինչև օրս էլ կոչում են արմանի: Այս գործընթացների հետևանքով հայ ժողովրդի կազմավորումը թևակոխեց ավարտական փուլ, և երկրի ամբողջ բնակչությունը դարձավ հայախոս:

**նկ. Կյուրոս Մեծի դամբարանը (Ք.ա.VI դ.)**

***Հայ-մարական հարաբերությունները:*** Ք.ա. 612 թ. մարական և բաբելոնական զորքերը, որոնց հետ միասին կռվում էին նաև հայկական զորաբանակներ, գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն և ամենայն դաժանությամբ կործանեցին այն: Այս իրադարձությունները ցնցող ազդեցություն ունեցան Հայոց թագավորի վրա: Նա փորձեց իր դաշնակիցներից՝ մարերից ու բաբելոնցիներից, աստիճանաբար հեռանալ և երկրի անվտանգությունն ապահովելու համար ամրացնել պետության բերդերն ու ամրոցները: Սակայն մարական Կիաքսար թագավորի հրամանով նրա ենթակա պարսից թագավոր Կյուրոսը ժամանեց Հայաստան, որի թագավորը կռիվների մեջ էր երկիր ներխուժած սկյութների կամ խալդայների դեմ: Նա ստիպեց, որ Հայոց թագավորը մարական թագավորին օգնական զորքեր ուղարկի Ասորեստանի դեմ պատրաստվող արշավանքին մասնակցելու համար: Ասորեստանը կործանվեց Ք.ա. 605 թվին.: Մարերն ստեղծեցին հզոր տերություն, որի զորքերը Ք.ա. 585 թ. մայիսի 28-ին ճակատամարտ տվեցին Լյուդիական թագավորության բանակներին Հալիս գետի մոտ: Այն ավարտվեց արևի խավարման պատճառով, ինչը կողմերը համարեցին աստվածային նշան: Պատերազմը դադարեց, երկու կողմերի միջև սահման ճանաչվեց Հալիս գետը, իսկ մինչև այն ընկած հողերը հանձնվեցին Երվանդականների թագավորությանը:

**նկ. Աշխարհի Բաբելոնյան քարտեզ (վրան ցույց է տրված Հայաստանը) (Ք.ա. VIդ.)**

Երվանդ Սակավակյացի և նրա որդի Տիգրանի օրոք Հայոց թագավորության սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև Մարաստան, իսկ հյուսիս- արևմուտքում՝ մինչև Սև ծովի ափերը: Այն իր մեջ ներառում էր ոչ միայն Վանի թագավորության ողջ տարածքը, այլև անդրեփրատյան մի շարք երկրամասեր: Նշանակալից էին թագավորության ռազմական ուժերը: Այն կարող էր մարտադաշտ դուրս բերել 40 հազար հետևակ և 8 հազար հեծյալ մարտիկներ, ինչն այն ժամանակներում մեծ ուժ էր: Արքունի գանձերը կազմում էին ավելի քան 3000 արծաթ տաղանդ[7]: Երվանդ Սակավակյացն ուներ երկու որդի՝ Տիգրան և Շավարշ, որոնցից առաջինին վիճակված էր մեծ դեր խաղալ Հայոց պատմության մեջ:

Հայկական պետությունն ամրապնդվեց օտար նվաճողների, մասնավորապես, նրա նախկին դաշնակից Մարաստանի դեմ մղած պայքարում: Չնայած Կյուրոսի արշավանքին՝ Հայաստանի Երվանդականների թագավորությունը կարողացավ պահպանել իր անկախությունը: Ավելին, նա շուտով հզոր դաշնակից է ձեռք բերում ի դեմս պարսից արքա Կյուրոս Մեծի, որն ապստամբեց մարական տիրապետության դեմ:

7 Մեկ տաղանդ արծաթը կշռում է շուրջ 32 կգ:

***Հայ-պարսկական ռազմաքաղաքական դաշինքը:*** Մարական պետության ուժեղացման և ընդարձական շրջանում հայոց Երվանդ Սակավակյաց թագավորը փորձեց լիովին ազատվել մարական ազդեցությունից և սկսեց ամրացնել թագավորության բերդերը: Մարական Աժդահակ թագավորը Հայաստան ուղերկեց պարսից արքա ապագա Կյուրոս Մեծին, որը վերոհիշյալ Կյուրոսի թոռն էր: Վերջինս կարողացավ ձեռբակալել հայոց թագավորի ընտանիքը և թագաժառանգ Տիգրանի միջնորդությամբ, որը նրա ընկերն էր եղել մարական արքունիքում, պայմանագիր կնքել ոչ շատ ծանր պայմաններով՝ տարեկան 100 արծաթ տաղանդ հարկ վճարելու և պատերազմի ժամանակ զորքի կեսը՝ 20 հազար հետևակ և 4 հազար հեծյալ զինվոր մարաց թագավորին տրամադրելու պայմանով: Կյուրոս Մեծն ինքը պատրաստվում էր ապստամբել մարական ըիրապետության դեմ, ուստի կամենում էր ձեռք բերել հայերի բարեհաճությունը: Շատ չանցած Կյուրոսն ապստամբեց մարական պետության դեմ, տապալեց այն և հիմք դրեց հին աշխարհի հզոր տերություններից մեկին՝ Աքեմենյան Պարսկաստանին: Նրան հակամարական պայքարում մեծապես օգնեց հայոց նոր գահակալը՝ նրա անձնական բարեկամ Տիգրանը: Ք.ա. 550 թ. Կյուրոս Մեծի ստեղծած Աքեմենյան պետությունը տարածվում էր Էգեյան և Միջերկրական ծովերից մինչև Հնդկաստանի արևմտյան երկրամասերը, Եգիպտոսից մինչև Կովկասյան լեռներ: Հայոց թագավորությունը՝ լինելով Կյուրոս Մեծի դաշնակիցը, իր արտոնյալ տեղն ուներ այդ տերության մեջ՝ շարունակելով մնալ գործնականում անկախ պետություն:

**նկ. Ռիտոններ (Ք.ա. V-IVդդ.)**

***Հայերի Ք.ա. 522–521 թթ. հակապարսկական ապստամբությունը:*** Քաղաքական վիճակն արմատապես փոխվեց Կյուրոս Մեծի և հայոց Տիգրան թագավորի մահից հետո, երբ իշխանության գլուխ եկավ Դարեհ Ա Վշտասպ թագավորը: Նրա գահ բարձրանալուն որպես պատասխան ապստամբեցին պարսից տերության հպատակ բոլոր երկրները, այդ թվում նաև Հայաստանը: Մեծ դժվարությամբ ճնշելով տերությանը համակած ապստամբությունները՝ Դարեհ Ա-ն, ի փառաբանություն՝ իր ապստամբների դեմ տարած հաղթանակների, փորագրել տվեց Բեհիսթունյան ժայռի եռալեզու արձանագրությունը: Վերջինիս պարսկերեն և էլամերեն մասերում Հայաստանն անվանվում է Արմինա, իսկ հայերը՝ արմինացի: Աքքադա-բաբելոներեն մասում Հայաստանն ավանդույթի ուժով շարունակում է կոչվել Ուրաշտու (իմացիր Ուրարտու): Ապստամբած Հայաստանը Դարեհ թագավորի զորքերին ցույց տվեց համառ ու կատաղի դիմադրություն: Հայերի ապստամբությունը հնարավոր եղավ ճնշել միայն հինգ արյունահեղ ճակատամարտերից հետո, որոնց վայրերը հայտնի չեն: Բանակներից մեկը ղեկավարում էր պարսից արքունիքի կողմից բարձր պատիվների արժանացած հայազգի Դադարշիշը, իսկ մյուսը՝ մի պարսիկ: Բեհիսթունյան արձանագրությունից պարզվում է, որ և ոչ մի երկիր այնպիսի համառ դիմադրություն ցույց չի տվել պարսկական զավթիչներին, ինչպես Հայաստանը: Պարսից զորավարները որոշակիորեն պարտություն են կրել չորս ճակատամարտերում և միայն հինգերորդ ճակատամարտից հետո երկիրը ճանաչել է Աքեմենյան Պարսկաստանի իշխանությունը: Դատելով ամեն ինչից՝ ապստամբության պատճառներից մեկն այն էր, որ պարսից արքունիքը վերացրել էր Հայոց թագավորությունը: Սակայն ապստամբությունը ճնշելուց հետո՝ նոր հուզումների տեղիք չտալու համար, պարսից թագավորը վերականգնում է Երվանդականների հպատակ թագավորությունը, որի թագավորները միաժամանակ վերածվում են պարսկական սատրապների:

Հետաքրքիր է, որ Բաբելոնիայում հակապարսկական ապստամբությունը ղեկավարել է հայազգի Արախան:

*Ընթերցանության համար*

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՐՎԱՆԴՅԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

«Բայց անցնենք այսուհետ գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը...

...Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ...

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, ...մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն»:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչպե՞ս է կոչվել հայկական բոլոր հողերը միավորած Հայոց թագավորությունը:**
2. **Ե՞րբ է հայ ժողովրդի կազմավորումը թևակոխում ավարտական փուլ:**
3. **Ինչպե՞ս էին զարգանում հայ-մարական հարաբերությունները:**
4. **Ի՞նչ կարգավիճակ ուներ Հայոց թագավորությունը Տիգրան Երվանդյանի օրոք:**
5. **Ինչիսի՞ն էին Հայոց թագավորության ռազմական ուժերը Երվանդականների իշխանության օրոք:**
6. **Ե՞րբ տեղի ունեցավ հայերի հակապարսկական ապստամբությունը: Ի՞նչ է հաղորդում այդ մասին Բեհիսթունյան արձանագրությունը:**

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

***Կարդացե՛ք լրացուցիչ նյութը:***
**Պատմահոր՝ Տիգրան թագավորին բնութագրող հատկապես ո՞ր հատկանիշն եք կարևորում: Փորձե՛ք հիմնավորել պատասխանը:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Սկյութներ • Պարույր թագավոր • Մեդիա (Մարաստան) • Բաբելոնիա•**
**• Երվանդական արքայատոհմ • Նյուքար Մադես • Արմավիր • Մաժակ (Կեսարիա) • Արմեններ (արամանիներ) • Կիաքսար • Աքեմենյան Պարսկաստան • Բեհիսթունյան արձանագրություն • Արմինա • Սատրապ • Դարեհ • Արախա •**

## *2. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ*

***Հայաստանն Աքեմենյան սատրապություն:*** Պարսից արքունիքը, խորապես գնահատելով երկրի ռազմական ներուժը և խուսափելով նոր ապստամբություններից, ստիպված եղավ ճանաչել Երվանդականների իշխանությունը Հայաստանում: Միաժամանակ պարսից թագավորը նրանց վերածեց պարսից սատրապների: Սակայն երբեմն առ երբեմն սատրապական իշխանությունը հանձնվում էր պարսից ավագանու ներկայացուցիչներին: Շուրջ երկու դար Հայաստանը հանդիսացել է Աքեմենյան Պարսկաստանի տերության սատրապություններից մեկը՝ զբաղեցնելով դրանց համակարգում կարևոր և պատվավոր տեղ: Հայաստանը, լինելով պարսից XIII սատրապության հիմնական երկիրը, պարսից արքունիքին տարեկան վճարել է 400 տաղանդ հարկ և պարսից բանակին հանձնել 20 հազար նժույգ, ինչը հավաստում է երկրի ոչ միայն մեծության, այլև հարստության մասին: Որպես Աքեմենյան տերության հպատակներ՝ Հայոց թագավոր-սատրապներն իրենց զորքերով մասնակցել են Պարսից տերության մղած պատերազմներին: Հատկապես հռչակված է եղել հայոց այրուձին:

**նկ. Հայերը Պերսեպոլիսի բարձրաքանդակներից մեկում**

Երվանդական արքայատոհմի ներկայացուցիչները՝ խնամիական կապերով կապված լինելով հանդերձ Աքեմենյան արքայատոհմի և պարսից մեծամեծ ընտանիքների հետ, մշտապես պահպանում էին իրենց արքայատոհմի սովորույթները և հայկականությունը:

***Հայաստանն ըստ Քսենոփոնի նկարագրության:*** Ք.ա. 401 թ. պարսից արքայի դեմ ապստամբում է նրա եղբայր Կյուրոս Կրտսերը, սակայն նա պարտվում է և սպանվում վճռական ճակատամարտում: Նրա զորքերի մեջ էր գտնվում հույն վարձկանների 10-հազարանոց (բյուր) մի զորաբանակ: Վերջինս Կյուրոսի սպանությունից հետո ստիպված էր երկիր վերադառնալ ոչ թե եկած երթուղով, որը բռնված էր պարսկական զորքերով, այլ նահանջել դեպի Սև ծովի ափերը Միջագետքի և Հայաստանի վրայով: Այդ զորաբանակի հրամանատարներից էր հույն գրող և զորավար Քսենոփոնը, որի «Անաբասիս» աշխատության մեջ բավականին հանգամանորեն պահպանվել է հայկական սատրապության նկարագրությունը: Հայոց թագավորությունը, որ շարունակում էր մնալ պարսկական սատրապություն, այդ ժամանակ բաղկացած էր երկու մասից, որոնք համապատասխանաբար կոչվում էին Արևելյան ու Արևմտյան Հայաստան:

Հայաստանի այդ ժամանակվա սատրապ Երվանդը, որ ամուսնացած էր Աքեմենյան արքայադստեր հետ, շարունակում էր միաժամանակ ներկայացնել հայոց թագավորական իշխանությունը: Նրա տեղապահներն էին սատրապության երկու վարչական շրջանների հյուպարքոսները, որոնցից մեկը ազգությամբ պարսիկ էր: Լինելով թվով սահմանափակ և գիտակցելով հայրենիք վերադառնալու ողջ դժվարությունները՝ հույները Հայաստանով անցնելիս շրջանցում էին ամրացված քաղաքները, բերդերն ու տաճարները, որոնց հետ բախումը կարող էր նրանց համար ճակատագրական լինել: Այդ պատճառով նրանք խուսափում էին անհարկի հնարավոր ընդհարումներից, գերադասում բանակել առատ մթերապաշար ունեցող և անպաշտպան գյուղերում: Քսենոփոնը նկարագրում է գյուղական տները, որոնք գետնափոր էին՝ մարդկանց և անասունների համար առանձին հարկաբաժիններով ու մուտքերով: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր գեղջավագը: Հույները Հայաստանում արձանագրում են գարեջրի գոյությունը:

**նկ. Սատրապ Օրոնտեսի և հյուպարքոս Տիրիբազի պատկերով դրամներ (Ք.ա. V դ.)**

Աքեմենյանների տիրապետության վերջին շրջանում կամ վերջինիս անկումից հետո Հայաստանը վարչականորեն բաժանվում է երկու անհավասար մասերի, որոնցից մեծը ստանում է Մեծ Հայք (իմացիր Մեծ Հայաստան), իսկ փոքրը՝ Փոքր Հայք (իմացիր Փոքր Հայաստան) անունը:

***Ընթերցանության համար***

## ՔՍԵՆՈՓՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ և ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ

«Տներն այստեղ գետնափոր էին. մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կային նաև ցորեն ու գարի և ընդեղեն և կրատերների (իմացիր կավանոթ) մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»:[8]

«Խեյրիսոփոսն ու Քսենոփոնը փոխադարձաբար իրար ողջունելուց հետո սկսեցին միասին հարցուփորձել գեղջավագին պարսկերեն խոսող թարգմանի միջոցով, թե այդ ինչ երկիր էր: Նա ասաց, թե Արմենիան է: Եվ դարձյալ հարցրին, թե ձիերը ում համար են բուծվում: Նա ասաց, թե՝ արքայի համար իբրև տուրք: Ասաց նաև, որ հարևան երկիրը խալյուբների երկիրն է և ցույց տվեց, թե որն է այնտեղ տանող ճանապարհը»:

8 Նկարագրությունը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է գարեջրին:

«Արքային պատկանող մեր անցած երկրների տիրակալները հետևյալներն էին. ...փասիանների և հեսպերիտների՝ Տիրիբազոսը. իսկ կարդուխները և խալյուբները և խալդայները և մակրոնները... ինքնավար են»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

**1. Աքեմենյան Պարսկաստանի ո՞ր սատրապության մեջ էր գտնվում Հայաստանը:**
**2. Ինչ հարկեր էր վճարում Հայաստանը Աքեմենյան արքունիքին:**
**3. Ո՞վ է նկարագրել Հայաստանը Ք.ա. V դարի վերջին:**
**4. Ե՞րբ հանդես եկան Հայաստանի տարածքում Մեծ Հայքը և Փոքր Հայքը:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Քսենոփոն • Արևելյան և Արևմտյան Հայաստան • Անաբասիս •**
**• Բյուր (10 հազար) • Գեղջավագ •**

## *3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ*

***Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, Աքեմենյան Պարսկաստանի անկումը, Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների ձևավորումը:*** Աքեմենյան տերությունը, չնայած արտաքին փայլին, նման էր կավե ոտքերով հսկայի: Գնալով ուժեղանում էին կենտրոնախույս ձգտումները, և տերության տարբեր մասերում հանդես եկան գործնականում անկախ ցեղեր ու ցեղախմբեր, որոնցից էին Հայաստանում գտնվող կարդուխները, խալդայները կամ սկյութները: Եվ մինչ օրեցօր թուլանում էր Աքեմենյան տերությունը, Բալկանյան թերակղզում գնալով ուժեղանում ու առնականանում էր Մակեդոնիայի ոչ մեծ թագավորությունը: Ռազմական վերափոխությունների շնորհիվ, որոնց մեջ կարևոր դեր ուներ փաղանգի (ֆալանգ) ստեղծումը, մակեդոնական բանակը դարձավ իր ժամանակի ամենամարտունակ բանակը: Իրեն բավարար չափով ուժեղ զգալով՝ Մակեդոնիայի թագավոր Ալեքսանդր Մեծը Ք.ա. 334 թ. իր բանակով անցավ սևծովյան նեղուցները և մեկ տարվա համառ կռիվներից հետո գրավեց Աքեմենյան տերության արևմտյան սատրապությունները: Աքեմենյան բանակներն առաջին լուրջ պարտությունը կրեցին Ք.ա. 333 թ. Իսոսի ճակատամարտում: Սակայն պարսից արքունիքն անկարող եղավ հետագա երկու տարիներին ուժեղացնելու երկրի պաշտպանությունը: Եվ երբ Ք.ա. 331 թվին հունա-մակեդոնական և պարսկական բանակները ճակատամարտ տվեցին Գավգամելայում, Ալեքսանդր Մակեդոնացին պարզապես ջախջախեց Դարեհ Գ-ի կողմից ղեկավարվող պարսկական բանակը: Ճակատամարտի ժամանակ Դարեհ Գ-ն փախուստի դիմեց՝ հուսալքության մատնելով իր զորքերին, և շատ չանցած սպանվեց իր իսկ մերձավորների ձեռքով:

Գավգամելայի ճակատամարտին մասնակցել են Մեծ Հայքի և Փոքր Հայքի զորաբանակները: Մեծ Հայքի զորքերը գլխավորում էր Երվանդ սատրապը:

**նկ. Ալեքսանդր Մակեդոնացու ոսկե դրամը (Ք.ա.Vդ.)**

Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը Հայաստան չմտան և շարունակեցին իրենց ռազմերթը դեպի Միջին Ասիա և այնուհետև՝ Հնդկաստան, որոնց նվաճումը մեծ դժվարություններ ստեղծեց հունա-մակեդոնական զորքերի համար: Հատկապես մեծ փորձություն էր նրանց համար մարտական փղերի դեմ պայքարելը: Արշավանքն ստիպված եղան դադարեցնել: Սակայն դրա արդյունքում նվաճվեց Աքեմենյան տերությունը, և ստեղծվեց մի նոր և տարածքով նրան գրեթե ոչնչով չզիջող պետություն, որն ընդունված է կոչել Ալեքսանդր Մակեդոնացու տերություն: Վերջինս իր պետության մայրաքաղաք դարձրեց վաճառաշահ Բաբելոն քաղաքը:

**նկ. Լատիներեն արձանագրություն Վաղարշապատից**

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները սոսկ ռազմական երևույթ չէին: Նրանք հեղաշրջիչ ազդեցություն ունեցան քաղաքական, տնտեսական և հասարակական հարաբերությունների

վրա: Արևելքի երկրներում լայնորեն տարածվեց հունարենը, որը վերածվեց իշխող խավերի խոսակցական լեզվի: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներով Առաջավոր Ասիայում սկսվեց մի նոր՝ հելլենիզմի (հունականության) դարաշրջանը:

Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չի արշավել, իսկ նրա ուղարկած բանակները ջախջախվել են հայերի կողմից: Մինչ Ալեքսանդր Մակեդոնացու զորքերը կռվում էին Արևելքում, Հայաստանի երկու մասերը՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը վերականգնեցին իրենց անկախությունը: Մեծ Հայքում իրեն թագավոր է հռչակում Գավգամելայի ճակատամարտի մասնակից Երվանդը, որով Երվանդական արքայատոհմը վերականգնում է իր լիակատար իշխանությունը: Փոքր Հայքում ևս թագավորական իշխանությունն անցնում է Երվանդական արքայատոհմին:

***Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը:*** Ալեքսանդր Մակեդոնացու տերությունն իրենից ներկայացնում էր տարբեր ժողովուրդների ու ցեղերի մի փխրուն միավորում, որոնք գտնվում էին զարգացման անհավասար մակարդակների վրա: Ոչ միայն նվաճված ժողովուրդներն էին փորձում տապալել օտար լուծը, այլև Ալեքսանդր Մակեդոնացու մահից (Ք.ա. 323 թ.) հետո իշխանության համար պայքար սկսվեց նրա զորավարների միջև: Ալեքսանդր Մակեդոնացու տերության տարածքում ստեղծվեցին մի քանի պետություններ, որոնց մեջ ամենախոշորը և, թերևս, ամենաուժեղը Սելևկյան տերությունն էր: Այն ժամանակի ընթացքում իրեն ենթարկեց Ալեքսանդրի տերության տարածքի մեծ մասը: Ծնունդ առնելով Հայաստանի հարևանությամբ՝ Սելևկյան պետությունը մեծ վտանգ էր ներկայացնում հայկական թագավորությունների համար՝ անընդհատ փորձելով տիրանալ Հայաստանին:

**նկ. Հունարեն արձանագրություն Արմավիրից**

Մեծ Հայքի Երվանդականները, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, իրենց պետության կենտրոնը դարձրին Այրարատյան դաշտը: Նրանք իրենց աթոռանիստը հաստատեցին Արմավիր քաղաքում, որը Վանի թագավորության շրջանում ստացել էր Արգիշտիխինիլի անունը: Մեծ զարգացում է ապրում քաղաքաշինությունը: Քանի որ Երասխի հունի փոխվելուց հետո Արմավիրը զրկվել էր բավարար ջրից, Երասխի և Ախուրյանի ջրկիցի շրջանում Երվանդ Դ թագավորը կառուցում է Երվանդաշատ քաղաքը և այն դարձնում պետության մայրաքաղաք:

**նկ. Կոմագենեի Մայր Դիցուհու արձանի գլուխը**

Ախուրյան գետի աջ ափին հիմնադրվում է խոշոր քաղաք-սրբավայր Բագարանը: Պետության քրմապետեր են նշանակվում թագավորի եղբայրները: Մեծ և Փոքր Հայքի թագավորությունները բռնում են զարգացման ու բարգավաճման ուղին:

***Ծոփք-Կոմագենեի թագավորության առաջացումը:*** Մեծ Հայքի Երվանդականները իշխում էին մի ընդարձակ երկրի, որը տարածվում էր Կուրի և Երասխի ջրկիցից մինչև Եփրատ՝ ներառելով Կոմագենե երկիրը: Սելևկյան տերության թագավորների նենգ քաղաքականության հետևանքով թագավորության առավել զարգացած երկրամասերից Ծոփքը և Կոմագենեն անջատվում են Մեծ Հայքից և վերածվում առանձին թագավորության: Այստեղ իշխանության գլուխ է անցնում Երվանդական արքայատոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Սամոսը (իմացի՛ր Շամ), որը դրամ է հատել: Նրան հաջորդում է նրա որդի Արշամը, որը նույնպես արծաթե դրամներ է հատել: Շամի և նրա հաջորդների օրոք թագավորությունում բուռն զարգացում են ապրում քաղաքները: Շամը Կոմագենեում կառուցում է Սամոսատ քաղաքը, իսկ Արշամը՝ Ծոփքում Արշամաշատը, որը դառնում է պետության մայրաքաղաքը: Շատ չանցած Ծոփք-Կոմագենեի թագավորությունը տրոհվում է՝ ծնունդ տալով առանձին Ծոփքի և Կոմագենեի թագավորություններին: Ք.ա. III դ. վերջին Հայաստանը, ցավոք, միասնական երկիր չէր: Նրա տարածքում գոյություն ունեին հայկական չորս թագավորություններ՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմագենեի:

Տրոհված և թուլացած Հայաստանն այլևս ի վիճակի չէր դիմադրելու Սելևկյանների նվաճողական քաղաքականությանը: Տրոհելով Հայաստանն առանձին թույլ թագավորությունների՝ Սելևկյանները որոշակի քայլեր են ձեռնարկում Հայաստանը գրավելու ուղղությամբ: Նրանց հաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել Հայկական բոլոր թագավորություններում՝ Մեծ Հայքում կառավարիչ նշանակելով Արտաշեսին, իսկ Ծոփքում՝ Զարեհին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով ինչ դարաշրջանի սկիզբ դրվեց Առաջավոր Ասիայում:**
2. **Ինչ օգուտներ քաղեցին հայերը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից:**
3. **Հայկական ինչ թագավորություններ գոյություն ունեին Ք.ա. III դարի երկրորդ կեսին:**
4. **Թվարկեք Երվանդակաների օրոք Հայաստանում կառուցված քաղաքները:**
5. **Ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում Սելևկյանները Հայաստանի նկատմամբ:**

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Ինչը հնարավորություն տվեց Ալեքսանդր Մակեդոնացուն հեշտությամբ ջախջախել պարսկական բանակը:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Կարդուխներ • Խալդայներ • Մակեդոնիա • Փաղանգ • Իսոս • Գավգամելա •**
**• Ալեքսանդր Մակեդոնացի • Երվանդաշատ • Կոմագենե • Սամոս (Շամ) •**
**• Արշամ • Սամոսատ • Արշամաշատ •**

**5-րդ թեմայի ամփոփում**

1. Ք.ա. VII դարի վերջերին Վանի թագավորությունը խիստ թուլացավ: Վանի թագավորության փլատակների վրա հանդես եկան մի շարք իշխանություններ, որոնց մեջ սկսեց առանձնանալ Պարույրի թագավորությունը: Սակայն շուտով Հայաստանն իրենց իշխանության տակ միավորեցին Երվանդական արքայատոհմի ներկայացուցիչները: Հայոց թագավորությունն աջակցեց Մարական պետության դեմ ապստամբած պարսից թագավոր Կյուրոս Մեծին՝ դառնալով նրա դաշնակիցը: Ավելի ուշ Հայաստանը վերածվեց Աքեմենյան աշխարհակալ տերության XIII սատրապության՝ շարունակելով միաժամանակ գոյատևել որպես ենթակա թագավորություն:
2. Այս շրջանում ավարտվեց հայ ժողովրդի կազմավորումը: Հայերն իրենց հայ էին կոչում, իսկ հարևանները՝ արմեն կամ արմանիկ (հայոց Արամանի թագավորի անունով):
3. Դարեհ Ա-ի օրոք Հայաստանը մեծ պայքար մղեց Աքեմենյան տիրապետությունը թոթափելու համար և միայն հինգ արյունահեղ ճակատամարտից հետո ստիպված եղավ ենթարկվել նրան: Հայերի և նրանց ապստամբության մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանել Դարեհ Ա-ի թողած Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը և հույն պատմիչ Քսենոփոնը:
4. Ալեքսանդր Մակեդոնացին Ք.ա. 334-331 թթ. կործանեց Աքեմենյան տերությունը: Հայերը մասնակցեցին Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտին և պարսիկների կրած պարտությունից հետո հռչակեցին Մեծ Հայքի և Փոքր Հայքի անկախությունը: Այնտեղ գահ բարձրացան Երվանդական արքայատոհմի ներկայացուցիչները: Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չի արշավել, իսկ նրա ուղարկած զորքերը հայերից պարտություն են կրել :
5. Ալեքսանդր Մակեդոնացու տերության տարածքում հանդես եկած Սելևկյանների պետությունը վարում է Հայաստանը տրոհելու և նրա ուժերը ջլատելու քաղաքականություն: Դրա հետևանքով Ք.ա. III դարի վերջերին Հայաստանում ձևավորվել էին չորս հայկական թագավորություններ՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմագենեի: Դրանք Ք.ա. III դարի վերջին և II դարի սկզբին ստիպված էին ենթարկվել Սելևկյաններին:

# **ԹԵՄԱ 6.** ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՏԱՇԵՍ Ա

## *1. ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԻԱՎՈՐԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

***Արտաշես Ա-ի գահակալումը:*** Ք.ա. II դ. սկզբներին Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունները բավականին սրվել էին: Սելևկյանները լայն ծրագրեր էին մշակել Փոքր Ասիան նվաճելու և ապա դեպի Եվրոպա արշավելու ուղղությամբ: Նվաճողական ծրագրեր ուներ նաև Հռոմեական հանրապետությունը: Այն իր հերթին ցանկանում էր նվաճել Փոքր Ասիան, ջախջախել Սելևկյաններին և իր տիրապետությունը հաստատել միջերկրածովյան ավազանում: Կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք.ա. 190 թ. Մագնեսիայի մոտ, որտեղ Սելևկյանները ծանր պարտություն կրեցին:

**նկ. Արտաշես Ա-ի սահմանաքարը արամեերեն արձանագրությամբ:**

Մեծ Հայքի և Ծոփքի սելևկյան կառավարիչներ Արտաշեսն ու Զարեհն անմիջապես օգտվեցին Սելևկյանների պարտությունից և Ք.ա. 189 թ. իրենց անկախ թագավորներ հռչակեցին: Նրանց այդ գործողությունները խրախուսվեցին Հռոմի կողմից, որն անմիջապես ճանաչել է նրանց անկախությունը: Նույն այդ ժամանակ իրենց անկախությունն են վերականգնել նաև Փոքր Հայքի և Կոմագենեի հայկական թագավորությունները:

Այսպիսով, Երվանդականների թագավորության անկումից ընդամենը մեկ տասնամյակ անց, Մեծ Հայքը և Ծոփքը վերականգնեցին իրենց անկախությունը: Մեծ Հայքում հաստատվեց արքայական մի նոր հարստության, որի հիմնադիրը դարձավ Արտաշես Ա-ն:

Արտաշես Ա-ն (189-160) հայոց պատմության ամենանշանավոր գործիչներից է: Նա անջնջելի հետք և հիշատակ է թողել մեր ժողովրդի պատմության մեջ: Իզուր չէ, որ նա կրել է «Մեծ», «Աշխարհակալ», «Բարի» պատվատիտղոսները, որոնք վկայում են արքայի նկատմամբ ժողովրդի տածած անսահման սիրո մասին: Միևնույն ժամանակ Արտաշեսը լայն ճանաչում է ունեցել Հին աշխարհում. հունա-հռոմեական բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են նրա գործունեությանը:

**նկ. Մայրաքաղաք Արտաշատի ավերակները**

***Արտաշես Ա-ն և հայկական հողերի մեծ մասի միավորումը:*** Մինչ Արտաշես Ա-ի գահակալությունը հարևան երկրները՝ օգտվելով Հայաստանի թուլացումից, զավթել էին նրա ծայրամասային երկրամասերը: Արտաշեսը և Զարեհը ձեռնամուխ եղան հայկական հողերի վերամիավորմանը: Հատկապես եռանդուն էր գործում Արտաշեսը: Նա ոչ միայն վերամիավորեց Մեծ Հայքից զավթված տարածքները, այլև քայլեր ձեռնարկեց իր թագավորությանը միացնելու նաև Ծոփքը, Կոմագենեն և Փոքր Հայքը:

Իր թագավորության հենց սկզբում Արտաշեսն արշավանք է ձեռնարկում դեպի Արևելք և հասնում Կասպից ծովի ափերը: Նա այստեղ Մեծ Հայքին է միացնում Կասպքը (Փայտակարանը) և մինչև Ուրմիո լճի ափերն ընկած հողերը: Ապա արշավանք է ձեռնարկում դեպի հյուսիս՝ Վիրք, որը զավթել էր հայկական հինավուրց Գուգարք նահանգը: Հայոց զորավար Սմբատ Բագրատունին ջախջախում է վրացական բանակը և վերադարձնում զավթված տարածքները: Վրացական կողմը պարտավորվում է «դրամ հատել Արտաշես արքայի պատկերով» և զորք տրամադրել: Արևմուտքում Արտաշեսը գրավեց և Մեծ Հայքին միացրեց Կարնո երկրամասն ու Դերջան գավառը: Հարավում երկարատև ու արյունահեղ կռիվներից հետո Արտաշեսն ազատագրեց Սելևկյանների կողմից բռնազավթված Տմորիք երկրամասը:

Ծոփքի արքա Զարեհի մահից հետո, որն իր հերթին ազատագրել էր հայկական երկրամասերն արևմուտքում, Արտաշեսը փորձեց Ծոփքը նույնպես միացնել Մեծ Հայքին: Այստեղ, սակայն, հանդիպեց Ծոփքի դաշնակից Կապադովկիայի համառ դիմադրությանը, որի հետևանքով անորոշ ժամանակով հետաձգվեց Ծոփքի միացումը:

Արտաշեսի ձեռնարկումների շնորհիվ հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության՝ Մեծ Հայքի թագավորության մեջ: Այդ պատճառով է, որ հույն պատմիչը նրան անվանում է «Հայաստանի մեծ մասի կառավարիչ», իսկ մի այլ մատենագիր՝ հույն աշխարհագետ Ստրաբոնը, գրում է, որ «Հայաստանը ... աճել է Արտաշեսի ջանքերով... և այստեղ բոլորը միալեզու են», այսինքն՝ հայալեզու են:

***Մեծ Հայքի թագավորության միջազգային հեղինակության աճը:*** Հայկական հողերի մեծ մասի միավորումով Մեծ Հայքի թագավորությունը վերածվեց Առաջավոր Ասիայում պատկառելի ուժ ներկայացնող մի պետության:

Ք.ա. 183-179 թթ. Փոքր Ասիայում պատերազմ բռնկվեց մի կողմից՝ Պոնտոսի ու Փոքր Հայքի և մյուս կողմից՝ Կապադովկիայի, Բյութանիայի ու նրանց դաշնակիցների միջև: Մեծ Հայքը չեզոքություն պահպանեց, բայց ակտիվորեն ներազդեց կողմերի վրա՝ պատերազմը դադարեցնելու համար: Հաշտության պայմանագրի կնքմանը, որպես հեղինակավոր ու հարգված գահակալ, դատավորի կարգավիճակով հրավիրվեց նաև Արտաշես Ա-ն: Դիվանագիտական նուրբ ու ճշգրիտ քայլերով Արտաշեսը կարողացավ ընդարձակել Փոքր Հայքի տարածքը Պոնտոսի հաշվին՝ հետագայում այն իր թագավորությանը միացնելու հեռահար ծրագրով: Իսկ երբ Մարաստանի Սելևկյան սատրապն ապստամբեց և իրեն հայտարարեց անկախ թագավոր, Արտաշես Ա-ն Սելևկյաններին թուլացնելու նպատակով անմիջապես օգնության ձեռք մեկնեց նրան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ովքե՞ր էին Մեծ Հայքի և Ծոփքի կառավարիչները Մագնեսիայի ճակատամարտի նախօրյակին:**
2. **Ե՞րբ անկախացան Մեծ Հայքն ու Ծոփքը, և ովքե՞ր ճանաչեցին նրանց անկախությունը:**
3. **Ի՞նչ վերամիավորիչ քաղաքականություն իրականացրին Արտաշեսը և Զարեհը: Ի՞նչ ուղղություններով ընթացան նրանց արշավանքները:**
4. **Ինչպե՞ս եք գնահատում հայկական հողերի միավորումը:**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Տետրում գծե՛ք աշխարհի չորս կողմերը ցույց տվող սլաքները և յուրաքանչյուր սլաքի մոտ գրե՛ք հայկական այն տարածքների անվանումները, որոնք միավորեց Արտաշես Ա-ն:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Մագնեսիա • Անտիոքոս Գ • Արտաշես Ա • Զարեհ •**
**• Արտաշիսյան արքայատոհմ •**

## *2. ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ*

***Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը:*** Արտաշես Ա-ն հայտնի է նաև իր բարենորոգչական և վերափոխիչ քաղաքականությամբ, որ նա իրականացրել է Մեծ Հայքի տնտեսական, վարչական, ռազմական և այլ բնագավառներում: Կարևոր նշանակություն ունեցավ հատկապես երկրի նոր մայրաքաղաք Արտաշատի հիմնադրումը: Քաղաքը կառուցվել է Այրարատյան դաշտում, Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում[9]:

**նկ. Բրոնզե արձանիկներ Արտաշատից:**

9 Հետագայում Մեծամորը փոխել է իր հունը, որի հետևանքով հիշյալ գետերի ջրկիցը տեղափոխվել է արևմուտք:

Արտաշատի հիմնադրման վերաբերյալ արժեքավոր վկայություն է թողել Պատմահայր Մովսես Խորենացին. «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»: Հույն պատմիչ Պլուտարքոսի հավաստմամբ, քաղաքի տեղանքն ընտրել է Կարթագենի վտարանդի զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ ապաստան էր գտել Հայաստանում: Նա է նաև կազմել քաղաքի հատակագիծը և, թագավորի առաջարկությամբ, գլխավորել շինարարական աշխատանքները. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»: Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ քաղաքը կառուցվել է ներկայիս Խոր Վիրապի տեղում և շրջակայքում, առևտրական նշանավոր տարանցիկ մայրուղի-ների խաչմերուկում: Քաղաքը շրջափակված է եղել բարձր, հզոր պարիսպներով, խրամով և պատվարով: Քաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հռոմեացիներն այն անվանել են «Հայկական Կարթագեն»:

**նկ. Արձաններ Դվինից (Ք.ա. II-I)**

Քաղաքը բնակեցնելու համար Արտաշեսը կարգադրում է այնտեղ տեղափոխել Երվանդաշատի բնակչության և ռազմական արշավանքների ժամանակ գերեվարվածների մի մասին: Շուտով Արտաշատը դարձավ Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական և մշակութային նշանա-վոր կենտրոններից մեկը: Արտաշես Ա-ի նախաձեռնությամբ թագավորությունում կառուցվեցին մի շարք այլ քաղաքներ, ինչպես օրինակ՝ Զարեհավանը, Զարիշատը և այլն: Այդ քաղաքներն անվանվել են ի պատիվ Արտաշեսի հոր՝ Զարեհի:

***Հողային հարաբերությունների կարգավորումը:*** Արտաշես Ա-ի բարենորոգումների շարքում կարևոր նշանակություն է ունեցել հողային հարաբերությունների կարգավորումը: Խնդիրն այն է, որ սաստիկ սրվել էին հարաբերությունները գյուղական համայնքների և մասնավոր հողատերերի միջև: Վերջիններս տարբեր եղանակներով փորձում էին զավթել համայնական հողերը և գյուղացիներին զրկել իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից: Հողազուրկ գյուղացին այլևս չէր կարող հարկ վճարել պետությանը և ի վիճակի չէր զինվորագրվել բանակին: Արտաշեսը՝ հասկանալով դրա ողջ վտանգավորությունը երկրի համար, կարգադրեց սահմանազատել համայնքի և մասնավոր տնտեսությունների հողերը: Արտաշեսի հրամանով համայնքային և մասնատիրական հողերի միջև սահմանաքարեր կանգնեցվեցին, որով փորձ արվեց պաշտպանել համայնքի իրավունքները: Արտաշեսի թողած սահմանաքարերի մի մասը հայտնաբերվել է, իսկ դրանցից մի քանիսը ցուցադրվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

***Այլ բարենորոգումներ:*** Արտաշես Ա-ն զգալի ջանքեր թափեց ռազմական գործի վերա-կառուցման ուղղությամբ: Նա ստեղծեց կանոնավոր ու լավ զինված բանակ:

Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար նա կազմեց չորս զորավարություններ: Մովսես Խորենացին այդ մասին վկայում է. «Զորքի իշխանությունն էլ (Արտաշեսը) չորս մասի է բաժանում. արևելյան կողմի զորքը թողնում է (իր որդի) Արտավազդին, արևմտյանը տալիս է (իր որդի) Տիրանին, հարավայինը վստահում է (իր զորավար) Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ (իր որդի) Զարեհին»:

**նկ. Հելլենիստական տաճարի հիմնապատի շարվածք: Արտաշատ (Ք.ա.II դ.)**

Պետության կառավարումը բարելավելու նպատակով Արտաշես Ա-ն թագավորությունը բաժանեց 120 վարչական շրջանների կամ գավառների, որոնք հունա-հռոմեական հեղինակներն անվանում էին ստրատեգիաներ կամ պրեֆեկտուրաներ: Սրանց մի մասում հետագայում ձևա-վորվեցին նախարարական իշխանությունները: Արտաշեսը կարգավորեց արքունի գործակալու-

թյունները: Երկրի կառավարման կարևորագույն գործակալությունները՝ սպարապետությունը և հազարապետությունը, նա հանձնեց իր մերձավորներին:

Թագավորական իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում բարձրացնելու նպատակով Արտաշես Ա-ն սահմանեց թագավորի նախնիների պաշտամունքի կարգը: Արտաշատում կառուցեց Հայոց աշխարհի հովանավոր Անահիտ աստվածուհու տաճարը: Այնտեղ կանգնեցվեցին Արտաշեսի նախնիների արձանները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր: Տաճարներ կառուցվեցին նաև Հայաստանի մյուս քաղաքներում, ուր, բացի հայոց աստվածներից, դրվեցին նաև Զևսի, Հերակլեսի, Ապոլոնի, Աթենասի, Ափրոդիտեի և հունական այլ աստվածների արձանները:

Արտաշեսը ճշգրտել է տվել օրացույցը, հստակեցրել տոմարը և կատարել բազում այլ բարեփոխումներ:

Արտաշեսը հայտնի է «Բարի» և «Բարեպաշտ» տիտղոսներով: Կատարած բազում նշանավոր գործերի համար Արտաշես Ա-ի մասին ժողովուրդը ստեղծել է երգեր, վեպեր, ուր գովերգվել են նրա իմաստությունն ու քաջությունը, շինարարական գործունեությունը, շեշտվել նրա սերը հայրենիքի նկատմամբ: Արտաշեսի նկատմամբ ժողովրդի սերը արտահայտվել է նաև նրանում, որ հայերն իրենց օտար ծագումով, բայց սիրելի թագավորներին անվանել են Արտաշես (Զենոն, Տրդատ Ա և այլն):

Արտաշեսը մահացել է Ք.ա. շուրջ 160 թվականին:Նա իր հաջորդներին թողեց տնտեսապես հարուստ, բարգավաճ և ռազմական առումով հզոր երկիր:

***Ընթերցանության համար***

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երվանդի մահից հետո Սմբատը մտնելով խուզարկում է արքունական գանձերը: Սանատրուկ թագավորի թագը գտնելով՝ դնում է Արտաշեսի գլուխը և թագավորեցնում է ամբողջ Հայաստանի վրա... Արտաշեսը թագավորությունն ստանալով՝ պարգևներ է տալիս մարաց և պարսից զորքերին և ուղարկում իրենց երկիրը: Նույնպես տալիս է քաջ և պատվավոր Արգամին նրան խոստացած երկրորդական գահը, նաև հակինթներով զարդարված պսակ, երկու ականջներին գինդեր, մի ոտքին կարմիր ագանելիք, իրավունք ունենալ գործածելու ոսկե գդալ և պատառաքաղ և ոսկեղեն գավաթներով խմելու: Եվ այս պատիվներից ոչ պակաս տալիս է իր դայակ Սմբատին, բացի երկու գինդերից և կարմիր կոշիկից: Եվ բացի նրա հայրենական թագակապ ասպետությունից և արևմտյան զորքի իշխանությունից՝ նրան է վստահում հայոց բոլոր զորքերը, մեր երկրի բոլոր գործակալները և ամբողջ արքունական տունը»:

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց Ապոլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նաև Երվանդի քաղաքի ամբողջ վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց

ինքն էր շինել, բերում է Արտաշատ, և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչ պատվատիտղոսներ է կրել Արտաշիսյան արքայատոհմի հիմնադիր Արտաշես Ա-ն:**
2. **Ինչ մայրաքաղաք հիմնադրեց Արտաշես Ա-ն և որտեղ:**
3. **Ինչ ռազմական, վարչական և տնտեսական վերափոխություններ կատարեց Արտաշես Ա-ն Մեծ Հայքում:**

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Արտաշատը բնակեցնելու համար ինչ քայլեր ձեռնարկեց Արտաշես Ա-ն:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Բարենորոգում • Պլուտարքոս • Հաննիբալ • Խոր Վիրապ •**
**• Հայկական Կարթագեն • Զարեհավան • Զարիշատ • Սահմանաքար •**
**• Գործակալություն • Սպարապետություն • Հազարապետություն •**

**6-րդ թեմայի ամփոփում**

1. Օգտագործելով Հռոմից պարտված Սելևկյան տերության թուլացումը՝ Արտաշեսն ու Զարեհն իրենց անկախ հռչակեցին՝ հիմք դնելով Մեծ Հայքի և Ծոփքի թագավորություններին: Արտաշես Ա-ն հիմք դրեց Արտաշիսյանների արքայատոհմին, որը թագավորեց Մեծ Հայքում գրեթե 190 տարի (Ք.ա. 189-1 թթ.): Արտաշես Ա-ն միավորեց հայկական հողերի մեծ մասը և վերականգնեց Մեծ Հայքի կենտրոնաձիգ թագավորությունը:
2. Հաստատվելով Այրարատյան դաշտում՝ Արտաշես Ա-ն Երասխի և Մեծամորի ջրկիցի շրջանում հիմնադրեց թագավորության նոր մայրաքաղաք Արտաշատը: Նա անցկացրեց վարչական, ռազմական, հողային և այլ բարեփոխումներ, որոնք մեծ նշանակություն ունեցան Հայաստանի հետագա վերելքի և բարգավաճման համար:

# ԹԵՄԱ 7. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾ

## *1. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ*

***Տիգրան Բ-Ի գահակալությունը: Ծոփքի միավորումը:*** Արտաշես Ա-ին հաջորդեց նրա ավագ որդին՝ Արտավազդ Ա-ն (160-115), որը թագավորեց խաղաղությամբ: Միայն կառավարման վերջին տարիներին բռնկվեց հայ-պարթևական մի կարճատև պատերազմ, որում Հայոց թագավորությունը պարտություն կրեց: Ք.ա. 115 թ. անժառանգ Արտավազդ Ա-ն ստիպված էր եղբորորդուն՝ Տիգրանին, որպես պատանդ հանձնել պարթևներին:

**նկ. Տիգրան Մեծի դրամը**

Արտավազդ Ա-ի մահից հետո թագավորեց նրա կրտսեր եղբայր Տիրանը (Տիգրան Ա 115-95): Պատանդության մեջ թագաժառանգ Տիգրանը մնացել է շուրջ 20 տարի և հայրենիք է վերադարձել հոր՝ Տիգրան Ա-ի մահից հետո: Իր ազատության դիմաց նա ստիպված եղավ պարթևներին զիջել Մեծ Հայքի հարավ-արևելքում գտնվող Յոթանասուն հովիտներ կոչված տարածքը:

Տիգրան Բ-ն (95-55) գահ բարձրացավ 45 տարեկան հասակում: Նրա առաջնահերթ խնդիրը հայկական բոլոր տարածքները մեկ ընդհանուր պետության մեջ միավորելն էր: Արտաշես Ա-ն հիմնականում լուծել էր այդ կարևոր խնդիրը՝ բացառությամբ Ծոփքի և Փոքր Հայքի թագավորությունների: Այժմ Տիգրան Բ-ն եռանդուն գործունեություն ծավալեց շարունակելու իր պապի միավորիչ քաղաքականությունը: 94 թ. Տիգրանի բանակները մտան Ծոփք և այն միացրեցին Մեծ Հայքին: Ծոփքի թագավորն սպանվեց. Մեծ Հայքի թագավորությունը դուրս եկավ Եփրատի ափերը: Գետից այն կողմ տարածվում էր Կապադովկիայի թագավորությունը, որը շուտով հայտնվեց Տիգրան Բ-ի ուշադրության կենտրոնում:

**նկ. Միհրդատ Զ Եվպատորի արծաթե դրամ**

***Հայ-պոնտական դաշինքը և Կապադովկիայի նվաճումը:*** Հայկական բոլոր հողերը միավորելու համար անհրաժեշտ էր Մեծ Հայքին միացնել նաև Փոքր Հայքը: Սակայն այն մինչ այդ միացվել էր Պոնտոսի թագավորությանը: Վերջինս Փոքր Ասիայի հզոր պետություններից էր, ուներ լավ վարժեցված ու մարտունակ բանակ: Պոնտոսի թագավորն էր եռանդուն զորավար Միհրդատ Զ Եվպատորը: Իր ամբողջ գործունեության ընթացքում նա Հռոմի դեմ հետևողական պայքար է մղել Փոքր Ասիայում մի ընդարձակ և հզոր հելլենիստական պետություն ստեղծելու նպատակով: Այդ ճանապարհին գլխավոր խոչընդոտը Հռոմն էր, ուստի իր հակահռոմեական պայքարում Միհրդատը որոշեց դաշնակցել Տիգրան Բ-ի հետ:Այդ շրջանում թեև հայոց թագավորը Հռոմի հետ որևէ վիճելի խնդիր չուներ, սակայն, աշխարհակալական ծրագրեր հետապնդելով, կողմնակից էր երկու երկրների մերձեցմանը: Ահա թե ինչու Տիգրան Բ-ն ու Միհրդատ Պոնտացին արագ համաձայնության եկան միմյանց հետ:

Ք.ա. 94 թ. Արտաշատ ժամանեցին պոնտական բանագնացները: Կնքվեց հայ-պոնտական պայմանագիր, որի համաձայն՝

1. Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:
2. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքը և բնակչությունը՝ Հայաստանը:
3. Դաշինքն ամրապնդելու նպատակով Միհրդատն իր դուստր Կլեոպատրային կնության տվեց Տիգրան Բ-ին:

Հավատարիմ հայ-պոնտական դաշինքին՝ 93 թ. հայկական զորքերը ներխուժեցին Կապադովկիա և ռազմակալեցին այն: Ճիշտ է, Հռոմի զինված միջամտությամբ հաջողվեց վերականգնել Կապադովկիայի թագավորությունը, սակայն վերջինս մեծապես թուլացավ, իսկ Հայոց թագավորությունը ձեռք բերեց հսկայական ավար և մեծ թվով գերիներ:

**նկ. Միհրդատ Բ Արշակունու արծաթե դրամը**

***Պարթևստանի ջախջախումը:*** Մեծ Հայքի թագավորության և Պոնտոսի մերձեցումը, հայերի ռազմական հաջող գործողությունները Կապադովկիայում ստիպեցին Հռոմին մերձենալու Պարթևստանին: Նրանց միջև կնքվեց համաձայնագիր, որն ուղղված էր Հայաստանի ու Պոնտոսի դեմ: Տիգրան Բ-ի նվաճողական ծրագրերի իրականացմանը խանգարում էր հատկապես Պարթևստանը, որի թագավոր Միհրդատ Բ-ն կամենում էր գերիշխանություն հաստատել Մեծ Հայքի թագավորության նկատմամբ: Սակայն Միհրդատ Բ-ի կյանքի վերջին տարիներին սկսված ներքաղաքական պայքարի հետևանքով թագավորական իշխանությունը Պարթևստանում զգալիորեն թուլացավ: Իսկ երբ նա մահացավ, Տիգրանն անմիջապես հարձակվեց Պարթևստանի վրա և առաջին հերթին հետ վերադարձրեց հայկական Յոթանասուն հովիտները: Այնուհետև հայկական զորքերը մտան Պարթևստանին ենթակա Ատրպատականի թագա-

վորություն և առանց մեծ դժվարության գրավեցին այն: Շարժվելով հարավ-արևելք՝ հայկական բանակը գլխովին ջախջախեց պարթևների զորքը և պաշարեց պարթևական թագավորների ամառային նստավայր Էկբատանը: Պարթևական թագավոր Գոդերզ Բ-ն ստիպված հաշտություն խնդրեց: Հաշտության պայմանագրի համաձայն, պարթևները հօգուտ Հայաստանի հրաժարվում էին Մարաստանից և Հյուսիսային Միջագետքից՝ պահելով միայն Էկբատան ամառային աթոռանիստը: Շատ կարևոր է, որ պարթևաց արքան հրաժարվում էր նաև արքայից արքա տիտղոսից, որն այսուհետև կրելու էին Տիգրանն ու նրա հաջորդները: Դրանով պարթևները փաստորեն ճանաչում էին Հայոց թագավորության գերիշխանությունը:

Այնուհետև, հայկական բանակը մեկը մյուսի հետևից գրավեց Հյուսիսային Միջագետքի երկրները՝ Կորդուքը, Ադիաբենեն, Միգդոնիան, Օսրոենեն:

***Ասորիքի գրավումը:*** Հյուսիսային Միջագետքի գրավմամբ Տիգրան Բ-ի տերությունը ընդհուպ սահմանակցեց Սելևկյան պետությանը: Նրանց բաժանում էր միայն Եփրատ գետը: Երբեմնի հզոր Սելևկյան թագավորությունն ապրում էր խոր ճգնաժամ: Միմյանց հաջորդող ու անընդհատ կրկնվող ներքին պատերազմները ծայր աստիճան թուլացրել էին երկիրը, որտեղ միաժամանակ հանդես էին եկել 3-4 գահակալներ: Չկարողանալով հաղթահարել այդ ճգնաժամը՝ երկրի ավագանին ելքը տեսնում էր արտաքին որևէ տիրակալի իշխանությունը ընդունելու մեջ: Ի վերջո ընտրությունը կանգ առավ Հայոց թագավոր Տիգրան Բ-ի թեկնածության վրա, որի առավելությունը, պատմիչի խոսքերով՝ «ռազմական հզոր ուժ ունենալն էր»:

Ք.ա. 84 թ. հայկական բանակներն անարգել մտան Ասորիք: Տիգրանն Անտիոքում բազմեց Սելևկյանների գահին ու այստեղ խաղաղությամբ իշխեց շուրջ երկու տասնամյանկ:

Ասորիքի (Սիրիայի) միացումը հնարավորություն ստեղծեց գրավելու Կոմագենեն և Կիլիկիան, և ապա՝ նաև Փյունիկիան: Ի վիճակի չլինելով դիմադրելու Հայոց թագավորի բանակներին՝ Հայաստանի գերիշխանությունն ընդունեցին Հրեաստանը և մի քանի այլ երկրներ: Տիգրանին համառ դիմադրություն ցույց տվեցին միայն Միջերկրականի ծովափնյա քաղաքները, որոնցից վերջինը՝ Պտղոմայիսը, նա գրավեց միայն 71 թվականին: Այստեղ գերի վերցվեց Սելևկյան Սելենե թագուհին, որն ավելի ուշ մահապատժի ենթարկվեց Տիգրանի հրամանով:

Հայկական տերության սահմանները հասան Եգիպտոս, որը հայտնվեց Հայոց թագավորի հետաքրքրությունների շրջանակում, իսկ Պտղոմեոս XII-ը գահ բարձրացավ հայոց թագավորի օգնությամբ: Դժվար չէ տեսնել, որ Տիգրանն այդ երկրի նկատմամբ ուներ հեռահար ծրագրեր, որոնք սակայն չիրականացան քաղաքական իրադրության կտրուկ փոփոխության պատճառով:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչպես հայտնվեց Տիգրանը պարթևական պատանդության մեջ:**
2. **Ինչ տարածքներ զիջեց Տիգրան Բ-ն պարթևներին հայկական գահ բարձրանալու համար:**
3. **Հայկական ինչ տարածքներ միավորեց Մեծ Հայքին Տիգրան Բ-ն գահակալության սկզբում:**
4. **Ո՞ւմ հետ դաշնակցեց Տիգրան Մեծը և քաղաքական ինչ նպատակներով:**
5. **Ինչո՞ւ Սելևկյանների պետությունը կամովին ընդունեց Տիգրան Մեծի իշխանությունը:**
6. **Ինչ նվաճումներ կատարեց Տիգրան Մեծը մինչև Ք.ա. 70 թվականը:**

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Ձեր կարծիքով՝ որո՞նք էին այն նախադրյալները, որոնք օգնեցին Տիգրան Մեծին կատարել իր հսկայածավալ նվաճումները և ստեղծել աշխարհակալ տերություն:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Արտավազդ Ա • Տիգրան Ա • Միհրդատ Բ • Միհրդատ Զ Եվպատոր •**
**• Ատրպատական • Էկբատան • Գոդերձ Բ • Արքայից արքա • Կորդուք •**
**• Ադիաբենե • Միգդոնիա • Օսրոենե • Կոմագենե • Կիլիկիա • Փյունիկիա •**
**• Պտղոմայիս • Սելենե թագուհի •**

## *2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ*

***Հայկական տերության տարածքը, բնույթը, բնակչությունը:*** Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով Առաջավոր Ասիայում ստեղծվեց աշխարհակալ մի նոր տերություն: Այն տարածվում էր Եգիպտոսից մինչև Կովկասյան լեռներ և Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով: Նրա գերիշխանությունն էին ընդունում մինչև Միջին Ասիա և Հնդկաստան ընկած երկրներն ու ցեղերը: Այդ տերության մեջ էին մտնում Վիրքը, Աղվանքը, Ատրպատականը, Ադիաբենեն, Օսրոենեն, Կոմագենեն, Ասորիքը, Փյունիկիան, Դաշտային Կիլիկիան և այլ երկրներ: Տիգրան Մեծի գերիշխանությունն ընդունում էին մի շարք այլ թագավորություններ՝ Պարթևստանը, Հրեաստանը, Անդրկասպյան սկյութներն ու Պարսից ծոցի ափերին բնակվող արաբական ցեղերը: Ինչպես հույն պատմիչն է հավաստում, Տիգրան Բ-ի տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով:

Տիգրան Մեծի տերությունը հելլենիստական պետություն էր և հիշեցնում էր Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տերությունները: Հայկական տերությունը բազմազգ և զարգացման ամենատարբեր աստիճանների վրա գտնվող երկրների մի ամբողջություն էր: Բնականաբար, տերության միջուկը կազմում էր Մեծ Հայքը, որտեղ բնակվում էր հայ ժողովրդի հիմնական զանգվածը, և որտեղ գտնվում էին տերության քաղաքական ու տնտեսական նշանավոր կենտրոնները:

**նկ. Ոսկե ապարանջան ակնքարով: Սիսիան (Ք.ա.I դ.)**

Տերության տնտեսապես ամենազարգացած շրջանը Ասորիքն էր՝ իր աշխարհահռչակ Անտիոք մայրաքաղաքով: Միջազգային տարանցիկ առևտրի կարևոր կենտրոններ էին Փյունիկիայի վաճառաշահ Տյուրոս, Բիբլոս, Բեյրութ, Սիդոն քաղաքները: Հարուստ ու հռչակավոր էին նաև Դաշտային Կիլիկիայի Տարսոն, Ադանա և այլ քաղաքները: Ասորիքի կառավարչապետ նշանակվեց Տիգրան Բ-ի մերձավոր զինակից Բագարատը, որի նստավայրը Անտիոքն էր: Երկրագործության և արհեստագործության նշանավոր կենտրոն էր Հյուսիսային Միջագետքը, որի կառավարիչն էր Տիգրան Բ-ի կրտսեր եղբայր Գուրասը (Գոռ): Վերջինիս նստավայրն էր Մծբինը: Թվարկված երկրները Հայկական տերության կազմում ունեին տարբեր կարգավիճակներ: Տիգրան Մեծը գրավված երկրների մի մասը վերածեց ենթակա թագավորությունների: Սիրիայի թագավորությունը ևս չվերացվեց: Տիգրանը միաժամանակ իրեն հռչակեց նաև Սիրիայի թագավոր: Մյուս երկրները վերածվեցին նահանգների, որոնք կառավարում էին արքայից արքայի կողմից նշանակված փոխարքաները կամ կուսակալները:

Նվաճված երկրները պարտավոր էին հարկ վճարել և զորք տրամադրել: Զորք էին տրամադրում նաև Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող հպատակ թագավորները և հպատակ ցեղերը:

Այսպիսով, Տիգրան Բ-ն դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալը: Հայոց տերության մեջ անմիջականորեն մտնող և նրա քաղաքական ազդեցության ու գերիշխանության ներքո գտնվող տարածքը կազմում էր շուրջ 3 մլն քառ. կմ, որը գերազանցում էր Մեծ Հայքի տարածքը տասն անգամ:

***Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը:*** Հայկական աշխարհակալ տերությունը նվաճումների հետևանքով կարիք ուներ նոր մայրաքաղաքի: Արտաշատն արդեն չէր կարող կատարել այդ դերը, քանզի մնացել էր տերության ծայր հյուսիսում, իսկ Անտիոքը գտնվում էր բուն հայկական հողերից դուրս և ուներ օտարազգի բնակչություն: Ահա թե ինչու նոր մայրաքաղաքի կառուցումը դարձավ օրակարգի հարց: Այն հիմնադրվեց Աղձնիք նահանգում, Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի ափին:

Մայրաքաղաքը կառուցվեց 70-ական թվականների ընթացքում և անվանակոչվեց Տիգրանակերտ՝ ի պատիվ հայոց հզոր արքայի: Մայրաքաղաքը բնակեցնելու նպատակով Տիգրան Բ-ն նվաճված երկրների քաղաքային բնակչության մեծ մասը բռնագաղթեցրեց Հայաստան: Հույն պատմիչ Ապիանոսի վկայությամբ, միայն Կապադովկիայից Հայաստան տեղափոխվեց 300 հազար մարդ, մոտավորապես 100 հազար մարդ էլ՝ Կիլիկիայի 12 քաղաքներից: Անշուշտ, Հայաստան տեղափոխված ամբողջ բնակչությունը չի բնակեցվել միայն Տիգրանակերտում: Նրա մեծ մասը հաստատվել է Արտաշատ, Արմավիր, Երվանդաշատ, Վան և այլ քաղաքներում:

**նկ. Տիգրանակերտի պարսպի մնացորդ (Արցախ)**

Հույն պատմիչ Պլուտարքոսի խոսքերով Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար: «...Նա այստեղ հրավիրում է հայերից լավագույններին և սպառնում էր բռնագրավել այն ամենը, ինչ իրենց հետ Տիգրանակերտ չէին տանելու»: Այսպիսով, կարճ ժամանակամիջոցում կառուցվեց մեծ ու շքեղ մի քաղաք: Քաղաքը շրջապատված է եղել 25 մետր բարձրությամբ պարիսպներով, ունեցել է անառիկ միջնաբերդ: Հետաքրքիր է, որ թագավորական պալատը կառուցվել է քաղաքից դուրս, որը շրջապատված է եղել պարտեզներով, այգիներով և որսատեղիներով: Տիգրանակերտն Արևելքի նշանավոր քաղաքներից էր, արհեստագործության, առևտրի ու մշակույթի խոշոր կենտրոն: Քաղաքն ունեցել է իր թատրոնը, որտեղ հույն դերասանները ողբերգություններ և թատերգություններ են բեմադրել:

Բացի Տիգրանակերտ մայրաքաղաքից, Տիգրանակերտ անվանումով քաղաքներ են հիմնադրվել նաև տերության այլ վայրերում:

***Տիգրան Մեծը ժողովրդի հիշողության մեջ:*** Հայ ժողովուրդը դարեր շարունակ իր բանավոր ստեղծագործություններում պահպանել է Տիգրան Մեծի կերպարը: Նրա կյանքի ու գործի հիանալի նկարագրությունը փոխանցվել է սերնդից սերունդ, գովերգվել են նրա մարդկային ու արքայական առաքինությունները: Տիգրան Մեծից ավելի քան 500 տարի անց Մովսես Խորենացին գրի է առել ժողովրդական բանահյուսության այդ անգին գոհարները և փոխանցել սերունդներին:

Տիգրանին ժամանակակից հռոմեական պատմիչները նրան անվանել են «մեծագույն թագավոր, որ տիրակալում էր մեծ փառքով»: Հայ նշանավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը դիպուկ է բնութագրել Տիգրան Բ-ին. «Տիգրան Մեծն իր արժանավոր տեղն է զբաղեցնում Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ի՞նչ տարածքներ էր ընդգրկում Տիգրան Մեծի տերությունը և մինչև ո՞ւր էին տարածվում նրա տերության ազդեցության սահմանները:**
2. **Միջերկրածովյան ի՞նչ նավահանգիստներ մաս կազմեցին Տիգրան Մեծի տերության:**

3. **Ինչո՞ւ Արտաշատն այլևս չէր բավարարում պետության մայրաքաղաք լինելու պայմաններին:**
4. **Ինչո՞վ էր պայմանավորված Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը Տիգրան Մեծի կողմից:**

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Համեմատե՛ք Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշատ մայրաքաղաքի կառուցման հետ:**

**Տետրում լրացրե՛ք նմանությունները և տարբերությունները:**

| Նմանություններ | Տարբերություններ |
|---|---|
| | |
| | |
| | |

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Տյուրոս • Բիբլոս • Բեյրութ • Սիդոն • Տարսոն • Ադանա • Բագարատ •**
**• Գուրաս (Գոռ) • Մծբին • Տիգրանակերտ •**

## *3. ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք. Ա. 69-66 թթ.)*

***Հռոմեական հանրապետության արևելյան քաղաքականությունը: Լուկուլլոսի արշավանքը Հայաստան:*** Ք.ա. I դ. սկզբներին Հռոմեական հանրապետությունը Փոքր Ասիայում ընդարձակ տիրույթներ նվաճեց: Նույն դարի 80-70-ական թվականներին Հռոմի Պոնտոսի դեմ մղած հաղթական պատերազմներից և Տիգրան Բ-ի կողմից Դաշտային Կիլիկիան գրավելուց հետո երկու տերությունները դարձան հարևաններ: Տիգրան Բ-ն իր նվաճումներով Հռոմի առջև փակում էր դեպի Արևելք տանող բոլոր ճանապարհները: Լրջորեն անհանգստացած դրանից՝ Հռոմն սկսում է նախապատրաստվել պատերազմի ընդդեմ Հայոց տերության: Ռազմաքաղաքական իրադրությունը նպաստավոր էր. Ք.ա. 71 թ. հռոմեական զորավար Լուկուլլոսը գլխովին ջախջախել էր Տիգրան Բ-ի դաշնակից Միհրդատ Եվպատորին: Վերջինս մազապուրծ փախել էր Հայաստան և քաղաքական ապաստան ստացել: Լուկուլլոսը հատուկ դեսպան ուղարկեց Տիգրանի մոտ և պահանջեց Միհրդատին հանձնել իրեն: Հայոց արքան, բնականաբար, մերժեց հռոմեացիների պահանջը, ասելով՝ «Ես Միհրդատին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա ... հակահարված կտա նրանց»: Անշուշտ, միամիտ կլինի կարծել, որ եթե Տիգրանը հանձներ Միհրդատին, ապա կարելի էր խուսափել պատերազմից:

**նկ. Մեդալիոն Սիսիանից (Ք.ա. I դ.)**

***Պատերազմի սկիզբը: Տիգրանակերտի ճակատամարտը:*** Ք.ա. 69 թ. գարնանը հռոմեական բանակները՝ անցնելով սահմանային Եփրատ գետը, ներխուժեցին Հայաստան: Սկսվեց հայ-հռոմեական պատերազմը: Պատերազմն ընթացել է երկու փուլով՝ 69-67 թթ. և 66 թ.: Դրանք միմյանցից տարբերվում են ռազմավարությամբ և ձեռք բերված արդյունքներով:

Լուկուլլոսը փորձեց դաշնակցել պարթևների հետ ընդդեմ Հայաստանի, սակայն վերջիններս՝ վստահ չլինելով հռոմեացիների հաղթանակին, չեզոքություն պահպանեցին:

Լուկուլլոսը մշակել էր կայծակնային պատերազմի ծրագիր, որի հիմնական սկզբունքներն էին հանկարծակիությունն ու շեշտակի հարվածը: Սակայն այն իրագործվեց միայն մասամբ: Հռոմեական բանակի ներխուժումը Հայաստան իրոք որ անսպասելի էր: Առանց որևէ դժվարության Լուկուլլոսը գրավեց Ծոփքը և սրընթաց շարժվեց Աղձնիք՝ գրավելու Տիգրանակերտը:

Անհրաժեշտ է նշել, որ այս ծրագիրը կազմված էր հայկական բանակի հնարավորությունները թերագնահատելու, իսկ հռոմեականինը՝ գերագնահատելու սխալ հաշվարկով: Տիգրանակերտն անակնկալ գրոհով գրավելու ծրագիրը ձախողվեց: Ճիշտ է հայոց արքան այդ ժամանակ գտնվում էր Պտղոմայիսում, սակայն կայազորը, հայ տաղանդավոր զորավար Մանկայոսի հրամանատարությամբ, քաղաքը պաշտպանում էր հմտությամբ: Գրոհի ձախողումից հետո Լուկուլլոսն ստիպված եղավ պաշարել այն: Անցնում էին ամիսները, իսկ Տիգրանակերտը շարունակում էր հերոսաբար դիմադրել: Կայծակնային պատերազմի ծրագիրը տապալվեց:

Հռոմեական բանակի Հայաստան ներխուժման լուրը Տիգրան Բ-ն իմացավ հեռավոր Պաղեստինում, ուր կենտրոնացված էին հայկական բանակի գլխավոր հարվածային ուժերը: Տիգրանը թագավորական գնդով շտապ վերադարձավ Հայաստան, իսկ բանակի հիմնական ուժերը՝ Բագարատ զորավարի հրամանատարությամբ, հետևեցին արքային: Մինչև Հայաստան հասնելը Տիգրան Բ-ն Լուկուլլոսի դեմ ուղարկեց Մեհրուժան զորավարի փոքրաթիվ, սակայն մարտունակ զորաջոկատը: Վերջինս հռոմեացիների գերակշիռ ուժերի հետ ընդհարման ժամանակ պարտվեց, իսկ Մեհրուժանն էլ զոհվեց:

Սեպտեմբերի կեսերին Տիգրանի գլխավորած հայկական բանակը մոտեցավ պաշարված Տիգրանակերտին, որտեղ գտնվում էին նրա ընտանիքը և գանձարանը: Հայկական մի զորամաս հանկարծակի ու խիզախ գրոհով մուտք գործեց քաղաք և այնտեղից դուրս բերեց արքայից արքայի ընտանիքն ու գանձերի մեծ մասը: Այս իրադարձությունն, անշուշտ, բարձրացրեց պաշարվածների մարտական ոգին և հավատ ներշնչեց հաղթանակի նկատմամբ: Ժամանեցին հայկական բանակի նորանոր զորամասեր: Ըստ Ապիանոսի, Տիգրանին ռազմաջոկատներ էին տրամադրել նաև ենթակա երկրները՝ Ատրպատականը (Մարաստանը), Աղվանքը, Վիրքը, Կորդուքը, Ադիաբենեն և անգամ Պարսից ծոցի արաբները: Հայկական բանակի թիվը, նույն պատմիչի վկայությամբ, 300 հազար զինվոր էր: Անշուշտ, սա իրականությանը չհամապատասխանող թվաքանակ է: Այլ պատմիչներ խոսում են ընդամենը 70-80 հազար զինվորների մասին, այսինքն՝ մոտավորապես այնքան, որքան հռոմեական բանակի զինվորների թիվն էր՝ դաշնակից զորաբանակների հետ միասին:

Հոկտեմբերի 6-ի վաղ առավոտյան սկսվեց Տիգրանակերտի ճակատամարտը: Լուկուլլոսը հիանալի օգտագործեց հայկական հրամանատարության թույլ տված ռազմավարական սխալներն ու տեղանքի առանձնահատկությունները: Շրջանցելով Տիգրանի բանակը՝ նա հայոց զորքի թիկունքում կենտրոնացրեց նշանակալից ուժեր, որոնք էլ վճռեցին ճակատամարտի ելքը: Ենթարկվելով երկկողմանի հարձակման և տալով զգալի կորուստներ, հայկական բանակն ստիպված էր նահանջել երկրի խորքը:

Հռոմեացիների հաղթանակը որոշեց նաև Տիգրանակերտի ճակատագիրը: Կայազորի հույն վարձկանները՝ կաշառվելով Լուկուլլոսի կողմից, հոկտեմբերի վերջերին ապստամբություն բարձրացնելով, քաղաքի դարպասները բացեցին հակառակորդի առջև: Նորակառույց ու հարուստ քաղաքը քարուքանդ եղավ ու թալանվեց: Միայն Լուկուլլոսը ձեռք գցեց ութ հազար տաղանդ արժողությամբ գանձեր:

***Արածանիի ճակատամարտը և հռոմեական բանակների պարտությունը:*** Տիգրանակերտի ճակատամարտն ու մայրաքաղաքի անկումը չկոտրեցին հայոց թագավորի կորովը: Տիգրան Բ-ն իր մեջ ուժ գտավ պայքարը շարունակելու: Նա չէր պատրաստվում ընկրկել հռոմեական բիրտ ուժի դիմաց: Լուկուլլոսը՝ ռազմական գործողությունները համարելով ավարտված, բանակը տարավ ձմեռելու Կորդուքի տաք շրջաններ: Օգտվելով դրանից՝ Տիգրան Մեծն անմիջապես օգտագործեց դադարը և սկսեց եռանդուն նախապատրաստվել ապագա ռազմական գործողություններին: Ձմեռվա ամիսներին նա վերակառուցեց բանակը, որի հարվածային գլխավոր

ուժը դարձավ հեծելազորը: Հայաստանի տնտեսական կարողություններն ու մարդկային ռեսուրսները հնարավոր դարձրեցին ընդամենը կես տարվա ընթացքում միանգամայն նոր բանակի ստեղծումը, որն իր կազմով ազգային էր և մարտարվեստով չէր զիջում հռոմեացիներին:

Այլևս հույսը կորցնելով, թե Տիգրանը հաշտություն կխնդրի իրենից, Ք. ա. 68 թ. գարնան վերջերին Լուկուլլոսը դուրս եկավ Կորդուքից և բռնեց Արտաշատ տանող ճանապարհը: Նա համոզված էր, որ Տիգրանին պարտադրելով նոր ճակատամարտ, ինքը գլխովին կոչնչացնի հայկական բանակը և հեշտությամբ կգրավի Արտաշատը:Հայկական բանակը, սակայն, խուսափում էր գլխավոր ճակատամարտից և դանդաղորեն նահանջում էր երկրի խորքերը: Միաժամանակ անսպասելի հարձակումներով հայերը ջլատում էին հռոմեացիների ուժերը՝ նրանց նշանակալից կորուստներ պատճառելով: Տիգրանի ընտրած այս մարտավարությունը լիովին արդարացրեց իրեն: Լուկուլլոսի հյուծված և մարտունակությունը կորցրած բանակը միայն սեպտեմբերի 22-ին հասավ Արածանիի գետանցին: Առջևում Հայկական Պար լեռնաշղթան էր, իսկ նրանից քիչ այն կողմ՝ Արտաշատն իր անբավ հարստություններով: Սակայն հռոմեական բանակն այնքան էր ջլատված և կորուստներն այնքան շատ էին, որ զինվորները հրաժարվում էին շարունակել ռազմերթը դեպի Հայկական Կարթագեն: Շուտով հռոմեական բանակը ենթարկվեց հայկական զինված ուժերի շեշտակի գրոհին, որը գլխավորում էր հայոց աննկուն ու եռանդով լի արքայից արքան: Հռոմեական բանակը լիակատար պարտություն կրեց: Հույն պատմիչ Դիոն Կասիոսը վկայում է, որ «հայերը նետահարելով հռոմեացիներին՝ շատերին սպանեցին, իսկ շատերին էլ վիրավորեցին. իսկ վերքերը ծանր էին և դժվար բուժելի, քանզի հայերը գործածում էին երկծայր նետեր»: Արածանիի ճակատամարտը ցույց տվեց Տիգրանի՝ որպես հիանալի ռազմագետի, կարողությունները: Անպարտելի համարվող հռոմեական բանակը ծանր պարտություն կրեց, դրան հետևեց նրա խայտառակ փախուստը: Լուկուլլոսն ստիպված էր թողնել Հայաստանի սահմանները: Շուտով հռոմեացիները դուրս քշվեցին նաև Հյուսիսային Միջագետքից և Կորդուքից: Տիգրան Մեծի հանձնարարությամբ Միհրդատ Եվպատորը հայկական մի զորամասով անցավ Պոնտոս և սկսեց երկրի ազատագրումը: Հռոմեացիների առաջին արշավանքը դեպի Արևելք լիովին ձախողվեց:

**նկ. Արածանի գետը**

***Պատերազմի երկրորդ փուլը: Իրադրությունը Արածանիի ճակատամարտից հետո:*** Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության ռազմական հեղինակությունը: Ք.ա. 67 թ. կեսերին հայկական բանակները ներխուժեցին Կապադովկիա՝ պատրաստվելով վերականգնել հայկական իշխանությունը Ասորիքում (Սիրիայում), ինչպես նաև Միջերկրական ծովի ափերին: Լրջորեն խախտվեց Հռոմի հեղինակությունն Արևելքում: Հռոմեական սենատն արտակարգ միջոցներ ձեռք առավ: Լուկուլլոսը հեռացվեց գլխավոր հրամանատարի պաշտոնից: Նրա փոխարեն հրամանատար նշանակվեց հմուտ զորավար և քաղաքական գործիչ Գնեոս Պոմպեոսը:

Խելացի և հեռատես Պոմպեոսը, ժամանելով Արևելք, նախապես պարթևների հետ դաշինք կնքեց ընդդեմ Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի: Պարթևները սիրով համաձայնեցին, քանզի ցանկանում էին վրեժխնդիր լինել Տիգրանից իրենց ստորացման համար: Հռոմեա-պարթևական դաշինքը ուղղված էր Հայաստանի դեմ:

Նույն տարվա վերջերին Պոմպեոսը պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին և գրավեց Պոնտոսը, որով Հայաստանը զրկվեց իր միակ դաշնակցից: Հռոմեական բանակը պատրաստվում էր ներխուժել Հայաստան: Ստեղծված բարդ իրադրությունը Տիգրան Բ–ից պահանջում էր գործել չափազանց զգույշ և ճշգրիտ:

***Տիգրան Կրտսերի խռովությունը:*** Հայաստանի համար այս ճակատագրական պահին երկրում սկսվեցին ներքին երկպառակություններ: Տիգրան Մեծի դեմ ընդվզեց նրա որդի Տիգրանը, որին պատմիչներն անվանում են Տիգրան Կրտսեր: Վերջինս գտնում էր, որ պետք է պատերազմը շարունակել մինչև հաղթական ավարտ: Տիգրան Մեծը ճնշեց ընդդիմադիր հայ ավագանու շահերը ներկայացնող Տիգրան Կրտսերի խռովությունը, որն իրեն հռչակել էր հայոց թագավոր: Խռովությանն անմասն չէին նրա մայրը՝ Կլեոպատրան, և պապը՝ Միհրդատ Եվպատորը: Վերջինս հույս ուներ թոռան գահակալությամբ Հայաստանը ծառայեցնել Պոնտոսի քաղաքական շահերին: Ստեղծված իրավիճակում Տիգրան Մեծն ստիպված եղավ զորքը դուրս բերել Կապադովկիայից և վերադառնալ Հայաստան: Տիգրան Կրտսերը փախավ Պարթևստան, որի թագավոր Հրահատ Գ-ն անմիջապես օգտագործեց պահը և որոշեց օգնել ապստամբ արքայազնին՝ նրան կնության տալով դստերը: Տիգրան Կրտսերը պարթևական բանակով ներխուժեց Հայաստան և պաշարեց Արտաշատը: Սակայն հայկական բանակը հակահարված տվեց պարթևներին, որոնք նահանջեցին իրենց երկիրը, իսկ Տիգրան Կրտսերը փախավ Պոնտոս: Կես ճանապարհին լուր ստանալով, որ պապը՝ Միհրդատ Եվպատորը, պարտություն է կրել Պոմպեոսից և փախել Բոսպորի թագավորություն, նա այս անգամ որոշեց դիմել Պոմպեոսի օգնությանը: Պոմպեոսն անմիջապես օգտագործեց բախտախնդիր արքայազնին՝ փորձելով ազդել Տիգրան Մեծի քաղաքականության վրա:

***Պոմպեոսի արշավանքը Հայաստան:*** Ք.ա. 66 թ. ամռանը Տիգրան Կրտսերի ուղեկցությամբ Պոմպեոսի հռոմեական բանակը ներխուժեց Հայաստան:

**նկ. Հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոս**

Տիգրան Մեծի դիրքերը, դժբախտաբար, բավականին թուլացել էին՝ պարթևների թշնամական գործողությունների, որդու խռովության և հռոմեական բանակի Հայաստան ներխուժման պատճառով: Հաջողության հասնելու հույսերը փոքր էին, ուստի ավելի խոհեմ կլիներ Հայաստանին ձեռնտու պայմաններով հաշտվել Հռոմի հետ և հենց նրա օգնությամբ էլ պայքար մղել մյուս երկուսի դեմ: Հայաստանը կարող էր կորցնել իր անկախությունը, ուստի անհրաժեշտ էր գնալ զիջումների ոչ կենսական խնդիրներում, գլխավորը՝ անկախությունը, պահպանելու համար:

Պոմպեոսը Ք.ա. 66 թ. սեպտեմբերին մոտեցավ Արտաշատին և ճամբար դրեց քաղաքից ոչ հեռու: Անմիջապես սկսվեցին հայ-հռոմեական հաշտության բանակցությունները: Այն, ինչին ձգտում էր Հռոմը, ստանում էր առանց ռազմական գործողությունների և զոհերի: Տիգրան Կրտսերի փորձերը՝ խոչընդոտելու բանակցությունները, արդյունք չտվեցին: Ընդհակառակը, նա հայտնվեց «խաղից դուրս» վիճակում:

***Արտաշատի պայմանագիրը:*** Ք.ա. 66 թ. սեպտեմբերին Արտաշատում կնքվեց հայ-հռոմեական պայմանագիրը, որն իր ամբողջության մեջ, այնուամենայնիվ, պետք է համարել հաջողված: Ըստ պայմանագրի՝

Հայաստանը հօգուտ Հռոմեական հանրապետության հրաժարվում էր Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Կիլիկիայից, այսինքն՝ Միջերկրական ծովի ափերից: Հայոց տերությունը սակայն պահպանում էր տերության միջուկը կազմող Մեծ Հայքի տարածքը:

Ծոփքն անջատվում էր Մեծ Հայքից և դառնում էր առանձին պետություն: Այստեղ թագավոր էր հաստատվում Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան Բ-ի մահից հետո Մեծ Հայքն ու Ծոփքը դարձյալ միավորվելու էին մեկ պետության մեջ՝ Տիգրան Կրտսերի գահակալության ներքո:

Հայաստանը Հռոմին պետք է վճարեր 6 հազար տաղանդ ռազմատուգանք, մոտավորապես այդքան էլ արշավանքին մասնակցած զինվորներին և սպաներին: Հատկանշական է, որ ռազմատուգանքի գումարը վճարվելու էր Ծոփքի արքայական գանձարաններից:

Հայաստանը հայտարարվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:

Վերջին կետը կարող է թողնել այն տպավորությունը, թե Հայաստանը կախյալ վիճակի մեջ էր դրվում Հռոմից: Սակայն հետագա իրադարձությունները ցույց են տալիս, որ դա այդպես չէր: Հայաստանը պահպանեց իր լիակատար անկախությունը: Ընդհակառակը, Հռոմը արտաքին քաղաքականության բնագավառում խրախուսում էր Տիգրան Բ-ի հակապարթևական բոլոր ձեռնարկումները: Պարթևները դաշնակից Հռոմից ավելին էին սպասում, բայց Պոմպեոսը Տիգրանի հետ կնքած հաշտությունից հետո մտադիր չէր նպաստել Պարթևստանի ուժեղացմանը: Արևելքում ուժերի հավասարակշռությունը պահանջում էր պաշտպանել Տիգրան Բ-ին:

Արտաշատի պայմանագրից հատկապես դժգոհ մնաց Տիգրան Կրտսերը: Տենչալով Հայաստանի գահին՝ նա այժմ պետք է բավարարվեր ֆինանսական միջոցներից զրկված Ծոփքի գահով: Հասկանալով հանդերձ իր վիճակի անհեթեթությունը՝ Տիգրան Կրտսերն, այնուամենայնիվ, ընդվզեց Պոմպեոսի դեմ և վիրավորեց նրա արժանապատվությունը: Ի պատասխան նրա հանդուգն ելույթի՝ Պոմպեոսի կարգադրությամբ Տիգրան Կրտսերը ձերբակալվեց և ընտանիքի հետ գերեվարվեց Հռոմ:

Տիգրան Բ-ն՝ օգտագործելով հռոմեա-պարթևական հակամարտությունը, կարողացավ Պոմպեոսի միջամտությամբ 64 թ. Մեծ Հայքին վերադարձնել Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը: Պոմպեոսն անգամ ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը, որից խիստ դժգոհ մնաց պարթևական արքունիքը:

Արտաշատի պայմանագիրը Տիգրան Մեծի դիվանագիտական հաջողությունն էր: Նա գործնականում կարողացավ պահպանել Մեծ Հայքի տարածքային ամբողջությունը՝ հայոց հայրենիքը՝ Եփրատից մինչև Կասպից ծով և Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետ: Պահպանվեց Հայաստանի պետական անկախությունը՝ հայ ժողովրդի հարատևման այդ կարևորագույն երաշխիքը: Ահա սա էր Արտաշատի պայմանագրի պատմական մեծ նշանակությունը:

Տիգրան Բ-ի կյանքի վերջին տասը տարիները Հայաստանի համար խաղաղության ու տնտեսական բարգավաճման շրջան էին:

***Ընթերցանության համար***

## ՀՈՒՍՏԻՆՈՍԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԵՎ ՄԻՀՐԴԱՏ ԵՎՊԱՏՈՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդ ժամանակ Արմենիայի թագավորն էր Տիգրանը, որը պատանդ էր տրվել վաղուց պարթևներին և քիչ առաջ հետ էր ուղարկվել իր հայրենի թագավորությունը: Սրան շատ էր ուզում Միհրդատը (Եվպատորը) դաշնակից անել ընդդեմ հռոմեացիների, որոնց հետ նա վաղուց հետե մտադիր էր պատերազմ մղել: Եվ թեև Տիգրանը հռոմեացիների կողմից չէր կրել որևէ անարգանք՝ նա դրդում էր Գորդիոսի միջոցով, որ հարձակվի Արիոբարզանի վրա, որը խիստ թույլ էր: Իսկ որպեսզի չերևա, որ որոշ խորամանկություն կա դրա տակ՝ նա ամուսնացնում է նրա (Տիգրանի) հետ իր աղջկան՝ Կլեոպատրային»:

## ՀՈՒՍՏԻՆՈՍԸ ԱՍՈՐԻՔՈՒՄ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ի վերջո (Ասորիքի) ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին, սակայն իրերի բերմամբ Միհրդատը պատերազմների մեջ էր հռոմեացիների դեմ, իսկ Պտղոմեոսը Ասորիքի մշտական թշնամին էր եղել: Այսպիսով, բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջ, որը, սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթևների թագավորության դաշնակիցն էր և Միհրդատի խնամին: Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարի շարունակ կառավարում էր ամենայն անդորրությամբ...»:

## ԱՊԻԱՆՈՍԸ ԱՐՏԱՇԱՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«...Ինչևէ, գալով Պոմպեոսի մոտ, (Տիգրանը) բացատրվեց կատարված դեպքերի համար և տվեց Պոմպեոսին 6000 տաղանդ, զինվորներից յուրաքանչյուրին՝ 50 դրաքմե, (յուրաքանչյուր) վաշտապետին՝ հազար, իսկ (յուրաքանչյուր) տրիբունին՝ 10 հազար (դրաքմե):

Պոմպեոսը ներեց նրան կատարված դեպքերի համար, հաշտեցրեց որդու հետ և որոշեց, որ որդին իշխի Ծոփքի և Կորդուքի վրա, սրանք այժմ կազմում են փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը՝ մյուս Հայաստանի վրա, և որ տղան պետք է լինի ժառանգորդը: Իսկ նրա նվաճած երկրները պետք է վերադարձվեն»:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչո՞ւ սրվեցին հայոց տերության և Հռոմեական հանրապետության հարաբերությունները:**
2. **Ինչպե՞ս սկսվեց հայ-հռոմեական պատերազմը և ի՞նչ փուլերի էր բաժանվում այն:**
3. **Ե՞րբ է եղել Տիգրանակերտի ճակատամարտը: Ինչո՞ւ հայոց բանակը պարտություն կրեց Տիգրանակերտի ճակատամարտում, սակայն կարողացավ հաղթել Արածանիի ճակատամարտում:**
4. **Հնարավո՞ր էր արդյոք խուսափել պատերազմից, եթե Տիգրան Մեծը Հռոմին հանձներ Միհրդատ Եվպատորին:**
5. **Որքա՞ն էր հայոց բանակի թվակազմը Տիգրան Մեծի օրոք:**
6. **Ինչո՞ւ ընկավ Տիգրան Մեծի աշխարհակալ տերությունը:**
7. **Ինչո՞վ էր պայմանավորված Տիգրան Կրտսերի ելույթը Տիգրան Մեծի դեմ:**
8. **Ինչպե՞ս պետք է գնահատել Արտաշատի պայմանագիրը:**

### ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

1. **Ինչո՞վ էր տարբերվում Տիգրան Մեծի քաղաքականությունը Միհրդատ Զ Եվպատորի քաղաքականությունից:**
2. **Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ երկար չգոյատևեց Տիգրան Մեծի աշխարհակալ տերությունը:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Լուկուլլոս • Կայծակնային պատերազմ • Մանկայոս • Մեհրուժան •**
**• Ապիանոս • Դիոն Կասիոս • Արածանիի ճակատամարտ • Պոմպեոս •**
**• Բոսպորի թագավորություն •**

**7-րդ թեմայի ամփոփում**

1. Ք.ա. 95 թ. Մեծ Հայքում գահ բարձրացավ Տիգրան Բ-ն՝ ապագա Տիգրան Մեծը: Տիգրանը շարունակեց Արտաշես Ա-ի անավարտ թողած գործը և՝ Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքին միացնելով, իր իշխանության տակ վերցրեց հայկական հողերի մեծագույն մասը: Նրա իշխանությունից դուրս մնաց միայն Փոքր Հայքը, որը մինչ այդ միացվել էր Պոնտոսին:

2. Դաշինք կնքելով Պոնտոսի թագավոր Միհրդատ Զ Եվպատորի հետ և ապահովելով թիկունքը՝ Տիգրան Մեծն արտաքին ակտիվ քաղաքականության միջոցով ստեղծեց մեծ տերություն: Վերջինիս սահմանները Եգիպտոսից և Կարմիր ծովից ձգվում էին մինչև Կովկասյան լեռներ, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով և Հնդկաստան: Նրա տերությունը, իր անմիջական ենթակայության տակ գտնվող հողերով և քաղաքական ազդեցության ոլորտում հայտնված երկրների հետ միասին, ուներ շուրջ 3 միլիոն քառակուսի կմ տարածք: Իր աշխարհակալ տերությունը նա կառավարում էր արքունի կառավարիչների և տեղական ենթակա թագավորների միջոցով:
3. Հայոց տերության հզորացումը և անընդհատ կրկնվող հռոմեա-պոնտական պատերազմները մեծապես սպառնում էին հռոմեական տիրապետությանը Արևելքում: Ուստի Պոնտոսի դեմ ուղարկվեց Լուկուլլոս զորավարը, որը Ք.ա. 69 թ. ներխուժեց Հայաստան և սկզբում հասավ զգալի հաջողությունների: Հաղթելով Տիգրանին Տիգրանակերտի մատույցներում՝ նա գրավեց Տիգրանակերտ մայրաքաղաքը: Սակայն վերակառուցված և լավ վարժեցված հայկական բանակը ջախջախեց հռոմեացիներին Արածանիի ճակատամարտում: Տիգրանը դուրս քշեց նրանց երկրից և ձեռնամուխ եղավ տերության հզորության և տարածքային ամբողջականության վերականգնմանը:
4. Հռոմի հեղինակությունն էապես խախտվեց: Լուկուլլոսը հետ կանչվեց, և Հայաստանի ու Պոնտոսի դեմ ուղարկվեց Պոմպեոս զորավարը մեծ բանակով: Հայտնվելով քաղաքական ու ռազմական բարդ կացության մեջ և հռոմեա-պարթևական դաշինքի իրական վտանգի առաջ՝ Տիգրան Մեծը որոշեց հաշտություն կնքել Հռոմի հետ: Ք.ա. 66 թ. Արտաշատում կնքված պայմանագրով Տիգրան Մեծը հրաժարվեց իր նվաճումներից, սակայն պահպանեց երկրի անկախությունը և Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը:

## **ԹԵՄԱ 8.** ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԹԵՎԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

### *1. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՀՌՈՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ: ԱՐՏԱՎԱԶԴ Բ*

***Արտավազդ Բ-ի գահակալությունը:*** Տիգրան Բ-ին հաջորդեց թագաժառանգ Արտավազդ Բ-ն (55-34), որը բազմակողմանի զարգացած, հունարենի քաջագիտակ, մտավորական անձնավորություն էր: Հույն պատմիչ Պլուտարքոսը հավաստում է , որ Արտավազդը «հորինում էր ողբերգություններ, գրում ճառեր ու պատմական երկասիրություններ»: Նա նաև հմուտ դիվանագետ էր, իրատես քաղաքագետ և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ռազմական գործիչ:

**նկ. Արտավազդ Բ-ի արծաթյա դրամը**

Արտավազդ Բ-ն գահ է բարձրացել Մեծ Հայքի թագավորության համար բարդ քաղաքական իրավիճակում: Արտաշատի պայմանագիրն արմատապես փոխեց ուժերի հարաբերակցությունն Առաջավոր Ասիայում: Հայոց թագավորությունը, որ երկար տարիներ հաջողությամբ պայքար էր մղում Հռոմի նվաճողական քաղաքականության դեմ, այժմ իր դիրքերը զիջեց Պարթևստանին, իսկ Մեծ Հայքի թագավորությունը հայտնվեց երկու հզոր տերությունների միջև, որոնցից յուրաքանչյուրը ջանք չէր խնայում ապահովելու նրա դաշնակցությունը:

Հայաստանի դիրքորոշումը դառնում էր չափազանց կարևոր, քանի որ նրանցից յուրաքանչյուրը փորձում էր տիրապետող դիրք ստանալ տարածաշրջանում և իշխել Արևելքում: Նման պայմաններում ինչ դիրք էր գրավելու Մեծ Հայքի թագավորությունը: Հարցադրում, որ դրվեց Արտավազդի և նրա հաջորդների առջև մի քանի դար շարունակ:

Արտավազդ Բ-ն հակված էր չեզոքության քաղաքականությանը: Նա փորձում էր երկու տերությունների հետ էլ բարիդրացիական հարաբերություններ պահպանել և թույլ չտալ, որ Հայաստանը ներքաշվի պատերազմների մեջ: Հակառակ դեպքում Արտավազդը հակված էր ընտրելու Հայաստանի համար առավել անվտանգ դաշնակցությունը: Դա երբեմն լինում էր Հռոմը, երբեմն՝ Պարթևստանը: Սակայն Հռոմը որպես առավել հզոր ուժ պակաս ցանկալի էր որպես դաշնակից, քանի որ բացահայտորեն սպառնում էր Հայաստանի անկախությանը: Ուստի Արտավազդ Բ-ն ավելի շատ հակվում էր դեպի Պարթևստանը:

Դիվանագիտական ճշգրիտ քայլերով Արտավազդը ձգտում էր պահպանել Մեծ Հայքի թագավորության՝ տարածաշրջանի երրորդ հզոր պետության ուժը. տարածքային ամբողջականությունն ու անկախությունը:

***Կրասոսի արևելյան արշավանքը և Հայաստանը:*** Ք.ա. 60 թ. Հռոմի երեք ականավոր գործիչներ՝ Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը, ստեղծեցին մի դաշինք, որը հայտնի է Առաջին եռապետություն անունով: Եռապետները Հռոմեական հանրապետությունը բաժանեցին ազդեցության գոտիների: Մարկոս Կրասոսը ստացավ Արևելքը և միաժամանակ պարթևների դեմ պատերազմելու իրավունքը: Ք.ա. 54 թ. նա ժամանեց Արևելք և սկսեց նախապատրաստվել պարթևների դեմ արշավանքին: Փառասեր և մեծամիտ Կրասոսը, ինչպես գրում է ժամանակակից պատմիչը, երազում էր կրկնել Ալեքսանդր Մակեդոնացու սխրանքը և հասնել մինչև Հնդկաստան:

Կրասոսը պահանջեց, որ իրեն ներկայանան Հռոմի բոլոր դաշնակից երկրների արքաները և զորք տրամադրեն: Նրան ներկայացավ նաև Արտավազդ Բ-ն: Հավատարիմ մնալով 66 թ. հայ-հռոմեական պայմանագրին՝ նա, որպես «հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից», Կրասոսին խոստացավ տալ նշանակալից քանակությամբ զինված ուժեր (16-հազարանոց այրուձի և 24-հազարանոց հետևազոր): Սակայն Արտավազդը միաժամանակ առաջարկեց պարթևների դեմ արշավանքը կազմակերպել Հայաստանի տարածքով: Հայոց արքան դա հիմնավորում էր այդ արշավանքի հիշյալ ուղու թեև ավելի երկար, սակայն միանգամայն անվտանգ լինելով, քանի որ Հայաստանի լեռնային տեղանքը կզրկեր պարթևական հեծելազորին իր բոլոր առավելություններից: Ավելորդ է ասել, որ Արտավազդը մտադիր էր հռոմեական բանակի ուժերով Հայաստանը զերծ պահել պարթևների հնարավոր ներխուժումից: Սակայն, ցավոք, Կրասոսն ընտրեց արշավանքի թեև կարճ, սակայն վտանգավոր ուղին, որն անցնում էր Միջագետքի դաժան, չոր կլիմա ունեցող անծայրածիր անապատներով և տափաստաններով:

Երկիր վերադառնալու ճանապարհին Արտավազդը լուր ստացավ, որ պարթևների Օրոդես թագավորը ներխուժել է Հայաստան և ասպատակում է

**նկ. Հռոմեական ցենտուրիոն**

երկրի հարավային տարածքները: Արտավազդը, բնականաբար, այլևս չէր կարող օգնական զորք տրամադրել Կրասոսին. նա պարտավոր էր պաշտպանել հայրենիքը: Իմանալով այդ մասին՝ Կրասոսը կոպիտ ու անքաղաքավարի խոսքերով Արտավազդին մեղադրեց դավաճանության մեջ և սպառնաց պարթևական արշավանքն ավարտելուց հետո պատժել հայոց արքային:

Արտավազդը՝ հմտորեն կողմնորոշվելով և հանդես բերելով հեռատեսություն, փոխեց իր դիրքորոշումը և Օրոդեսին առաջարկեց դաշինք կնքել և համատեղ ռազմական գործողություններ ծավալել հռոմեացիների դեմ: Պարթևների թագավորը սիրով ընդունեց այս առաջարկը, և 54 թ. վերջերին Արտաշատում կնքվեց հայ-պարթևական մի համաձայնագիր, որն ամրապնդվեց հայոց թագավորի քրոջ և պարթևների թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:

Այդ ընթացքում Կրասոսը, հսկայական կորուստներ տալով, Ք.ա. 53 թ. գարնանը հասավ Միջագետքի Խառան քաղաքը: Պարթևական բանակը դանդաղ նահանջում էր՝ երկրի խորքը ներքաշելով հռոմեական լեգեոններին՝ ոչնչացնելով գույքը, պարենի պաշարները և թունավորելով ջրհորները: Սակայն շուտով պարթևները դադարեցին նահանջել, և Ք.ա. 53 թ. մայիսի 6-ին պարթև զորավար Սուրենը մեծ բանակով հանկարծակի ու շեշտակի հարվածով գլխովին ջախջախեց հռոմեական զորքը: Սպանվածների թիվն անցնում էր 20 հազարից, գերիներինը՝ 10 հազարից: Սպանվեցին նաև Կրասոսն ու նրա որդին: Հույն պատմիչ Պլուտարքոսը հաղորդում է, որ Սուրենը սպանված Կրասոսի գլուխն ուղարկում է Հայաստան: Այդ ժամանակ հայ և պարթև արքաները, նրանց մերձավորները Արտաշատի թատրոնում դիտում էին հույն նշանավոր թատերագիր Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» ողբերգությունը: Հույն դերասան Յասոնը եղջերվի բուտաֆորային գլխի փոխարեն բեմ է դուրս գալիս Կրասոսի գլխով և արտասանում. «Մենք գալիս ենք լեռներից և բերել ենք հարուստ որս», ինչը մեծ ցնծությամբ ընդունվեց հանդիսականների կողմից: Նույն պատմիչի խոսքերով՝ «այսպես ավարտվեց Կրասոսի արևելյան արշավանքը, որը վերջացավ ողբերգության նման»:

***Անտոնիոսի պարթևական և հայկական արշավանքները:*** Կրասոսի պարտությունը ծանր տպավորություն թողեց Հռոմում, սակայն ներքաղաքական բարդ իրադարձությունները խանգարեցին նոր արշավանք կազմակերպել և վրեժխնդիր լինել պարթևներից: Ավելին, Հուլիոս Կեսարի սպանությունը (Ք.ա. 44 թ.) երկիրը ներքաշեց քաղաքացիական պատերազմների հորձանուտը: Օգտագործելով հարմար պահը՝ պարթևա-հայկական միացյալ բանակը Ք.ա. 40 թ., պարթև թագաժառանգ Բակուրի և հայ զորավար Վասակի գլխավորությամբ՝ անցնելով Եփրատը, ներխուժեց Ասորիք: Փյունիկիայի, Ասորիքի, Պաղեստինի և Միջերկրական ծովի ափին գտնվող քաղաքները, որոնք դժգոհ էին հռոմեական ծանր տիրապետությունից, հայերին և պարթևներին դիմավորում են ցնծությամբ՝ իրար հետևից իրենց դարպասները բացելով նրանց առջև:

Պարթևների և հայերի հայտնվելը Միջերկրական ծովի ափերին սթափեցրեց Հռոմին և ստիպեց դիմել կտրուկ միջոցների: Արևելք ուղարկվեց Բասոս զորավարը, որը վճռական ճակատամարտում պարտության մատնեց դաշնակիցներին: Կռիվների ժամանակ սպանվեց նաև թագաժառանգ Բակուրը: Պարթևստանում սկսված գահակալական պայքարի պատճառով անսպասելիորեն խզվեց հայ-պարթևական դաշինքը : Հռոմեացիներն անմիջապես օգտագործեցին այս հարմար պահը: Հռոմում իշխանության գլուխ եկած երկրորդ եռապետության (Մարկոս Անտոնիոս, Մարկոս Լեպիդոս և Գայոս Օկտավիանոս) որոշմամբ Արևելք ուղարկվեց Մարկոս Անտոնիոսը: Ք.ա. 38-37 թթ. Անտոնիոսը դեպի Պարթևստան մեծ արշավանքի նախապատրաստություններ սկսեց: Այս անգամ արշավանքի երթուղին անցնելու էր Հայաստանով: Ուստի հռոմեացիներին անհրաժեշտ էր ձեռք բերել Հայաստանի դաշնակցությունը: Արտավազդը կանգնած էր երկընտրանքի առջև: Ստեղծված ծանր պայմաններում Արտավազդն ստիպված եղավ կրկին դաշնակցել հռոմեացիներին: Հայոց թագավորն Անտոնիոսին խոստացավ 11-հազարանոց օգնական զորք տրամադրել և թույլատրել պարթևների դեմ ռազմարշավը Հայաստանի տարածքով:

Ք.ա. 36 թ. ամռանը Անտոնիոսը 100-հազարանոց բանակով և երեք հարյուր սայլերի վրա բարձած պաշարողական տեխնիկայով սկսեց իր արշավանքը: Հռոմեական բանակն անցավ Հայաստանի տարածքով և մտավ պարթևներին դաշնակից Ատրպատական: Անտոնիոսը շտապում էր օր առաջ գրավել Ատրպատականի մայրաքաղաք Փրաասպան (Հրատն Մեծ), ուստի, պաշարողական մեքենաների համար առանձնացնելով երկու լեգեոն, ինքը հիմնական ուժերով շարժվեց երկրի խորքերը: Պարթևներն անմիջապես օգտագործեցին այդ պահը և, հարձակվելով, ոչնչացրին պաշարողական մեքենաները: Պարզ դարձավ, որ առանց այդ մեքենաների անհնարին էր գրավել պարթևական քաղաքները: Իր հերթին լավ հասկանալով արշավանքի հնարավոր ձախողումը՝ Արտավազդը որոշեց վերադառնալ Հայաստան և հրաժարվել ռազմական հետագա գործողություններին մասնակցելուց: Հետագայում իրեն արդարացնելու համար Անտոնիոսն օգտագործեց այդ հանգամանքը՝ Արտավազդին հռչակելով դավաճան և իր պարտության հիմնական մեղավոր: Այս մեղադրանքը կեղծ է, քանզի Անտոնիոսի պարտվելուց հետո էր, որ Արտավազդը հետ էր քաշել իր զորամասերը:

**նկ. Մարկոս Անտոնիոս**

Ք.ա. 36 թ. աշնանը Անտոնիոսի բանակը ստիպված էր նահանջել: 27 օր տևած նահանջի ընթացքում հակառակորդն անընդհատ հարձակումներով ուժասպառ էր անում հռոմեացիներին, որոնք կորցրին 32 հազար, իսկ պարթևները՝ 12 հազար զինվոր: Հայկական կողմը թագավորի հեռատեսության շնորհիվ կորուստներ չունեցավ: Միայն Հայաստան հասնելուց հետո Անտոնիոսը կարողացավ հանգիստ շունչ առնել ու կարգի բերել բարոյալքված բանակը: Այդուհանդերձ, չնայած Արտավազդ Բ-ի օգնությանը, հռոմեական բանակը 8000 զոհ տվեց հայկական սառնամանիքների պատճառով: Հայաստանից նա մեկնեց Ալեքսանդրիա:

Հռոմեական սենատին ուղարկված զեկուցագրում Անտոնիոսը, իր ապաշնորհությունն ու մեղքը քողարկելու նպատակով, ռազմական վիթխարի ծախսերն ու մարդկային ահռելի կորուստները բացատրում է իբրև թե հայոց թագավորի դավաճանությամբ: Իր վարկաբեկված հեղինակությունն ինչ-որ չափով վերականգնելու համար նա ծրագրում է գրավել ու կողոպտել Հայաստանը:

Ք.ա. 34 թ. Անտոնիոսը ամռանը անակնկալ արշավեց դեպի Հայոց թագավորություն: Հարձակումն այնքան անսպասելի էր, որ հռոմեական բանակը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, մոտեցավ Արտաշատին: Անըմբռնելի է, սակայն փաստ, որ Արտավազդն իր առնվազն 70 հազարանոց բանակը մարտի չհանեց հռոմեական 60 հազարանոց բանակի դեմ: Նա, թերևս, համոզված էր, որ վեճը կարելի է լուծել խաղաղությամբ: Նման դեպքում, թերևս, երկիրը կարող էր զերծ մնալ ավերածություններից, բայց անմիջականորեն վտանգվում էր թագավորի անձը: Բանակցություններ վարելու փոխարեն Անտոնիոսը ձերբակալեց հայոց թագավորին, նրա ընտանիքը և կողոպտեց արքունի գանձերը: Անտոնիոսի այս քայլը դատապարտել են անգամ իրենք՝ հռոմեացիները: Այսպես, Դիոն Կասիոսը գրում է, թե Անտոնիոսը Արտավազդին «խաբելով, ձերբակալելով ու շղթայելով, մեծապես վարկաբեկել է հռոմեական ժողովրդի հեղինակությունը»:

Այսուհանդերձ հռոմեացիներն իրենց նպատակին չհասան: Հռոմեական գերությունից խուսափած թագաժառանգ Արտաշեսը փորձեց հակահարված տալ հակառակորդին և ազատել կալանված արքային, սակայն հապշտապ և լավ չկազմակերպված գործողություններով որևէ արդյունքի չհասավ: Նա պարտություն կրեց և փախավ Պարթևստան:

Հայաստանի քաղաքներում թողնելով հռոմեական կայազորներ, Անտոնիոսը վերադարձավ Եգիպտոս՝ իր հետ տանելով Արտավազդ Բ-ին և նրա ընտանիքը: Նա Ալեքսանդրիայում հաղթահանդես կազմակերպեց, որի ժամանակ բոլորի ուշադրության կենտրոնում ոսկե շղթաներով շղթայված հայոց թագավորն ու նրա ընտանիքն էր: Գերիներին հորդորել էին

խոնարհվել Կլեոպատրային և նրան մեծարանքի խոսքեր շռայլել: Սակայն հայոց արքան և նրա հարազատներն անցան հպարտորեն ու արժանապատիվ: Ինչպես գրում է ժամանակակից հույն պատմիչը. «նրանք ցույց տվեցին իրենց ոգու արիությունը»: Հայերի նման կեցվածքը մեծ տպավորություն թողեց: Վիրավորված Կլեոպատրան չներեց Արտավազդին և կարգադրեց զնդան նետել նրան:

**նկ. Կլեոպատրայի դրամը**

Անտոնիոսի ինքնագլուխ գործողությունները խիստ սրեցին նրա հարաբերությունները պաշտոնական Հռոմի հետ: Քաղաքացիական պատերազմը դարձավ անխուսափելի, որը և շուտով բռնկվեց:

Ք.ա. 31թ. սեպտեմբերի 2-ին Ակտիումի ճակատամարտում Անտոնիոսը լիակատար պարտություն կրեց եռապետ Գայոս Օկտավիանոսի բանակից և փախավ Ալեքսանդրիա: Նույն թվի հոկտեմբերին՝ Կլեոպատրայի կարգադրությամբ Արտավազդ Բ-ն մահապատժի ենթարկվեց Ալեքսանդրիայում: Շատ չանցած, Օկտավիանոսի կողմից գերի վերցվելու վտանգն ստիպեց Անտոնիոսին և Կլեոպատրային ինքնասպանությամբ վերջ տալ իրենց կյանքին:

***Ընթերցանության համար***

## ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԻՉԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԴԻՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նրանք միմյանց համար խնջույքներ ու գինարբուքներ էին կազմակերպում, որոնց ընթացքում հաճախ բեմադրվում էին հունական ներկայացումներ, քանզի Օրոդեսին անծանոթ չէին հունական լեզուն և գրականությունը, իսկ Արտավազդը հորինում էր նույնիսկ ողբերգություններ և գրում ճառեր ու պատմական երկասիրություններ, որոնցից մի քանիսը մինչև այժմ պահպանվել են: Այն պահին, երբ արքունիք բերեցին Կրասոսի գլուխը, ճաշասեղաններն արդեն հավաքված էին, և ողբերգակ դերասան Յասոն Տրալացին արտասանում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիներից» հատվածներ... Այն ժամանակ, երբ նրան ծափահարում էին, դահլիճ մտավ Սիլակեսը և երեսն ի վայր ընկավ արքայի առաջ, և ապա նա սրահի մեջտեղը նետեց Կրասոսի գլուխը»:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչպիսի՞ն էր քաղաքական դրությունը Առաջավոր Ասիայում և Մեծ Հայքի թագավորությունում Ք.ա. I դարի կեսերին:**
2. **Հռոմեական ո՞ր զորավարները արշավեցին պարթևների դեմ, որն ստիպեց հայերին մերձենալու պարթևների հետ:**
3. **Ի՞նչ օգուտներ կարող էր քաղել Հայոց թագավորությունը հայ-պարթևական դաշինքից:**
4. **Ո՞ր ճակատամարտում պարտություն կրեցին Կրասոսի զորքերը:**
5. **Ի՞նչ հետևանքներ ունեցան հռոմեական արշավանքները Հայաստան:**

### ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

**Քննարկե՛ք Հայոց արքայի և նրա գերեվարված հարազատների կեցվածքը Ալեքսանդրիայում: Փորձե՛ք գնահատել նրանց պահվածքը:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Արտավազդ Բ • Պլուտարքոս • Հուլիոս Կեսար • Մարկոս Կրասոս •**
**• Առաջին եռապետություն • Օրոդես • Խառան • Սուրեն • Բասոս •**
**• Մարկոս Անտոնիոս • Գայոս Օկտավիանոս • Փրաասպա • Ալեքսանդրիա •**
**• Կլեոպատրա • Ակտիումի ճակատամարտ •**

## *2. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԱՐՏԱՇԻՍՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ*

***Արտաշես Բ-ի գահակալությունը:*** Արտավազդ Բ-ի գերեվարությունից հետո հռոմեական բանակը ռազմակալեց Հայաստանը: Թալանվեցին քաղաքներն ու մեհյաններում կուտակված անբավ հարստությունները: Մանրամասն նկարագրվում է Երիզա ավանում գտնվող Անահիտ աստվածուհու հռչակավոր մեհյանի կողոպուտը, թե ինչպես են ընչաքաղց հռոմեացի զինվորներն առանձին կտորների վերածել աստվածուհու ոսկեձույլ արձանը:

Սակայն հռոմեացիների կողմից ռազմակալված Հայաստանը փոթորկվում էր: Գերեվարությունից խույս տված թագաժառանգ Արտաշեսը, հաջողության չհասնելով, իր զորքերով քաշվեց Պարթևստան: Քաղաքական իրադրության կտրուկ փոփոխությունն ստիպեց Պարթևստանի Հրահատ Դ թագավորին ևս փոխել վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Նա ոչ միայն ապաստան տվեց փախստական թագաժառանգին և իր դստերը կնության տվեց նրան, այլև ռազմական նշանակալից օգնություն տրամադրեց հռոմեական նվաճողների դեմ պայքարը կազմակերպելու համար: Արտաշեսի գործողություններն ավելի նպատակասլաց դարձան հատկապես Ակտիումի ճակատամարտից հետո: Հայ-պարթևական զորքերի գլուխ անցած նա մտավ Հայաստան և, մի քանի վճռական ճակատամարտերում պարտության մատնելով հռոմեական լեգեոններին, նրանց դուրս շպրտեց երկրից:

**նկ. Օգոստոս Օկտավիանոս**

Ի պատասխան հոր՝ Արտավազդի մահապատժի, նա կարգադրեց սրի քաշել Հայաստանում գտնվող հռոմեական կայազորները:

Ք.ա. 30 թ. Արտաշեսը հանդիսավորությամբ հռչակվեց հայոց թագավոր: Արտաշես Բ-ն (Ք.ա. 30-20) ուժեղ անհատականություն էր, վճռական և անհաշտ թշնամու նկատմամբ: Նա Հռոմից պահանջեց հետ վերադարձնել իր կրտսեր եղբայրներին՝ Տիգրանին և Արտավազդին, սակայն մերժում ստացավ, թե նա էլ կոտորել է հռոմեական կայազորները: Այնուհետև նա արշավեց Հռոմի դաշնակից Ատրպատականի թագավորության դեմ, գրավեց այն և միացրեց իր թագավորությանը: Մեծ Հայքի թագավորությունը նրա օրոք նշանակալից չափով ուժեղացավ: Ուստի պատահական չէ, որ նրա հատած դրամները կրում էին «արքայից արքա» մակագրությունը: Երիտասարդ և եռանդուն թագավորը լի էր վճռականությամբ՝ վերականգնելու Հայոց թագավորության երբեմնի հզորությունը: Արտաշես Բ-ի շեշտված հակահռոմեական դիրքորոշումը և հատկապես դաշինքը Պարթևստանի հետ մեծապես հարվածում էին Հռոմի արևելյան քաղաքականությանը՝ խոչընդոտելով նրա զավթողական ծրագրերին: Ուստի Օգոստոս կայսրը, որ ուշի-ուշով հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, վճռում է տապալել անցանկալի Արտաշես Բ-ին և փոխարենը գահ բարձրացնել նրա կրտսեր եղբորը՝ արքայազն Տիգրանին: Վերջինս տասը տարուց ի վեր գտնվելով Հռոմում, ստացել էր հռոմեական դաստիարակություն: Ք.ա. 20 թ. հռոմեացիները կազմակերպեցին Հայոց թագավորի սպանությունը: Արտաշիսյան Հայաստանը զրկվեց իր վերջին հզոր տիրակալից, որը շատ բան արեց վերականգնելու համար Հայոց թագավորության երբեմնի հզորությունը:

**նկ. Հայոց թագավոր Տիգրան Գ-ի դրամը**

Արտաշես Բ-ի սպանությունից անմիջապես հետո Օգոստոսի կարգադրությամբ Արտաշատում հանդիսավորությամբ գահ բարձրացվեց Տիգրան Գ-ն (20-8 թթ.): Այս իրադարձությունը Հռոմում դիտվել է որպես կարևոր հաղթանակ և նշվել շուքով: Հատվել են ոսկե և արծաթե դրամներ՝ «Հայաստանը նվաճված» մակագրությամբ, իսկ նշանավոր բանաստեղծներ Օվիդիոսն ու Հորացիոսն անգամ դրան ձոնել են հատուկ ներբողներ:

Հակառակ հռոմեացիների ակնկալիքների, Տիգրան Գ-ն չդարձավ Հռոմի հլու կամակատարը: Կյանքի վերջին տարիներին նա հրաժարվեց հռոմեական կողմնորոշումից և վարեց միանգամայն անկախ քաղաքականություն: Նրա այդ քաղաքականությունը շարունակեց նաև նրա հաջորդն ու որդին՝ Տիգրան Դ-ն (Ք.ա. 8-5, 2-1): Դեպքերի նման զարգացումից անհանգստացած Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Գայոս Կեսարին, որը գահընկեց է անում Տիգրան Դ-ին և թագավոր հռչակում նրա հորեղբայր Արտավազդ Գ-ին (Ք. ա. 5-2): 25 տարի Հռոմում ապրած և հայ իրականությունից խորթացած այս թագավորը Հայաստանը կառավարում է հռոմեական օրենքներով և անզուսպ թալանում պետական գանձարանը: Չհանդուրժելով այս իրավիճակը՝ հայերն ապստամբում են նրա դեմ և սպանում: Վերստին գահ է բարձրանում Տիգրան Դ-ն, այս անգամ քրոջ՝ Էրատոյի հետ միասին (Ք.ա. 2-1): Հայոց թագավորը բանակցություններ վարեց Օգոստոսի հետ, որպեսզի վերջինս ճանաչի իր թագավորությունը: Այդ ուղղությամբ ձեռք բերվեց որոշակի պայմանավորվածություն: Բայց 1 թ. կովկասյան լեռնականների դեմ մղված պատերազմներից մեկի ժամանակ Տիգրան Դ-ն սպանվեց, իսկ Էրատոն էլ հրաժարվեց գահից:

**նկ. Հայոց թագավոր Տիգրան Դ-ի դրամը**

Տիգրան Դ-ի անունով մեզ հասած դրամների վրա նա պատկերված է Արտաշիսյանների ավանդական թագով, իսկ դրամի հակառակ կողմում Էրատոն է՝ վարսերը գլխի շուրջը հավաքած: Դրանք ունեն «Արքայից արքա Տիգրան» և «Էրատո՝ Տիգրան արքայի քույրը» հունարեն մակագրությունները:

Տիգրան Դ-ի սպանությամբ սպառվեց Արտաշիսյան արքայատոհմի արական ճյուղը: Հայաստանի առջև ծառացավ նոր արքայատոհմ հաստատելու խնդիրը, որը հրատապ լուծում էր պահանջում: Այն առաջին հերթին ներքին խնդիր էր, սակայն անմիջապես ձեռք բերեց միջազգային հնչեղություն՝ դառնալով Հռոմի և Պարթևստանի հակամարտության և մրցակցության գլխավոր առարկան:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչ պայմաններում Հայաստանում գահ բարձրացավ Արտաշես Բ-ն:**
2. **Ինչ քաղաքական նպատակներ էր հետապնդում Հռոմը՝ հայկական գահ բարձրացնելով ծագումով Արտաշիսյան իր դրածոներին:**
3. **Ինչ դեր ուներ Մեծ Հայքի թագավորությունը Տիգրան Մեծից հետո Առաջավոր Ասիայում:**

**Քննարկման հարց**

**Որո՞նք էին Արտաշիսյան արքայատոհմի իշխանության թուլացման ու անկման պատճառները:**

## ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Հրահատ Դ • Արտաշես Բ • Էրատո • Տիբերիոս •**

**8-րդ թեմայի ամփոփում**

Արտավազդ Բ-ի ձերբակալությունից հետո Մեծ Հայքի թագավորությունը վերածվեց կռվախնձորի Հռոմի և Պարթևական թագավորության միջև: Այդ երկու տերությունների մրցակցության զոհը դարձավ Արտավազդ Բ-ն, իսկ Արտաշես Բ-ից հետո թագավորական իշխանությունը գնալով թուլացավ: Հայոց գահին հռոմեացիները բազմեցնում էին, թեկուզև Արտաշիսյան ծագումով, խամաճիկ թագավորների, որոնք ի վիճակի չէին ինքնուրույն քաղաքականություն վարելու: Թագավորության թուլացմանը նպաստեց նաև Արտաշիսյան արքայատոհմի արական ճյուղի սպառվելը:

# ԹԵՄԱ 9. ՀԱՅԱՍՏԱՆԸ I-III ԴԱՐԵՐՈՒՄ

## *1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ*

***Մեծ Հայքի թագավորությունը օտարազգի թագավորների գահակալության շրջանում:*** Արտաշիսյան արքայատոհմի արական ներկայացուցիչների սպառումով հռոմեացիները հնարավորություն ստացան հայկական գահ բարձրացնելու օտարազգիների, որոնք կվարեին հռոմեամետ քաղաքականություն: 1 թ. մինչև 52 թ. նրանց օգնությամբ հայկական գահ բարձրացան Ատրպատականի և Վիրքի արքայատոհմի ներկայացուցիչները:

**նկ. Զարդարանքի բեկոր Արտաշատից ( I դ.)**

Սակայն իր հերթին Պարթևստանն էլ աշխատում էր հայոց գահ բարձրացնել իր թեկնածուին: Հայ ժողովուրդը համառ և անկոտրում պայքար էր մղում օտարազգի դրածո թագավորների իշխանության դեմ, իսկ հայոց ավագանին ձգտում էր հիմք դնել հայկական նոր արքայատոհմի: Այդ պայմաններում բոլորովին պատահական չէր, որ օտարազգի դրածո թագավորները, բացի Զենոնից (18-34), դարձան հայ ավագանու վրիժառության զոհը: Բավական երկար և խաղաղ իշխեց միայն Զենոնը, որը մեծացել էր հայերի շրջապատում, յուրացրել էր նրանց սովորույթները և վարում էր երկրի շահերից բխող քաղաքականություն: Ինչպես մյուս օտարազգի թագավորները, այնպես էլ նա, հայ արքունիքի սովորության համաձայն, ընդունեց ժողովրդի կողմից սիրված հայկական դինաստիական Արտաշես անունը և մահացավ բնական մահով: Զենոն-Արտաշեսից հետո հայոց սպարապետ Գիսակ Դիմաքսյանի հակահռոմեական ապստամբության շնորհիվ Հայոց թագավորությունը կարճ ժամանակով (37-43 թթ.) կարողացավ վերականգնել իր լիակատար անկախությունը: Դրանից հետո հռոմեացիների օգնությամբ հայկական գահին տիրեցին վրաց թագավորական ընտանիքի ներկայացուցիչները՝ առաջ բերելով ժողովրդի համառ դիմադրությունը: Հայ ժողովրդի հերոսական ու շարունակական պայքարը Հռոմի դեմ արտացոլվել է հռոմեական նշանավոր բանաստեղծ Վերգիլիոսի հետևյալ դիպուկ այլաբանության մեջ՝ «կամուրջներ չհանդուրժող Արաքս»: Դրա մեջ նա, անշուշտ, ակնարկում է Հայաստանի աննկուն պայքարը, այսինքն ինչպես Արաքսը չի հանդուրժում կամուրջներ, այնպես էլ հայ ժողովուրդը՝ օտարի տիրապետությունը:

Օտարազգի թագավորների ատելի իշխանությունն ստիպեց հայոց ավագանուն դաշնակիցներ փնտրել՝ ի դեմս պարթևական թագավորության: Վերջինս էլ իր հերթին ձգտում էր Մեծ Հայքում հաստատել Արշակունիների իշխանությունը, այն վերածել Արշակունյաց արքայատոհմի երկրորդ թագավորության:

***Հայ-պարթևական մերձեցումը: Տրդատ Արշակունին (52/61/66-76) հայոց թագավոր:*** Պարթևական Վաղարշ Ա Արշակունի թագավորի օրոք Պարթևստանի և Մեծ Հայքի թագավորությունները փոխադարձ քայլեր ձեռնարկեցին մերձենալու և սերտ բարեկամություն հաստատելու ուղղությամբ: Հայոց ավագանին համաձայնեց պարթևական թագավորի եղբայր Տրդատին ճանաչել հայոց թագավոր:

Վաղարշ արքան և նրա եղբայր Տրդատը մեծ բանակով մուտք են գործում Հայաստան և հայկական ուժերի օգնությամբ գրավում թագավորության մայրաքաղաք Արտաշատը և վաճառաշահ քաղաք Տիգրանակերտը: Երկու տարի անց Տրդատը հայ ավագանու օգնությամբ հաստատվում է հայոց գահին, իսկ հռոմեացիների օգնությամբ Մեծ Հայքում հաստատված վրաց արքայազն Հռադամիզդը դիմում է փախուստի և շատ չանցած մահապատժի ենթարկվում իր իսկ հոր կողմից:

Տրդատի հայոց գահ բարձրանալով՝ հռոմեա-պարթևական մրցակցությունն ավելի խորացավ, և շուտով տասնամյա պատերազմ սկսվեց հռոմեացիների և պարթևա-հայկական զորքերի միջև:

Պատերազմը, որ սկզբում դանդաղ էր ընթանում, 58 թ. թևակոխեց ակտիվ գործողությունների փուլ: Պատերազմի հինգերորդ տարում հռոմեական զորավար Կորբուլոնը գրավեց Արտաշատը: Հայ-պարթևական զորքերը համառ դիմադրությունից հետո նահանջեցին դեպի պարթևական տիրույթներ: Կորբուլոնը՝ գարնանը պատրաստվելով շարժվել Տիգրանակերտ, հրամայեց ավերել Արտաշատը՝ պատճառաբանելով, թե զորքերի սակավության պատճառով չի կարող կայազոր թողնել այնտեղ: Մայրաքաղաքի ավերումը պայմանավորված էր նրանով, որ հռոմեացիները պարզապես սարսափում էին այն մտքից, որ Արտաշատն իր հզոր ամրություններով կարող է հայտնվել հայկական զորքերի ձեռքում:

Հռոմեացիները տիրացան նաև Տիգրանակերտին և կրկին հայոց գահ բարձրացրին օտարազգի թագավորի: Հայերն ու պարթևները չհանդուրժեցին այդ, և Վաղարշն իր բոլոր զորքերով շտապեց Հայաստան: Սկսվեցին բանակցությունները, որոնց արդյունքում որոշվեց Մեծ Հայքից դուրս բերել թե՛ պարթևական և թե՛ հռոմեական զորքերը: Ելնելով հռոմեա-պարթևական այդ համաձայնությունից՝ Վաղարշը դեսպանություն ուղարկեց Հռոմ՝ խնդրելով Ներոն կայսրին իր եղբայր Տրդատին ճանաչել հայոց թագավոր: Կայսրը, ձեռք բերված համաձայնությունը խիստ անպատվաբեր համարելով Հռոմի համար, մերժեց Տրդատին հեռակա թագադրելու առաջարկը: Եվ քանի որ Կորբուլոնը պաշտպանում էր Եփրատի ամրացված շրջանը, Հայաստան ուղարկվեց Պետոս զորավարի գլխավորությամբ մի նոր բանակ: Վերջինս գոռոզ և պատերազմական գործում ոչ հմուտ անձնավորություն էր: Նրան թվում էր, թե հեշտությամբ կարող է հաղթել հայերին և պարթևներին: Նա անգամ սահմանային մի քանի բերդեր գրավելուց հետո Հռոմ զեկույց ուղարկեց, թե Հայաստանը նվաճված է: Նրա ինքնավստահությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ հարկ չէր համարում բանակի շուրջը պարեկություն հաստատել:

**նկ. Մարմարյա քանդակ Գառնիից**

62 թ. պարթևա-հայկական զորքերը Վաղարշի և Տրդատի գլխավորությամբ պատերազմական գործողություններ սկսեցին հռոմեացիների դեմ: Հաջողության չհասնելով Եփրատի ափերին՝ Վաղարշն իր զորքերով միացավ Տրդատի հայ-պարթևական ուժերին: Հայ-պարթևական բանակները նույն թվականին փայլուն հաղթանակի հասան Պետոսի բանակի նկատմամբ Հռանդեա (Եռանդ) կոչվող վայրում: Հռոմեական բանակի անպարտելի համարվող զինվորները ենթարկվեցին տարբեր նվաստացումների և ստիպված եղան անցնել «լծի» տակով՝ թշնամուն հանձնելով իրենց զենքերը: Անարգանքի «լուծը» երեք նիզակից էր կազմված, որի տակով սողալով ստիպված էին անցնել հռոմեացի գոռոզ զինվորները: Այդպիսի անարգանքի չէին ենթարկվել հռոմեացի զինվորները վաղուց ի վեր: Հռոմի պարտությունն ակնհայտ էր: Պետոսի զորաբանակները լքեցին Հայաստանը և արագորեն տեղափոխվեցին կայսրության տարածք: Վաղարշը կրկին դեսպանություն ուղարկեց Հռոմ, պահանջելով իր եղբայր Տրդատին ճանաչել Հայոց թագավոր: Ներոնն էլ պատրաստ էր այդ ճանաչելու՝ պայմանով, որ Տրդատն անձամբ գա Հռոմ և իր ձեռքից ստանա հայոց թագը: Ներոնն այդ ճանապարհով կամենում էր ինչ-որ չափով վերականգնել կայսրության խարխլված հեղինակությունն Արևելքում: Ավելին, այդ քայլով Հռոմն ուզում էր ցույց տալ, որ ոչ թե իր կրած պարտության պատճառով, այլ կայսեր հանդես բերած մեծահոգության շնորհիվ է Տրդատն ստանում հայոց գահը: Հայոց ավագանին և պարթևական արքունիքը՝ կայսեր առաջարկը իրավացիորեն դիտելով որպես իրենց հաղթանակ, համաձայնեցին Ներոնի առաջարկին: Տրդատը 65 թ. 3000-անոց թիկնախմբով, որի մեջ էին

նրա ընտանիքը, բազմաթիվ հայ և պարթև մեծամեծ իշխաններ, ճանապարհ ընկավ Հռոմ և կայսերը հանդիպեց Նեապոլիսում: Հայոց թագավորի պատվին կազմակերպվեցին զանազան հանդեսներ, կրկեսային ներկայացումներ, գազանամարտեր: Շատ չանցած Տրդատը Հռոմի ֆորումում թագադրվեց Ներոնի կողմից և Հայաստան վերադարձավ որպես օրինական թագավոր: Կայսրը Արտաշատը վերականգնելու համար, որն ավերվել էր հռոմեացիների կողմից, մեծ գումար նվիրեց և արհեստավորներ տրամադրեց Տրդատ արքային: Տրդատ Ա-ով սկիզբ դրվեց Արշակունիների կրտսեր ճյուղի իշխանությանը Մեծ Հայքում:

**նկ. Գառնիի հեթոսական տաճարը ( I դ.)**

**նկ. Հռոմեական կայսր Ներոնի կիսանդրին (54-68 թթ.)**

Տրդատի հետագա գործունեության մասին սուղ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նրա օրոք նշանակալից շինարարություն է իրականացվել, որի արդյունքում ոչ միայն վերականգնվել է Արտաշատը, որը հայոց թագավորը դիվանագիտորեն կոչել է Ներոնեա, այլև կառուցապատվել են երկրի այլ շրջանները: Հատկապես մեծ շինարարություն ծավալվեց Գառնիում, որի մասին հավաստում է Տրդատի՝ Գառնիում թողած հունարեն արձանագրությունը. «Հելիոս (արև) Տիրիդատես (Տրդատ) թագավոր Մեծ Հայքի, թագավորելով իբրև դեսպոտ (վեհապետ) կառուցեց պայծառափայլ թագուհու համար 11-րդ տարում (75 թ.) իր թագավորության»: Ամրոցը հիմնովին վերակառուցվեց, վեր խոյացան ամրոցի հզոր պարիսպները, հեթանոսական տաճարը և մյուս կառույցները: Հատկապես նշանավոր է Գառնիի հեթանոսական տաճարը, որը հանդիսանում է հայկական, հելլենիստական և հռոմեական ճարտարապետության ներդաշնակ համակցություն:

Հայտնի է նաև, որ Տրդատ Ա-ն մի շարք պատերազմներ է մղել, հատկապես Հյուսիսային Կովկասից Այսրկովկաս ներխուժած ալանական ցեղերի դեմ: Թշնամու դեմ կռվում Տրդատը մահացու վտանգի է ենթարկվում, երբ թշնամիներից մեկի նետած օղապարանը փաթաթվում է նրա ուսից մինչև աջ կողմի անութը: Բայց նա իրեն չի կորցնում և, սրով կտրելով պարանը, հաղթական ավարտի է հասցնում ճակատամարտը:

Տրդատը՝ պատկանելով պարթև Արշակունի արքայատոհմին, բնականաբար պետք է հետևեր պարթևական արքունիքի և ցեղային սովորույթներին ու բարքերին: Նրա հետ Մեծ Հայք եկան նշանակալից թվով պարթև ազնվականներ, որոնք զգալիորեն նպաստեցին պարթևական մշակույթի և ազդեցության տարածմանը Հայաստանում: Սակայն Հայաստանում Արտաշիսյանների օրոք հայկական տեղական ավանդույթներն այնքան խոր արմատներ էին ձգել, որ պարթևազգի իշխողները, սկսած հենց Տրդատ Ա-ից, բռնում են հայացման ճանապարհը: Այդ գործընթացն սկզբում դանդաղ էր ընթանում, քանի որ հռոմեա-պարթևական պայմանագրով Մեծ Հայքում պարթև Արշակունիների իշխանությունը ժառանգական չէր: Պարթևները հայոց արքայի մահից հետո ներկայացնում էին նոր գահակալի թեկնածությունը, որը հաստատվելու էր հռոմեացիների կողմից: Սակայն կողմերը միշտ չէ որ հարգում էին իրենց պարտավորությունները, ինչը հաճախ հանգեցնում էր պատերազմների: Իր հերթին Մեծ Հայքի Արշակունի թագավորները լուրջ քայլեր էին ձեռնարկում իրենց իշխանությունը ժառանգական դարձնելու ուղղությամբ: Նրանց իշխանությունը ժառանգական դարձավ II դարի վերջերից, որի շնորհիվ նրանք՝ խնամիական ու այլ կապերով կապվելով հայոց թագավորության ավագանու հետ, արագորեն հայացան: Արշակունիներն ընդունեցին հայկական բարքերն ու սովորությունները և իրենց վարած ներքին ու արտաքին քաղաքականությամբ ցույց տվեցին, որ իսկական հայ թագավորներ են:

**նկ. Տրդատ Ա-ի Գառնիում թողած հունարեն արձանագրությունը**

Հայ ժողովուրդը ջերմորեն ընդունեց Տրդատ Ա-ի իշխանությունը, նրան անվանեց Արտաշես՝ դարձնելով նրան, որպես հարազատ թագավորի, իր երգերի սիրելի հերոսներից մեկը:

*Ընթերցանության համար*

## ԿՈՌՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՌԱՆԴԵԱՅԻ (ԵՌԱՆԴԻ) ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդ ժամանակամիջոցում Արսանիաս (Արածանի) գետի վրա, որը ճամբարի առջևից էր հոսում, կամուրջ գցվեց այն պատրվակով, թե իբր այդ կամուրջն իրեն պիտի ճանապարհ ծառայի, սակայն պարթևներն իբրև ապացույց տարած հաղթության՝ կամուրջն իրենց իշխանության տակ առան: Եվ իսկապես այդ կամուրջը նրանց պետք եղավ, իսկ մերոնք գնացին հակառակ ուղղությամբ: Դրան լուր ավելացավ, թե լեգեոններն անց են կացրել լծի տակով, և պատմում էին այլ անհաջողություններ, որոնց նման բան հայերի կողմից ի կատար էր ածվել: Հռոմեական զորքի հեռանալուց առաջ թշնամիները մտան ճամբարի ամրությունները, շրջապատեցին ճանապարհները. նրանք ճանաչում էին մի ժամանակ հռոմեացիների կողմից գերի վերցրած իրենց ստրուկներին և գրաստն ու հետ էին խլում. հափշտակում էին անգամ հագուստեղենը, պահած զենքերը. վախեցած զինվորը զիջում էր, որպեսզի մարտի ոչ մի առիթ չծագի: Վոլոգեսը սպանվածների զենքերից և մարմիններից կույտեր էր դիզել, որպեսզի դրանով վկայվի մեր պարտությունը»:

### ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ինչո՞ւ օտարազգի թագավորներն այդպես էլ հայկական արքայատոհմի հիմք չդրեցին:**
2. **Ի՞նչն էր ստիպում հայերին ու պարթևներին դաշնակցելու:**
3. **Ի՞նչ ծրագրեր ունեին հայերը Տրդատ Ա-ին, որը հայկական վիպասանքում հայտնի է Արտաշես անունով, հայկական գահ բարձրացնելով:**
4. **Ո՞վ էր հռոմեական զորքերի հրամանատարը 10-ամյա պատերազմի շրջանում:**
5. **Ի՞նչ կարևոր իրադարձություններ կարող եք հիշել 10-ամյա պատերազմի շրջանում:**
6. **Ի՞նչ շինարարական գործունեություն ծավալեց Տրդատ Ա-Արտաշեսը:**

**Քննարկման հարց**

**Ինչպե՞ս եք գնահատում Տրդատ Ա Արշակունու գահակալությունը Մեծ Հայքում:**

### ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Զենոն-Արտաշես • Վերգիլիոս • Վաղարշ Ա Արշակունի • Տրդատ •**
**• Հռադամիզդ • Կորբուլոն • Ներոն • Պետոս • Հռանդեա • Անարգանքի լուծ •**
**• Արշակունիների արքայատոհմ • Ներոնեա • Գառնի • Ալանական ցեղեր •**

**նկ. Սուրբ Թադեոս առաքյալի աջը**

***Սանատրուկ թագավոր: Քրիստոնեության տարածման սկիզբը Մեծ Հայքի թագավորությունում: Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներ:*** 76 թ. Տրդատ Ա-ին հայոց գահի վրա հաջորդեց Սանատրուկ թագավորը (76-110): Մի հույն պատմիչի խոսքերով՝ նա «հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմեացիների մեջ»: Նրա ռազմական հաջողություններից պետք է համարել հայկական իշխանության հաստատումը Հայաստանի հարավային հարևան Ասորիքի մի նշանակալից մասի վրա, որի կենտրոնն էր Եդեսիա կամ Ուռհա քաղաքը: Նրա օրոք Տարոնի և Հարքի սահմանակցության շրջանում, Արածանի գետի ափին, կառուցվում է Մծուրք քաղաքը, որը հետագայում քանդվել է երկրաշարժից ու լքվել:

Սանատրուկի ժամանակաշրջանը նշանավոր էր նրանով, որ Մեծ Հայքում քարոզեցին Քրիստոսի 12 առաքյալներից Թադեոսը և Բարթողիմեոսը ու նրանց աշակերտները, և ստեղծվեցին վաղ քրիստոնեական առաջին համայնքները: Թադեոսը Հայաստանում հիմնադրեց Հայոց առաքելական եկեղեցին, և պատահական չէ, որ պատմիչները Գրիգոր Լուսավորչի մասին գրում են, որ նա նստեց սուրբ Թադեոսի աթոռին: Թադեոս առաքյալին հաջողվեց քրիստոնյա դարձնել հայոց թագավոր Սանատրուկին և նրա դուստր Սանդուխտին: Սակայն եթե առաջինը՝ վախենալով երկրի մեծամեծներից, ետ կանգնեց քրիստոնեությունից, ապա նրա դուստրը, չնայած հոր և հարազատների հորդորներին, չի ուրանում քրիստոնեությունը և նահատակվում է Սանատրուկի հրամանով: Երեք օր հետո ձերբակալվում է նաև Թադեոս առաքյալը, ենթարկվում հալածանքների և շատ չանցած նահատակվում: Նա սպանվում է Արտազ գավառի Շավարշան ավանում: Հետագայում նրա սպանության վայրում կառուցվում է Սբ Թադեոսի վանքը: Բարթողիմեոսը, որ Հայաստան եկավ Թադեոսից հետո, քարոզում է Հեր ու Զարևանդ և մի քանի այլ գավառներում: Նրա ազդեցությամբ շատերը, այդ թվում թագավորի քույրը, ընդունում են քրիստոնեությունը: Բարթողիմեոսը նույնպես Սանատրուկի հրամանով ենթարկվում է հալածանքների և նահատակվում: Նա սպանվում է Արեբանոս կոչված վայրում, որտեղ հետագայում կառուցվում է Սբ Բարթողիմեոսի վանքը:

**նկ. Բաղնիքի մնացորդներ Արտաշատից**

Չնայած Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների և նրանց աշակերտների ու քրիստոնեություն ընդունած շատ հայերի նահատակությանը, քրիստոնեությունը արմատներ ձգեց Հայաստանում: Ծնունդ առան վաղ քրիստոնեական առաջին համայնքները: Դրանք աստիճանաբար ամրապնդվելով և ուժեղանալով՝ հող նախապատրաստեցին, որ IV դարի սկզբին քրիստոնեությունը Մեծ Հայքում հռչակվի պետական կրոն:

## *2. ՀԱՅԱՍՏԱՆԸ II-III ԴԱՐԵՐՈՒՄ*

Սանատրուկը մահացավ հավանաբար 110 թ. և թաղվեց հայոց թագավորների տոհմական գերեզմանոցում, որը գտնվում էր Եփրատ գետի ափին կառուցված Անի ամրոցում: Նրա դամբարանն այնքան ամրակուռ էր կառուցված, որ, երբ պարսկական զորքերը IV դարի կեսերին քանդեցին ու կողոպտեցին հայոց թագավորների հանգստարանը[10], նրանց այդպես էլ չհաջողվեց բացել ու ավերել Սանատրուկի գերեզմանը:

**նկ. Մեծ Հայքի թագավորության քարտեզն ըստ Պտղոմեոսի ( II դ.)**

Պարթևա-հռոմեական հակասությունները խիստ սրվեցին այն բանից հետո, երբ Սանատրուկին փոխարինած Աշխադարը փորձ արեց իր ասորական տիրույթները Հռոմին զիջելու միջոցով իր իշխանությունը դարձնել ժառանգական: Պարթևական արքունիքը, առանց Հռոմի համաձայնության, նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց Պարթամասիրին: Դրան հակառակ, հռոմեական կայսր Տրայանոսը դա համարեց Հռանդեայի պայմանագրի խախտում և 114 թ. մեծ արշավանք ձեռնարկեց դեպի Մեծ Հայք և Պարթևստան: Նա փորձ արեց հայոց թագավորությունը վերածել հռոմեական պրովինցիայի, սակայն հաջող սկսված արշավանքը ձախողվեց, կայսրը մահացավ: Նրան հաջորդած Հադրիանոս կայսրը՝ շատ լավ գիտակցելով, որ Հռոմի ուժերն այլևս բավարար չեն նոր նվաճումների համար, հրաժարվեց այդ արկածախնդրական քայլից և ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

***Վաղարշ Ա:*** 117 թվին հռոմեացիները ճանաչեցին Սանատրուկի որդի Վաղարշ Ա-ի (117-140 թթ.) իշխանությունը: Նրա օրոք պարսպապատվեց Վարդգեսավանը, վերածվեց պետության մայրաքաղաքի՝ թագավորի անունով ստանալով Վաղարշապատ անվանումը: Այն կոչվել է նաև

10 Այսպես է կոչվել նաև գերեզմանատունը:

Նոր քաղաք, որը հետագայում այնտեղ գտնվող վանքի անունով կոչվել է նաև Էջմիածին: Վաղարշ Ա-ից հետո, շատ չանցած, հռոմեացիները գահ են բարձրացնում հռոմեական ծերակույտի անդամ Սոհեմոսին, որը հայկական աղբյուրներում հայտնի է Տիգրան Վերջին անունով:

Նրա իշխանությունն ընդհատվեց 161 թ., երբ հայերը Տրդատ իշխանի գլխավորությամբ կարճ ժամանակով նրան վտարեցին երկրից, իսկ հռոմեական զորքերը ծանր պարտություն կրեցին: Սակայն վերջիններս մի քանի տարի անց նրան վերահաստատեցին հայոց գահին: Նա կրկին գահ բարձրացավ Վաղարշապատում կամ Նոր քաղաքում, որը դրանից հետո վերածվեց պետության մայրաքաղաքի: Տրդատը, որի խիզախությունը շարժում էր անգամ հռոմեացիների հիացմունքը, աքսորվեց հեռավոր Բրիտանիա: Կրկին ավերածության ենթարկվեց Արտաշատը, իսկ Մեծ Հայքում հաստատվեցին հռոմեական կայազորներ:

**նկ. Լատիներեն արձանագրություն Վաղարշապատից**

Տիգրան Վերջինից կամ Սոհեմոսից հետո հայոց գահ բարձրացավ Վաղարշ Բ-ն (191-211): Վարելով ճկուն և հեռատես քաղաքականություն՝ նա բարիդրացիական հարաբերություններ է հաստատում Հռոմի հետ: Այդ քաղաքականության շնորհիվ հռոմեական կայազորները հանվում են Վաղարշապատից և այլ վայրերից: Հայկական զորքը ուժեղացնելու և Կովկասյան լեռնանցքները պաշտպանելու համար Հռոմը նշանակալից գումար է հատկացնում հայոց թագավորին, նաև կալվածքներ նվիրում նրան Կապադովկիայում: Հռոմը, որ կամենում էր խուսափել հյուսիսային լեռնականների ավերիչ ասպատակություններից, փորձում էր իր սահմաններն ապահովագրել հայկական զինված ուժերի միջոցով:

***Վաղարշ Բ-ն Մեծ Հայքի ժառանգական թագավոր:*** Ինչպես արդեն նշվեց, մինչև Վաղարշ Բ-ն հայոց թագավորները նշանակվում էին մեծ մասամբ պարթև Արշակունիների տոհմի ներկայացուցիչներից և հաստատվում Հռոմի կողմից: Հռոմը, որի համար Մեծ Հայքի դաշնակցությունը մեծ կարևորություն էր ձեռք բերում, ճանաչեց իշխող արքայատոհմի ժառանգական իշխանությունը: Դա դրական և կարևոր նշանակություն ունեցավ Հայոց թագավորության հետագա զարգացման համար:

211 թ. Վաղարշ Բ-ն զոհվեց կովկասյան լեռնականների դեմ պատերազմում և նրան փոխարինեց Խոսրով Ա-ն կամ Մեծը, որը մեծ և հաղթական արշավանք կազմակերպեց նրանց դեմ:

Օրավուր թուլացող Հռոմեական կայսրության որոշ գահակալներ, սակայն, չէին հրաժարվել Մեծ Հայքի թագավորությունը հռոմեական պրովինցիա դարձնելու մտքից: Իբրև թե Խոսրովին իր որդիների հետ հաշտեցնելու նպատակով հայոց թագավորը կանչվում է կայսրություն և բանտ նետվում: Սակայն երբ հռոմեական զորքերը փորձեցին ուժով տիրել Հայոց թագավորությանը, ծանր պարտություն կրեցին հայկական բանակից: Կամենալով հարթել հակասությունները Հայոց թագավորության հետ՝ հռոմեացիները թագ տվեցին Խոսրովին, ազատ արձակեցին նրա մորը և ուղարկեցին Հայաստան: Ավելին, նրան վերադարձվեցին ոչ միայն Հայաստանից տարած ավարը, այլև նախկինում նրան նվիրած և բռնագրավված կալվածքները: Հունա-հռոմեական աղբյուրներում Խոսրով Մեծը հայտնի է Տրդատ Բ անունով:

**նկ. Արտաշիր Սասանյանի արծաթե դրամը**

***Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և Մեծ Հայքի թագավորությունը:*** Խոսրով Մեծի օրոք (211-259 թթ.) 226 թվին Պարսկաստանում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ, որոնք անմիջականորեն շոշափում էին նրա հարևանների շահերը: Պարսք աշխարհի արքայիկներից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, տապալում է Արտավան Ե-ի

իշխանությունը, կործանում Պարթևական թագավորությունը և հիմնադրում Սասանյանների Պարսից տերությունը: Արտաշիրը և նրա հաջորդները ձգտում էին շուրջ 6 դար հետո վերականգնել Աքեմենյան Պարսկաստանի երբեմնի հզորությունն ու տիրույթները:

Մեծ Հայքի թագավորությունը դրանով իսկ դառնում է Սասանյան Պարսկաստանի գլխավոր թշնամիներից մեկը: Պատճառն այն էր, որ այն նախկինում մաս էր կազմել Աքեմենյան տերության, և այնտեղ շարունակում էր իշխել Արտաշիրի կողմից տապալված Արշակունիների արքայատոհմի հայկական ճյուղը: Իր հերթին Հայոց թագավորությունն էլ վճռական քայլեր ձեռնարկեց պարթև Արշակունիների իշխանությունը Պարսկաստանում վերականգնելու համար: Խոսրով Մեծը ոչ միայն ապաստան տվեց պարթև վերջին թագավոր Արտավան Ե-ի փախստական որդիներին և հարազատներին, այլև մեծ թվով պարթև ազնվականների ու մեծատոհմիկների: Սրանք, ձգտելով վերականգնել իրենց իշխանությունը և կարիք ունենալով հայկական զինված ուժերի օգնության, ճանաչեցին Խոսրովին որպես Արշակունյաց տոհմի գլխավորի: Հայոց թագավորին, որի զորքերը պատերազմի սկզբին ազատագրեցին հյուսիսարևմտյան Պարսկաստանի մեծ մասը, օգնում էին վրացական և աղվանական զինված ուժերը: Իր հնարավորությունների շրջանակում Հայոց թագավորությանը օգնում էր նաև թուլացած Հռոմը:

**նկ. Օծանելիքի սրվակներ (I-III դդ.)**

Եթե նախկինում հայոց պետականությունը վտանգվում էր ուժեղ Հռոմի կողմից, ապա այժմ նրա անկախության համար անմիջական վտանգ էր ներկայացնում Սասանյան Պարսկաստանը: Ինչպես նախկինում պարթևները, այդպես էլ այժմ Հռոմն էր շահագրգռված, որ պահպանվի ուժեղ հայկական պետությունը՝ որպես հակակշիռ Սասանյան Պարսկաստանի: Նախկինում պարթևների հետ դաշնակցող հայերը այժմ արդեն հակասասանյան պայքարում դաշնակցում էին Հռոմի հետ՝ փորձելով երկրի անվտանգությունն ապահովել հռոմեական զինված ուժերի աջակցությամբ:

Արտաշիրի պայքարը հայ-հռոմեական ուժերի դեմ սկզբում ավարտվում է նրա ծանր պարտություններով: Մեծ Հայքի թագավորությունը շուրջ երկու տասնամյակ զերծ է մնում պարսկական արշավանքներից: Վիճակը փոխվեց, երբ իշխանության գլուխ եկավ Շապուհ Ա Սասանյանը: Պարսից ռազմատենչ փառասեր արքային 252 թ. հաջողվում է ռազմակալել Մեծ Հայքի թագավորության մեծ մասը: Խոսրով Ա-ն քաշվում է թագավորության արևմտյան շրջանները:

**նկ. Բաղնիքի խճանկար Գառնիից**

256 թվին մեծ բանակով Արևելք եկավ Վալերիանոս կայսրը, և հռոմեական օգնության շնորհիվ Խոսրով Մեծին հաջողվեց վերականգնել իր իշխանությունը թագավորության ողջ տարածքում: Սա խիստ անհանգստացրեց Շապուհ Ա-ին, որը Խոսրով Մեծին սպանելու առաջադրանքով Հայաստան է ուղարկում պարթև իշխան Անակին և նրա եղբորը իրենց ընտանիքներով, որոնք իբր փախել էին Սասանյանների հալածանքներից: Նրանք Հայաստանում գտնվելու երրորդ տարում՝ 259 թ., սպանեցին Խոսրով Մեծին: Դավադիրներն սպանվեցին հոգեվարքի մեջ գտնվող հայոց թագավորի հրամանով, իսկ Անակի որդի Գրիգորին և Խոսրով Մեծի որդի Տրդատին փախցրեցին Հռոմ: Այնուհետև Մեծ Հայքում հաջորդաբար իշխանության գլուխ բարձրացան երեք Սասանյաններ, որոնցից առաջինը Որմիզդ Արտաշիրն էր: Սասանյանները փորձ էլ չարեցին վերացնելու Մեծ Հայքի թագավորությունը՝ վախենալով հայ ժողովրդի դիմադրությունից: Նրանք պարթև Արշակունիների նմանությամբ Մեծ Հայքի թագավորությունը վերածեցին Սասանյանների երկրորդ թագավորության:

Արքայազն Տրդատը Հռոմում մեծացավ, ստացավ փայլուն կրթություն և դարձավ զինվորական: Ցուցաբերած մեծ ծառայությունների համար կայսրությունն արդեն 274 թվին նրան թագադրեց և ուղարկեց Հայաստան, սակայն հայոց գահին հաստատվելու առաջին փորձը հաջող չեղավ: Կայսր դարձած Դիոկղետիանոսը 288 թվին զորքեր ուղարկեց Մեծ Հայք, և Տրդատը հաստատվեց իր թագավորության տարածքի մեծ մասում: Շապուհ Ա-ի որդի Ներսեհ Սասանյանը, որ փորձել էր հիմք դնել անկախ արքայատոհմի, ստիպված եղավ քաշվել Մեծ Հայքի արևելյան շրջանները: 293 թ. Ներսեհ Սասանյանը բազմեց սասանյան գահին: Նա՝ վախենալով հայերի հնարավոր գործողություններից, Տրդատ Գ-ին հանձնեց իր տիրույթները Մեծ Հայքում՝ պահելով միայն անդրտիգրիսյան երկրամասերը: Սակայն ամրապնդվելով գահի վրա՝ Ներսեհը պատերազմ սկսեց Հռոմի դեմ՝ փորձելով տիրել Մեծ Հայքին: Սկզբնական որոշ հաջողություններից հետո նա ջախջախիչ պարտություն կրեց Բասենի գավառի Օսխա գյուղի մոտ 297 թվին: Գերի ընկան շատ պարսիկ մեծամեծներ և թագավորի կանանոցը: Հայտնվելով անելանելի դրության մեջ՝ Ներսեհը Միջագետքի Մծբին քաղաքում կնքում է 40-ամյա հաշտություն, որով պարսից արքունիքը ճանաչում էր Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Շատ չանցած, Հռոմը Մծբինի պայմանագրով ստացած անդրտիգրիսյան երկրամասերը զիջում է Հայոց թագավորությանը: Արևելքում խաղաղություն է հաստատվում, և պատերազմներից հոգնած ժողովուրդները ազատ շունչ են քաշում:

***Ընթերցանության համար***

## ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏՐԴԱՏ Գ-Ի ԳԱՀ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ԵՎ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Որովհետև չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության, ուստի մանրամասն հետազոտությամբ գտանք, որ Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, և այս կողմերն է եկել մեծ զորքով: Երբ նա Կեսարիա հասավ, նախարարներից շատերը նրան ընդառաջ գնացին: Եվ երբ հասավ մեր երկիրը, տեսավ, որ Օտան սնուցել է իր Խոսրովիդուխտ քրոջը և պահպանել է գանձերն ու ամրոցը մեծ համբերությամբ. և իսկապես էլ նա համբերող էր, ժուժկալ և շատ խելացի, որովհետև նա թեպետ Աստծու մասին ճշմարտությունը չիմացավ, բայց կուռքերի ստությունը հասկացավ: Նրա պես էր և նրա սան Խոսրովիդուխտը, որ մի օրինավոր համեստ կույս էր և ուրիշ կանանց նման չուներ բոլորովին անդուռ բերան:

Տրդատը Հայաստանի հազարապետ է նշանակում Օտային և շնորհակալությամբ պատվում է նրան, մանավանդ պատվում է իր դայեկորդի Արտավազդ Մանդակունուն, որ պատճառ եղավ իր փրկության և հայրենական փառքին հասնելուն. ուստի նրան է հանձնում հայոց զորքերի սպարապետությունը: Նույն պատճառով նրա քրոջ ամուսին Տաճատին Աշոցք գավառի (տեր) է դարձնում: Սա էր, որ հետագայում հայտնեց իր աներ Արտավազդին, և սա թագավորին, նախ՝ որ Գրիգորն Անակի որդին է, և հետո՝ Գրիգորի որդիների մասին. այս բաները նա իմացել էր Կեսարիայում ապրած լինելով»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Երբ և ո՞ւմ օրոք կառուցվեց Մեծ Հայքի նոր մայրաքաղաքը, որը հայտնի է նաև Նոր քաղաք անունով:**
2. **Ովքե՞ր առաջինը տարածեցին քրիստոնեական վարդապետությունը Հայաստանում:**
3. **Ինչո՞ւ Հռոմը ճանաչեց հայ Արշակունիների ժառանգական իշխանությունը:**
4. **Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական ի՞նչ իրադարձություն բախտորոշ նշանակություն ունեցավ Մեծ Հայքի թագավորության համար:**
5. **Սասանյան գահակալների հետապնդած ո՞ր քաղաքական ծրագրերն էին վտանգում Հայոց թագավորության անվտանգությունը:**

6. **Ի՞նչ էր իրենից ներկայացնում Մեծ Հայքի թագավորությունը Սասանյան գահակալների օրոք:**
7. **Ո՞րն էր Մծբինի հաշտության նշանակությունը Մեծ Հայքի թագավորության հետագա ճակատագրի համար:**

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Կարդացեք լրացուցիչ նյութը և փորձեք բնութագրել Տրդատ Գ թագավորին:**

## ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Սանատրուկ • Եդեսիա (Ուռհա) • Մծուրք • Թադեոս առաքյալ •**
**• Բարթողիմեոս առաքյալ • Գրիգոր Լուսավորիչ • Հայ առաքելական եկեղեցի •**
**• Թադեոսի աթոռ • Սանդուխտ • Արտազ գավառ • Հեր գավառ •**
**• Զարևանդ գավառ • Անի ամրոց • Աշխադար • Պարթամասիր • Տրայանոս •**
**• Վաղարշ Ա • Վարդգեսավան • Վաղարշապատ • Սոհեմոս • Խոսրով Ա •**
**• Արտաշիր Սասանյան • Շապուհ Ա Սասանյան • Վալերիանոս • Անակ •**
**• Մծբինի հաշտության պայմանագիր •**

**9-րդ թեմայի ամփոփում**

Ք.ծ.հ. I դարի առաջին կեսին Մեծ Հայքի թագավորներն օտարազգիներ էին ու Հռոմի դրածոներ, ինչն ստիպեց հայերին հակահռոմեական պայքարում դաշնակցել պարթևների հետ: Հայերի համաձայնությամբ պարթևական թագավոր Վաղարշ Ա Արշակունին հայոց գահ բարձրացրեց Տրդատ Ա Արշակունուն: Դա հանգեցրեց 10-ամյա պատերազմի՝ մի կողմից Հռոմի և մյուս կողմից՝ Մեծ Հայքի ու Պարթևստանի միջև: Հռանդեայում (Եռանդում) պարտություն կրած Հռոմն ստիպված եղավ ճանաչել Մեծ Հայքի թագավորության անկախությունը՝ պայմանով, որ Տրդատ Ա-ն հայոց թագը ստանա Հռոմում Ներոն կայսեր ձեռքից: Տրդատը հանդիսավորությամբ թագադրվեց Հռոմում, և 66 թվից Հայաստանում ճանաչվեց Արշակունյաց արքայատոհմի իշխանությունը:

II դարի 60-ական թթ. Հայոց թագավորության մայրաքաղաք դարձավ Վաղարշապատը, իսկ մի քանի տասնամյակ անց հռոմեացիները ճանաչեցին հայ Արշակունիների ժառանգական իշխանությունը: 226 թ. Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և Պարթևական թագավորության անկումը աստիճանաբար մերձեցրին Հայաստանին և Հռոմին:

Մեծ Հայքի թագավորությունը Խոսրով Մեծ արքայի գլխավորությամբ ծանր կռիվներ մղեց Սասանյանների դեմ՝ պարթև Արշակունիների իշխանությունը Պարսկաստանում վերականգնելու համար: Սակայն վերջինս սպանվեց Սասանյանների գործակալ Անակի կողմից: Մեծ Հայքում հաստատվեցին Սասանյանները՝ վերածելով այն իրենց տոհմի երկրորդ թագավորության: III դարի վերջերին Տրդատ Գ Արշակունուն հաջողվեց վերահաստատվել իր նախնիների գահին:

# ԹԵՄԱ 10. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

## *1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ*

***Գյուղատնտեսություն, արհեստագործություն, առևտուր:*** Հայաստանը գյուղատնտեսության և արհեստագործության զարգացման համար ուներ բարենպաստ պայմաններ: Երկրագործության համար լայն հնարավորություններ ունեին Այրարատյան, Շիրակի, Տարոնի (Մշո), Բագրևանդի (Ալաշկերտ), Բասենի դաշտերը, Վանի շրջակայքը և բազմաթիվ գետահովիտներ: Զարգանում էին հացահատիկների մշակությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը: Երկրի ընդարձակ ալպյան մարգագետիններն ու արոտավայրերը կարծես բնության կողմից ստեղծված էին անասնապահությունը զարգացնելու համար: Հայաստանն աչքի էր ընկնում գյուղատնտեսական մթերքների արտադրության առատությամբ: Ավելի քան 2400 տարի առաջ հույն պատմիչ Քսենոփոնը պատմում է, որ հայերի տները լի էին տարբեր տեսակի մթերքներով. «Չկար մի տուն, որտեղ սեղանին չդնեին ուլի, խոզի, հորթի և հավի միս՝ ցորենի և գարու հացի հետ…

Այստեղ նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակի ընդեղեն»:

**նկ. Բրոնզե և ոսկրե իրեր Շենգավիթից (Ք.ա.IV-III հազ.)**

Ինչպես արդեն նշվել է, հույն պատմիչը հիշատակում է ընտիր գինիների ու գարեջրի մասին, որոնք խմում էին գետնի մեջ թաղված կարասներից՝ եղեգնի փողի օգնությամբ:

Հայաստանը հնուց ի վեր հայտնի էր ոսկու, արծաթի, երկաթի, պղնձի ու կապարի հանքերով և շինարարական քարատեսակներով՝ տուֆ, մարմար, որձաքար (բազալտ) և այլն: Մետաղային և ոչ մետաղային հանածոները նպաստում էին զանազան արհեստների զարգացմանը: Բանակի զենքերն ու զրահները, պաշարողական մեքենաները պատրաստվում էին հմուտ արհեստավորների ձեռքերով: Վերջիններս բացի բանակի կարիքները հոգալուց պատրաստում էին գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային իրեր (պղնձաման, անոթ, կարաս, կուլա, կուժ և այլն): Մեծ հռչակ էին ձեռք բերել հայ ոսկերիչներն ու արծաթագործները, որոնք հատկապես հմտացել էին կանացի նուրբ զարդեր պատրաստելու մեջ: Մեծ զարգացում էին ապրել կաշեգործությունը, մանածագործությունը և գորգագործությունը: Երկրում արտադրվող մետաղների մի մասն արտահանվում էր հարևան երկրներ:

**նկ. Բրոնզե կացին Առատաշեն գյուղից**

**նկ. Ապակե անոթներ (II-III դդ.)**

Հին Հայաստանի տնտեսության մեջ մեծ դեր էր խաղում ներքին և արտաքին առևտուրը: Հայաստանի վրայով էին անցնում Առաջավոր Ասիայի մի շարք առևտրական ճանապարհներ, որոնք հնարավորություն էին տալիս երկրին ակտիվ մասնակցություն ունենալ միջազգային տարանցիկ առևտրին: Առևտրական ճանապարհների հիմնական խաչմերուկը Արտաշատ մայրաքաղաքն էր, իսկ երկրորդ դարի վերջերից՝ Վաղարշապատը:

Տիգրան Մեծի և Արտավազդ Բ-ի իրականացրած բռնագաղթեցումների շնորհիվ Հայաստանի քաղաքների բնակչության մեջ մեծացավ առևտրականների ու արհեստավորների թիվը: Իհարկե, դրանց մեծ մասը հայեր էին, մնացածները՝ բռնագաղթեցված հույներ, ասորիներ, կիլիկեցիներ ու կապադովկիացիներ: Հայոց արքունիքը հոգ էր տանում ճանապարհների բարեկեցությանը և անվտանգությանը: Հատկապես նշանավոր էր «Հայոց արքունի պողոտան», որ իրար էր կապում

հայոց երկու մայրաքաղաքները՝ Արտաշատը և Տիգրանակերտը: Օրավուր աճող առևտրի պահանջմունքները հոգալու համար Տիգրան Մեծը, Արտավազդ Բ-ն և նրանց հաջորդները դրամներ հատեցին, որոնց հետ զուգահեռ օգտագործվում էին պարթևական և հռոմեական դրամները: Դրամ հատում էին ոչ միայն արքունի դրամահատարանները, այլև ինքնավար քաղաքները:

**նկ. Վաղ բրոնզեդարյան պաշտամունքային արձանիկ (Վանաձոր)**

Դատելով Հերոդոտոսի որոշ տվյալներից՝ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով: Կաշիներով բեռնավորված էշերի քարավանները գալիս էին Հայաստան, որտեղ կաշիները ձգում էին ուռենու ճյուղերի վրա, դարձնում նավեր, բեռնավորում գինու տիկերով, տակառներով ու էշերով և Եփրատի հոսանքով լողում մինչև Բաբելոն: Հայաստանն այլ երկրներից ներմուծում էր մետաքս, բամբակ, համեմունքներ, թանկարժեք քարեր, ապակյա անոթներ ու այլ ապրանքներ և արտահանում էր մետաղներ, արհեստագործական արտադրանք, գինիներ, ներկեր, մասնավորապես որդան կարմիր, կաշի, բուրդ, նժույգներ, ջորիներ և այլն:

***Գյուղեր, դասակերտներ, ագարակներ:*** Գյուղական բնակչությունը՝ շինականներ և գեղջուկներ, միավորված էր համայնքների մեջ: Վերջիններիս անդամներն սկզբում օգտվում էին հավասար իրավունքներից: Համայնքը ղեկավարելու համար գյուղի առավել ազդեցիկ ու հեղինակավոր անձնավորությունն ընտրվում էր գյուղի ավագ կամ գեղջավագ: Հողը բաժանվում էր ըստ երդերի շնչերի՝ հավասար չափով: Հարկերը նույնպես գանձվում էին յուրաքանչյուր շնչից հավասարապես: Համայնքի համար կարևորություն ներկայացնող բոլոր խնդիրները լուծում էր համայնքի անդամների ընդհանուր ժողովը: Համայնքի ընտանիքների շահագործմանը հանձնված հողերից բացի համայնքն ուներ ընդհանուր օգտագործման հողեր՝ արոտավայրեր, մարգագետիններ, որսատեղեր, անտառներ, ինչպես նաև ջրեր և լճակներ: Հետագայում, հասարակական հարաբերությունների զարգացման հետևանքով, համայնքն սկսեց շերտավորվել: Ժամանակի ընթացքում ուժեղացած ընտանիքներն աստիճանաբար յուրացնում էին համայնքի լավագույն մշակելի հողերը՝ մնացածներին թողնելով պակաս արգավանդ և անորակ հողերը: Հողաբաժանում կատարվում էր յուրաքանչյուր 15-20 տարին մեկ անգամ: Հողաբաժանման ենթակա չէին այգիները և բարելավման ենթարկված հողահանդակները: Աղքատ ընտանիքներն ստիպված էին վաշխով պարտք վերցնել հարուստներից իրենց գոյությունը պահպանելու համար, ինչը հաճախ ճակատագրական հետևանքներ էր ունենում նրանց համար:

**նկ. Քարե հավանգ (Շենգավիթ)**

Համայնքը չափից դուրս պահպանողական կառույց էր: Համայնքի գոյությունը ձեռնտու էր համայնական գյուղացիներին՝ նրանց իրավունքների պաշտպանության տեսակետից: Սակայն այն ձեռնտու էր նաև իշխանավորներին, քանի որ համայնքը համապարտ երաշխավորության[11] սկզբունքով պետք է վճարեր բոլոր հարկերը նաև չունևորների համար: Չմոռանանք, որ այն ժամանակվա տեխնիկայի պայմաններում հողի մշակումը, առուների անցկացումը և ոռոգման ապահովումը պահանջում էին համայնքի բոլոր անդամների միասնական ջանքերը: Անհատ գյուղացին այդ անել չէր կարող: Ուստի բնավ էլ պատահական չէ ժողովրդական այն ասացվածքը, թե «գյուղը կանգնի՝ գերան կկոտրի»: Պետության կանոնավոր բանակի նշանակալից մասը և աշխարհազորը համալրվում էին գյուղական համայնքի անդամներով, այդ պատճառով պետությունն աշխատում էր ամրապնդել համայնքը և թույլ չտալ, որ նրա անդամները ուրիշ տեղ տեղափոխվեն:

11 Համայնքը, անկախ իր անդամների վճարունակ կամ անվճարունակ լինելուց, պարտավոր էր բոլորի հարկերը վճարել, ինչը և հայտնի է *համապարտ երաշխավորություն* անունով:

**նկ. Քարե հավանգ (Շենգավիթ) Ձիթաճրագ Վանքասարից (Արցախ, I-III դդ.)**

**նկ. Բրոնզե դանակ Լոռի բերդից**

Գյուղական համայնքների հողերը համայնական էին, և նրանց կողքին գոյություն ունեին մասնավոր տնտեսություններ: Այդպիսի տնտեսությունները, որտեղ մեծ մասամբ ստրուկներ էին աշխատում, կոչվում էին դաստակերտ, ձեռակերտ կամ ագարակ: Պետության ամբողջ տարածքը համարվում էր արքունի սեփականություն, չնայած արքունի պաշտոնեությանը ծառայության դիմաց տրված հողերը միտում ունեին վերածվելու մասնավորի և ժառանգականի: Մեծ դաստակերտները պատկանում էին թագավորներին, նրա ընտանիքի անդամներին, արքունիքի պաշտոնյաներին, տաճարներին ու զորահրամանատարներին: Փոքր ագարակները պատկանում էին տեղական պաշտոնյաներին և զինվորներին: Դաստակերտներում և ագարակներում հիմնականում արտադրվում էին երկրագործական մթերքներ՝ ցորեն, գարի և այլ հացահատիկներ, պտուղներ, բանջարաբոստանային կուլտուրաներ: Դրանց արտադրանքի որոշ մասը խաշնարածական էր, սակայն կային նաև զուտ անասնապահական տնտեսություններ:

Հարուստ և ուժեղ հողատերերը աշխատում էին իրենց ձեռքում կուտակել և յուրացնել նաև համայնական հողերի մի մասը: Արքունիքը փորձում էր խանգարել նման գործընթացներին, քանի որ դրանք պետության համար վնասակար էին: Համայնքները նրա տնտեսական հիմնաքարերից էին: Դեռևս Արտաշես Ա արքան ամբողջ երկրով մեկ հողաբաժան սահմանաքարեր կանգնեցրեց, որոնց միջոցով նա ուզում էր հստակորեն բաժանել համայնքների (գյուղերի) և մասնավոր տնտեսությունների (դաստակերտների ու ագարակների) հողերը: Նպատակը մեկն էր, պաշտպանության տակ առնել գյուղական համայնքները, որոնք պետությանը հարկ էին տալիս և համալրում բանակը:

Հին Հայաստանի հիմնական արտադրողներն ազատ գյուղացիներն էին: Սակայն նրանց կողքին կային և նշանակալից թվով ստրուկներ, որոնց մի մասը պարտային էր[12], իսկ մյուսները ձեռք էին բերվում պատերազմների շնորհիվ: Մովսես Խորենացին պատմում է, որ Արտաշես Ա-ն «բազմամարդեցրեց հայոց աշխարհը՝ բազմաթիվ ազգեր բերելով և բնակեցնելով լեռներում, դաշտերում և հովիտներում»: Միայն Տիգրան Մեծի օրոք նվաճված երկրներից ավելի քան կես միլիոն մարդ բռնագաղթեցվեց Հայաստան, որոնք բնակեցվեցին հիմնականում քաղաքներում: Բռնագաղթեցվածների որոշ մասը որպես ստրուկ օգտագործվում էր մասնավոր տնտեսություններում, հատկապես արքունի դաստակերտներում ու ագարակներում, ճանապարհների, ամրոցների և ջրանցքների շինարարության մեջ:

**նկ. Կավե արձանիկ Արմավիրից (Ք.ա.II-I դդ.)**

***Քաղաքները:*** Վանի թագավորության անկումով Հայաստանի քաղաքային կյանքը ծանր հարված ստացավ: Քաղաքների մեծ մասն ավերվեց արդեն կիմմերական և սկյութական արշավանքների ժամանակ: Իրենց դիրքերը պահպանեցին փոքր թվով քաղաքներ, որոնց մեջ հելլենիզմի դարաշրջանում առանձնանում էին Վանը և Արմավիրը: Հելլենիզմի դարաշրջանն աչքի ընկավ քաղաքային կյանքի բուռն զարգացմամբ: Ծնունդ առան և բարգավաճեցին մի շարք մեծ ու փոքր քաղաքներ՝ դառնալով առևտրի ու արհեստագործության կենտրոններ: Նոր քաղաքների մեջ հիշատակության արժանի են Երվանդաշատը, Արտաշատը և Տիգրանակերտը: Նոր քաղաքները ծնվում էին ճանապարհային խաչմերուկներում և ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում: Քաղաքային բնակչությունը կազմում էր քաղաքային համայնքներ, որոնք պետությունից լայն ինքնավարություն էին ստանում: Քաղաքային բնակչությունը կազմված էր իշխանավորներից, արհեստավորներից, առևտրականներից և քաղաքային ռամիկներից կամ խաժամուժից: Քաղաքային բնակիչներն ազատված էին որոշ հարկերից: Առևտրի և արհեստների

12 *Պարտային* էր կոչվում պարտքի դիմաց ստրկացված շինականը կամ գյուղացին:

վերելքի շնորհիվ քաղաքները դարձան ոչ միայն դրամական շրջանառության կենտրոններ, այլև արքունիքի տնտեսական հիմքը: Քաղաքացիներն օգտվում էին ավելի լայն իրավունքներից, քան գյուղական համայնքների անդամները:

**նկ. Վանի բերդի սանդուղքները և ժայռապատ սրահներից մեկը**

**նկ. Տեսարան Արտաշատ մայրաքաղաքի պեղումներից**

Քաղաքում իշխող դիրք ուներ միջնաբերդը, որի շուրջը տարածվում էր պարսպապատ բուն քաղաքը կամ շահաստանը, որտեղ կենտրոնացած էր առևտրական և արհեստավորական բնակչությունը: Այստեղ էր գտնվում այն աստծու տաճարը, որի հովանավորության տակ էր համարվում քաղաքը: Արտաշատի հովանավոր աստվածուհին Անահիտն էր, որի շքեղ տաճարը կառուցված էր մայրաքաղաքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ի՞նչ է հայտնում Քսենոփոնը Հին Հայաստանի տնտեսության մասին:**
2. **Տնտեսության հատկապես ո՞ր ճյուղերն էին զարգացած Հայաստանում:**
3. **Ինչպիսի՞ն էր հայկական գյուղական համայնքն ըստ Քսենոփոնի:**
4. **Ի՞նչ նշանավոր քաղաքներ գիտեք Հին Հայաստանում:**
5. **Որտե՞ղ էր կիրառվում ստրուկների աշխատանքը:**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Փորձե՛ք Հին Հայաստանի տնտեսությունը ներկայացնել սխեմատիկ պատկերով:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Շինական • Գեղջուկ • Համայնք • Գեղջավագ •**
**• Համապարտ երաշխավորություն • Դաստակերտ • Ձեռակերտ • Ագարակ •**
**• Խաշնարած • Ազատ գյուղացի •**

## *2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ*

***Թագավոր: Արքունիք:*** Հին Հայաստանում պետության գլուխ կանգնած էր թագավորը, որը կոչվում էր թագավոր կամ արքա Հայոց Մեծաց: Նրա արձակած հրամանները օրենքի ուժ ունեին, նա զորքերի գերագույն հրամանատարն էր, երկրի կյանքի բոլոր ասպարեզների գլխավոր ղեկավարը: Թագավորի իրավասությունն էր պատերազմ հայտարարելը, հաշտություն կնքելը, այլ երկրներ դեսպանություններ առաքելը և դեսպանություններ ընդունելը, նոր քաղաքներ ու ամրոցներ հիմնադրելը և անվանակոչելը:

**նկ. Վահագն աստծո և Անտիոքոս Ա Երվանդունու պատկերաքանդակը Կոմագենեի Արսամեա սրբավայրում**

Հայոց թագավորների իշխանությունը, բացառությամբ առաջին Արշակունիների, ժառանգական էր և անցնում էր հորից ավագ որդուն: Արտաշիսյան թագավորները Տիգրան Մեծից սկսած մեծ մասամբ կրում էին արքայից արքա, այսինքն թագավորների թագավոր տիտղոսը: Որոշ Արշակունիներ և Մեծ Հայքում գահակալած Սասանյաններ կրել են Մեծ Հայաստանի մեծ թագավոր տիտղոսը: Հայոց թագավորներից մի քանիսն ունեցել են Աստված կոչումը, որի նպատակն էր թագավորական իշխանության փառաբանումը և նրա հեղինակության բարձրացումը (օրինակ՝ Տիգրան Մեծը):

Թագավորը երկիրը կառավարում էր արքունիքի միջոցով: Արքունիքը ներկայացնում էին թագավորը, նրա որդիներն ու եղբայրները, արքունի գործակալները, մեծամեծ իշխանները և արքունի պաշտոնեությունը: Արքունի գործակալներին սկզբում նշանակում էր թագավորը, և

նրանք իրականացնում էին երկրի բարձրագույն իշխանությունը տնտեսական, ֆինանսական, դատական և այլ բնագավառներում: Ավելի ուշ գործակալական իշխանությունը դարձավ այս կամ այն նախարարական ընտանիքի ժառանգական իրավունքը: Գործակալությունները, որ համապատասխանում էին մերօրյա նախարարություններին, հավանաբար մեկ տասնյակից ավելի էին:

Գործակալությունների մեջ իր կարևորությամբ և նշանակությամբ առանձնանում էր հազարապետությունը: Այն բնակչությունից գանձում էր հարկերն ու տուրքերը, իրականացնում էր նոր քաղաքների ու ամրոցների հիմնադրումը, կառուցում էր ճանապարհներ ու ջրանցքներ և կատարում տնտեսական այլ գործառույթներ: Կարևոր գործակալություն էր սպարապետությունը: Պատերազմի ժամանակ սպարապետը թագավորի անմիջական օգնականն էր, զորքի փաստական հրամանատարը: Նա էր իրականացնում զորքի ռազմամթերքի և պարենի մատակարարումը:

**նկ. Տրդատ Գ-ի հունարեն արձանագրությունը Նփրկերտի պարսպին (III դ.)**

Արքունիքում կարևոր դեր ուներ թագավորի թիկնապահ հեծելազորը կամ մաղխազական գունդը, որն ապահովում էր թագավորի և արքունիքի անվտանգությունը: Տասհազարանոց թիկնապահ գնդի 6000 մարտիկներ պատերազմի ժամանակ մշտապես ուղեկցում էին թագավորին և մասնակցում պատերազմական գործողություններին:

Մարդպետական գործակալությունը, որ արքունի ներքինիների մենաշնորհն էր, ապահովում էր երկրի ներքին կյանքի անվտանգությունը, հսկում էր արքունի գանձերին և ապահովում թագուհու անվտանգությունը: Նրա տրամադրության տակ էր գտնվում 15 հազարանոց մարդպետական գունդը:

Երկրում խիստ բարձր էր քրմապետի հեղինակությունը, որն ընտրվում էր սովորաբար թագավորի եղբայրներից, հանդիսանում էր հեթանոսների կրոնական առաջնորդը, վարում էր մեծ դատավարություն գործակալությունը և թագավորի թիվ մեկ խորհրդատուն էր: Նրա ենթակայության տակ էին թագավորական տաճարների կալվածքներն ու դարերով կուտակված հարստությունները:

***Հին Հայաստանի տարածքը, վարչական բաժանումը և բանակը:*** Հայաստանի Երվանդականների թագավորությունը միակ պետությունն էր, որ իր մեջ միավորեց ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների նախօրյակին կամ Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի տարածքում ծնունդ առան Մեծ և Փոքր Հայքի թագավորությունները, որոնցից առաջինը գոյատևեց մինչև 428 թ.: Արտաշես Ա-ի օրոք Մեծ Հայքի թագավորությունը դուրս եկավ Կասպից և Սև ծովի ափերը, տիրացավ Արևելյան Վասպուրականին և Ուրմիո լճի արևմտյան առափնյա մասին, ինչպես նաև մինչև Տիգրիս գետն ընկած հողերին: Որոշ բացառություններով այդ կացությունը պահպանվեց մինչև Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանումը:

Սկզբնական շրջանում Մեծ Հայքի թագավորությունը վարչական առումով բաժանվում էր գավառների, որոնք, ինչպես նշել ենք, հունա-հռոմեական հեղինակները անվանում էին ստրատեգիաներ կամ պրեֆեկտուրաներ: Նրանց կառավարիչներն սկզբում կոչվում էին նախարար կամ ստրատեգոս: Ի դարում, ինչպես հավաստում է Պլինիոս Ավագը, Մեծ Հայքը բաժանված էր 120 ստրատեգիաների: Դժվար չէ տեսնել, որ նախարարը սկզբում նշանակովի պաշտոնյայի անվանում է եղել (ինչպես և մեր օրերում), իսկ հետո, միջնադարում, նախարարն արդեն նշանակում էր իշխան:

Ի դարի երկրորդ կեսին Մեծ Հայքը բաժանվեց նահանգների կամ աշխարհների, որոնց թիվը սկզբում 20/2/ էր: Վերջիններս ունեին իրենց դիվանատները (գրասենյակները)՝ ֆինանսական և այլ վարչություններով: Գավառների վարչական միավորները գյուղական համայնքներն էին,

որոնց գլուխ կանգնած էր գեղջավագը՝ պետական ստորադաս պաշտոնյան: Նա իրականացնում էր հարկերի գանձումը, պարհակների կատարումը, առուների ու գյուղական ճանապարհների անցկացումը, բանակի համար զինվորների հավաքագրումը և այլն:

Պետական իշխանության կարևորագույն մասն էին կազմում թագավորական զինված ուժերը կամ բանակը: Վերջինս որպես կանոն հավաքագրվում էր հայերից, չնայած արքունիքին կից մարդպետական գունդը սկզբում հավաքագրվում էր մարդ ցեղի ներկայացուցիչներից: Տիգրան Մեծի տերության շրջանում 300-հազարանոց հայկական բանակը կազմված էր ոչ միայն հայերից, այլև նվաճված ու ենթակա երկրների բնակչությունից, ինչպես նաև դաշնակից ցեղերի ներկայացուցիչներից: Ինչպես հավաստում է «Զորանամակ»-ը, հայկական բանակն ուներ 120 հազար մարտիկ, որից 4 բյուրը արքունական զորքերն էին, որոնք բդեշխների գլխավորությամբ իրականացնում էին երկրի սահմանների պաշտպանությունը: Հայոց բանակը ռազմակալող զորամասեր ուներ հարևան Վիրքի և Աղվանքի թագավորություններում: Իշխանական զորաջոկատները մարտի դաշտում առաջնորդվում էին չորս սպարապետների կողմից, որոնք ենթարկվում էին ընդհանուր սպարապետին:

Զորքի գլխավոր հարվածային ուժը հեծելազորն էր, որը զինված էր նիզակներով, սրերով, վահաններով և նետ ու աղեղներով: Հեծյալն ու ձին մի միասնություն էին կազմում և կոչվում այրուձի: Զրահով պաշտպանված էին թե՛ հեծյալի և թե՛ ձիու առավել խոցելի մասերը: Բանակի մեծ մասը կազմում էին հետևակային զորամասերը: Այն բաղկացած էր նետաձիգներից, նիզակակիրներից, սակրավորներից ու տեգակիրներից: Պատերազմի ժամանակ բանակը համալրվում էր աշխարհազորային զորամասերով կամ աշխարհազորով, որը հավաքագրվում էր հասարակ ժողովրդից: Սովորաբար աշխարհազորային զորամասերն առաջնորդում էին գավառակալ իշխանները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ի՞նչ էին իրենցից ներկայացնում թագավորական իշխանությունն ու արքունիքը:**
2. **Ի՞նչ տիտղոսներ էին կրում հայոց թագավորները:**
3. **Ի՞նչ գործակալություններ գիտեք Հին Հայաստանում: Որո՞նք էին նրանց գործառույթների շրջանակները:**
4. **Քանի՞ ստրատեգիայի էր բաժանվում Մեծ Հայքի թագավորությունը: Իրենցից ի՞նչ էին ներկայացնում դրանք և վարչական ո՞ր միավորի հետ են նույնանում:**
5. **Ինչքա՞ն էր հայոց բանակի թվակազմը և ինչպիսի՞ն էր նրա կառուցվածքը:**
6. **Զինվորական ի՞նչ պաշտոններ էին բդեշխը և սպարապետը:**

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Համեմատե՛ք Հին Հայաստանի և Վանի թագավորության պետական կարգերը:**

| Նմանություններ | Տարբերություններ |
|---|---|
| | |
| | |
| | |

## ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Արքունիք • Գործակալություն • Հազարապետություն • Սպարապետություն •**
**• Մաղխազական գունդ • Քրմապետ • Ստրատեգիա • Պրեֆեկտուրա •**
**• Նախարար • Ստրատեգոս • Դիվանատուն • Պարհակ •**
**• Մարդպետական գունդ • Բդեշխ • Այրուձի • Աշխարհազոր •**

**10-րդ թեմայի ամփոփում**

1. Հին Հայաստանը եղել է հիմնականում ագրարային երկիր, որտեղ բարձր զարգացման են հասել երկրագործությունը և խաշնարածությունը: Հելլենիզմի դարաշրջանում բուռն վերելք է ապրում քաղաքային կյանքը՝ նպաստելով արհեստների ըստ ամենայնի զարգացմանը: Պետության տնտեսական հիմքը կազմում էին գյուղական համայնքները և քաղաքների արհեստավորական խավը: Սրանց կողքին աստիճանաբար ձևավորվում են մասնատիրական տնտեսությունները: Կարգավորելու համար գյուղական համայնքների և մասնավոր տնտեսությունների հողային կալվածքների սահմանները՝ հայոց Արտաշես Ա թագավորը նրանց միջև սահմանաքարեր հաստատեց: Կայուն և ուժեղ համայնքը, որ հիմնականում համալրում էր բանակը, անհրաժեշտ էր արքունիքին, ուստի հայոց թագավորներն այն վերցնում էին իրենց հովանավորության ներքո:

   Պետության գլուխ կանգնած էր գրեթե անսահմանափակ իրավունքներ ունեցող թագավորը, որը երկիրը կառավարում էր արքունիքի և պաշտոնեության միջոցով: Արքունիքում կային մի շարք գործակալություններ, որոնք տնտեսական, վարչական, ռազմական և այլ գործառույթներ ունեին: Կարևոր գործակալություններն էին հազարապետությունը, սպարապետությունը, հայրմարդպետությունը, մաղխազությունը, մեծ դատավարությունը, որոնցից վերջինը սկզբում քրմապետի և հետագայում կաթողիկոսի իրավունքն էր, իսկ մյուսները՝ այս կամ այն խոշոր նախարարության:
3. Պետության կյանքում մեծ նշանակություն ուներ բանակը, որը Ք.ա. VI դարում բաղկացած էր 40 հազար հետևակից և 8 հազար հեծյալից: Տիգրան Մեծի օրոք բանակի թիվը հասավ 300 հազարի: Արշակունյաց շրջանում բանակի թվակազմը 120 հազար էր, որից 40 հազարը արքունի գնդերն էին, որոնք ղեկավարվում էին 4 բդեշխների կողմից: Իշխանական զորաջոկատները պատերազմի ժամանակ ղեկավարվում էին երկրի չորս սպարապետների կողմից: Բանակի գլխավոր հրամանատարը թագավորն էր, իսկ նրա բացակայության ժամանակ զորքերը գլխավորում էր բանակի ընդհանուր սպարապետը:

# ԹԵՄԱ 11. ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

## *1. ՎԱՂ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

***Հայկական մշակույթի ակունքները:*** Հայ մշակույթի ակունքները գալիս են դեռևս տոհմացեղային շրջանից և հայկական ցեղային միությունների ու պետական կազմավորումների ժամանակներից: Դրանք մեզ ծանոթ են ոչ միայն պահպանված առասպելներից, կրոնական հավատալիքներից, այլև պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերից: Պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերվել են բազմաթիվ հնագույն բնակավայրեր, կիկլոպյան ամրոցներ, պեղվել են հարուստ դամբարաններ (Լճաշեն, Վանաձոր և այլն): Դրանցում գտնված բարձր ճաշակով ու արվեստով պատրաստված զենքերը, գործիքները, կենցաղային առարկաները, արձանիկները, զարդերը և այլն վկայում են հին հայկական մշակույթի բարձր զարգացման մասին: Գեղամա, Սյունյաց լեռներում և այլ վայրերում հայտնաբերված ժայռապատկերները պատկերում են անասնապահական, որսորդական կյանքը, ռազմի տեսարաններ: Հայկական մշակույթը մեծ վերելք ապրեց հնագույն ժամանակներում: Հին հայկական մշակույթի ձևավորման և զարգացման մեջ որոշակի դեր ունեցավ Վանի թագա-

վորությունը: Վերջինիս վերացումից հետո ուրարտական սեպագիրը մոռացվեց: Սակայն պահպանվել են ոչ միայն շինարարական արվեստի, այլև կավե և մետաղյա իրերի, զենք ու զրահի և զարդերի շատ նմուշներ:

**նկ. Ժայռապատկերներ Գեղամա լեռներից**

Հայ մշակույթը մի նոր ծաղկում ապրեց Ք.ա. VI-IV դդ.: Նյութական մշակույթին վերաբերող նյութերը մեզ տալիս են պեղումները: Հիանալի տեղեկություններ է պահպանել Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունը հայկական բնակելի տների՝ աշտարակավոր և գետնափոր, մասին: Նշված ժամանակներում շինությունները, ինչպես նաև կավե, քարե և մետաղյա իրերն ու զարդերը նույնպես բաժանվում էին երկու խմբի: Դրանցից առաջինին վերաբերողները, որ պատկանում էին հասարակ ժողովրդին, պարզ էին ու հասարակ՝ հակառակ երկրորդ խմբի իրերի, որոնք շքեղ էին և մասամբ՝ ներմուծված այլ երկրներից: Հասկանալի է, որ դրանք օգտագործել են հարուստ մարդիկ: Հիշատակության արժանի են Արինբերդում (Թեյշեբաինի) պեղված արծաթե՝ հեծյալների քանդակներով գեղեցիկ ըմպանակները, որոնք պատրաստվել են Ք.ա. V դարում:

**նկ. Անահիտ աստվածուհու բրոնզե գլուխը (Սատաղ)**

***Հելլենիզմ հասկացությունը և հելլենիստական Հայաստանի մշակույթը:*** Ալեքսանդր Մակեդոնացու բանակների կողմից Աքեմենյան Պարսկաստանի կործանումից հետո Առաջավոր Ասիայի երկրների կյանքում սկսվեց մի նոր ժամանակաշրջան, որ գիտնականներն անվանում են հելլենիզմի կամ հունականության դարաշրջան: Արևելքի երկրներում լայնորեն տարածվում է հունարենը, իսկ տեղական և հունական մշակույթի սերտաճմամբ ստեղծվում է միանգամայն նոր մշակույթ, որն ընդունված է կոչել հելլենիստական:

Հայաստանը նույնպես ենթարկվել է հելլենիզմի ազդեցությանը: Սակայն թե՛ հունարենը և թե՛ հունական մշակույթը տարածում գտան գերազանցապես արքունիքում և ավագանու շրջանում, ինչպես նաև քաղաքային բնակչության մեջ, որտեղ մեծ թիվ էին կազմում բռնագաղթեցված հույները կամ հունախոս այլազգիները: Հասարակ ժողովուրդը, ընդհակառակը, շարունակում էր պահպանել ազգային մշակույթն ու ավանդույթները՝ ազգային խառնվածքն ու դիմագիծը: Հելլենիզմի դարաշրջանի մշակույթը մեծապես հարստացրեց մեր ազգային մշակույթը: Հելլենիզմի դարաշրջանը Հայաստանում տևեց գրեթե վեց դար:

## *2. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

***Շինարարական արվեստը, ճարտարապետությունը, կերպարվեստը:*** Հելլենիզմի դարաշրջանում բուռն զարգացում ապրեց քաղաքաշինությունը: Կառուցվում էին նոր քաղաքներ և ընդարձակվում էին հները: Նշված ժամանակաշրջանում մենք հանդիպում ենք մի քանի տասնյակ քաղաքների, որոնցից առավել նշանավորներն ու ամենախոշորներն էին Տիգրանակերտը և Արտաշատը: Արտաշես Ա-ի պատվերով նախապես կարթագենյան զորավար Հաննիբալը ստեղծում է քաղաքի հատակագիծը, և այնուհետև սկսվում են շինարարական աշխատանքները: Հայկական մայրաքաղաքն այնքան էր աչքի ընկնում իր մեծությամբ, հարստությամբ ու պարիսպների ամրությամբ, որ հռոմեացիներն, ինչպես նշել ենք, այն անվանել են Հայկական Կարթագեն: Արտաշատը կառուցվել է մի քանի բլուրների վրա, որոնցից իննի վրա գտնվել է հզոր պարիսպներ ունեցող միջնաբերդը: Պեղումների ժամանակ հայտնաբերված մարմարե և կավե արձանները, զենքն ու զրահը, գործիքները, ոսկուց ու արծաթից պատրաստված զարդերը վկայում են քաղաքային արհեստների բարձր զարգացածության մասին, հավաստում են մշակութային բարձր մակարդակը: Տիգրանակերտի, որի տեղադրությունը վերջնականապես

ճշտված չէ, պարիսպները, հասարակական գեղեցկատես շենքերը, պալատները, թատրոնը, թագավորական դղյակն ու պարտեզը վառ գույներով նկարագրել են օտար պատմիչները:

**նկ. Անտիոքոս Ա թագավորի դամբարանը (Կոմագենե, Նեմրութ լեռ)**

Մեծ զարգացում ապրեց ամրոցաշինությունը: Հայ ամրոցաշինության գոհարներից է Գառնի ամրոցը, որը եղել է հայոց թագավորների ամառանոցը: Այն շրջապատված է եղել ամրակուռ հզոր պարիսպներով, որոնք մինչև օրս էլ պահպանվել են: Գառնին ունեցել է արքունի պալատ և հեթանոսական տաճար: Վերջինը վերականգնվել է XX դարում: Պարիսպները կազմված են մեծամեծ տաշած քարերից, որոնք իրար են ագուցվել երկաթի կեռերով: Պարիսպներն ունեցել են երկու մետրից ավելի լայնություն և տասը մետր բարձրություն, որոնք ամրացված են եղել հուժկու աշտարակներով: Գառնիում Տրդատ Ա-Արտաշեսը թողել է հունարեն արձանագրություն, որը հայտնաբերեց նկարիչ Մ. Սարյանը գյուղական գերեզմանոցում: Արքունի պալատի հարևանությամբ գտնվել է բաղնիքը՝ իր սառը, գոլ և տաք բաժանմունքներով: Ջուրը տաքացվել է ստորգետնյա վառարաններով: Բաղնիքի հանդերձարանի հատակին պահպանվել է մի մեծ գունազարդ խճանկար՝ պատրաստված Ազատ գետի քարերից:

**նկ. Աստղիկ (Ափրոդիտե) աստվածուհու մարմարե արձանը Արտաշատից**

Մեզ հասած հայկական հեթանոսական ճարտարապետական հուշարձաններից ամենագեղեցիկը և կատարյալը Գառնիի տաճարն է, որը նույնպես կառուցվել է Տրդատ Ա-ի կողմից: Տաճարը հիշեցնում է հունա-հռոմեական տաճարային կառույցները, չորս կողմից շրջապատված է 24 սյուներով, զարդարված է շքեղ քանդակներով: Դրանք պատկերում են մարդկային կերպարանքներ, խաղող, նուռ, առյուծի գլուխ: Տաճարը նվիրված է եղել Միհր աստծուն: Հարկ է նշել, որ Գառնիի տաճարը շատ է հիշեցնում Մուծածիրի մեհյանը, ունի հայկական ճարտարապետությանը հատուկ մի շարք գծեր, իսկ քանդակները կրում են տեղական հնամենի ավանդույթների կնիքը: Հայաստանում գոյություն են ունեցել Արամազդ, Վահագն, Անահիտ, Աստղիկ և այլ աստվածներին նվիրված բազմաթիվ տաճարներ՝ աստվածների արձաններով, սակայն, ցավոք, դրանք չեն պահպանվել կամ դեռևս չեն հայտնաբերվել:

Գառնիում և Արտաշատում գտնվել են մարմարյա արձաններ, որոնցից նշանավոր է Արտաշատում գտնված կանացի արձանը: Արևմտյան Հայաստանում գտնվել է Անահիտ աստվածուհու բրոնզե գլուխը, որը պահպանվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Նկարչության բացառիկ օրինակ է Գառնիի բաղնիքի խճանկարը, որն աչքի է ընկնում գույների գեղեցիկ զուգորդումներով: Խճանկարի կենտրոնում օվկիանոսն է ու ծովը՝ տղամարդու և կնոջ տեսքով՝ շրջապատված ծովային կենդանիների և ձկների պատկերներով: Ինչպես ցույց են տալիս պեղումների նյութերը, Արտաշատի քաղաքացիների տները զարդարել են երաժիշտների, ձիավորների, մոր և մանկան ու այլ բազմաթիվ կավե արձանիկներ:

Արվեստի իսկական գործեր են Արտաշիսյան թագավորների հատած դրամները: Իրենց բարձրաքանդակով ու գեղեցկությամբ առանձնանում են հատկապես Տիգրան Մեծի և Արտավազդ Բ-ի դրամները՝ թագավորների պատկերներով: Հայոց թագավորները դրամների վրա թողել են իրենց անունները հունարեն գրությամբ, իսկ հակառակ երեսին պատկերել են աստվածներ, կենդանիներ և այլն:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

**1. Հին շրջանի մշակույթի վերաբերյալ ինչպիսի՞ աղբյուրներ կարող եք նշել:**

**2. Ի՞նչ նյութ են տալիս հայ մշակույթի վերաբերյալ հնագիտական պեղումները:**

**3. Ի՞նչ է հելլենիզմը կամ հունականության դարաշրջանը: Ինչքա՞ն է տևել հելլենիզմը Հայաստանում:**

**4. Ինչ գիտեք քաղաքաշինության մասին Հին Հայաստանում: Որոնք են եղել նշանավոր քաղաքները:**

**5. Ինչ կառուցվածք է ունեցել Գառնիի ամրոցը:**

**6. Որոնք են Գառնիի տաճարի ճարտարապետական ակունքները:**

**7. Ո՞վ է թողել Հայաստանի մեզ հասած առավել ամբողջական նկարագրությունը:**

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Արինբերդ • Հելլենիզմ • Միհր • Արամազդ •**
**• Վահագն • Անահիտ • Աստղիկ •**

## *3. ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ*

### *ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ*

***Առասպելներ:*** Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բաղկացուցիչ մասն են կազմում առասպելները, որոնց դուք արդեն մասամբ ծանոթ եք նախորդ դասերից: Դրանք գրի է առել Պատմահայր Մովսես Խորենացին, որն այդ զրույցները լսել է գուսաններից կամ էլ վերցրել է մեզ չհասած հնագույն գրքերից ու զետեղել իր «Հայոց պատմության» մեջ: Պատմահայրն այդ զրույցները բերել է վերապատմելով ու խմբագրելով, շատ քիչ դեպքերում՝ բառացի: Առասպելները, զրույցները և հին վեպերը արտացոլում են պատմական իրականության ինչ-ինչ կողմեր և կարևորագույն սկզբնաղբյուրներ են մեր ժողովրդի այդ հնագույն պատմաշրջանի ուսումնասիրության համար:

**նկ. Տորք Անգեղի արձանը Երևանում**

Հայերի ամենանշանավոր և միևնույն ժամանակ ամենահին, ինչ-որ չափով առասպելականացված պատմություններից է «Հայկի և Բելի մասին» զրույցը: Հայկն ըմբոստ և ազատասեր հսկա աղեղնավոր է, որն ըմբոստացել է Միջագետքի տիրակալ Տիտանյան Բելի դեմ: Սա ցանկացել է ընկճել Հայկին և իր տիրապետությունը հաստատել նրա ժողովրդի ու երկրի նկատմամբ: Բայց Հայկը ճակատամարտի ժամանակ սպանել է Բելին և պաշտպանել իր անկախությունը: Բելի զորքը սարսափահար փախել է մեր երկրից: Առասպելի հիմնական գաղափարն այն է, որ Հայկը հանդիսացել է հայերի անվանադիր նախնին: Մեր ժողովուրդն իրեն անվանել է հայ և երկիրը Հայաստան՝ իր նախնի Հայկ նահապետի անունով:

Նշանավոր են նաև Հայկյան Արամի (Արման)մասին զրույցները: Արամը ևս ընդհարվել է հարևան և հեռու այն երկրների հետ, որոնք ցանկացել են գրավել Հայաստանը: Նա բազում հաղթանակներ է տարել և ընկճել շատ ժողովուրդների, որոնք Արամի անունով մեր երկիրը անվանել են Արմենիա, իսկ ժողովրդին էլ՝ արմեններ:

Զափազանց ինքնատիպ է Հայկ նահապետի սերունդ Տորք Անգեղի մասին զրույցը: Տորքը նույնպես հսկա է, որն ունի ֆիզիկական ահռելի ուժ: Նա խորտակում է ծովի կողմից դեպի Հայաստան սուրացող թշնամական նավերը՝ նրանց վրա նետելով հսկայական ժայռաբեկորներ: Շատ հուզական է «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը: Արան հայոց թագավորն է, նա սիրում է իր հայրենիքն ու ընտանիքը: Լսելով նրա գեղեցկության մասին՝ Ասորեստանի պատերազմասեր և վավաշոտ թագուհի Շամիրամը սիրահարվում է Արա Գեղեցիկին: Թագուհին Արային առաջարկում է ամուսնանալ իր հետ և դառնալ Ասորեստանի տիրակալ: Սակայն հայոց թագավորը, հավատարիմ իր ժողովրդին ու ընտանիքին, մերժում է Շամիրամի առաջարկը: Ասորեստանի բանակը հարձակվում է Հայաստանի վրա, և Շամիրամը հույս ունի բռնությամբ տիրանալ Արային: Տեղի ունեցած ճակատամարտում Արան սպանվում է: Գոյություն են ունեցել նաև այլ առասպելներ և զրույցներ:

Առասպելները ցույց են տալիս մեր ժողովրդի ըմբոստ և ազատասեր ոգին, օտար բռնակալներին չինազանդվելու նրա անկոտրում կամքը, միևնույն ժամանակ նրա խաղաղասեր ու բարի բնավորությունը:

***Հին հայկական վեպերը:*** Ի տարբերություն առասպելների, որոնց մեջ պահպանվել են պատմական հեռավոր ու ձևափոխված հիշատակներ, հին հայկական վեպերը պարունակում են հիմնականում պատմական հավաստի նյութեր: Վեպեր են հյուսվել սիրված թագավորների և հերոսների մասին: Նրանց ընդհանուր գիծը անսահման սերն է հայրենիքի նկատմամբ, ազատատենչ ոգին ու պատրաստակամությունը՝ կյանքը չխնայել ժողովրդի ազատության համար: Նրանցից ամենասիրվածն ու տարածվածը եղել է «Արտաշեսի վեպը»: Արտաշես Ա-ն եղել է հայերի պաշտելի թագավորը, և պատահական չեն նրա մասին պահպանված վիպական ամբողջ շարքերը նրա մանկության, գահակալության, երկիրը շենացնելու, բարգավաճեցնելու, Արտաշատ մայրաքաղաքը կառուցելու և այլ մանրամասների մասին: Արտաշեսը պայքարել է երկիր ներխուժած արտաքին թշնամիների դեմ, հաղթել է նրանց և պաշտպանել իր երկրի ու ժողովրդի անկախությունն ու ազատությունը: Վեպի հիմնական հատվածներից է ալանաց արքայադուստր Սաթենիկի հետ ամուսնության դրվագը: Լեռնաբնակ ալանաց հրոսակախմբերը արշավել են Հայաստան: Արտաշեսը ջախջախել է նրանց և գերի վերցրել թագաժառանգին: Ալանաց արքայադուստր Սաթենիկը, կանգնելով Կուր գետի հակառակ՝ բարձր ափին, երգելով դիմում է Արտաշեսին.

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր ալանների քաջ ազգին,
Ե՛կ, համաձայնվիր իմ՝ ալանների գեղաչյա դստեր խոսքերին
Եվ տուր այդ պատանուն:
Որովհետև վայել չէ, որ քենի համար դյուցազունները
Այլ դյուցազունների ժառանգների կենդանությունը վերացնեն
Կամ ծառա դարձնելով ստրուկների կարգում պահեն,
Եվ երկու քաջ ազգերի միջև
Հավիտենական թշնամություն հաստատեն»:

Արտաշեսը սիրահարվում է գեղանի Սաթենիկին և խնամախոս է ուղարկում ալանների արքայի մոտ՝ խնդրելով օրիորդի ձեռքը: Բայց ալանաց արքան մերժում է, ասելով՝

«Եվ ո՞րտեղից քաջ Արտաշեսը պիտի տա
Հազար հազարներ ու բյուր բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի՝
Ալանների օրիորդի համար»:

Զայրացած Արտաշեսը, հայկական սովորույթի համաձայն, որոշում է առևանգել Սաթենիկին.

«Հեծավ արի Արտաշես արքան իր գեղեցիկ սև ձին,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,
Եվ նետելով ոսկեօղ շիկափոկ պարանը
Գցեց մեջքին ալանաց օրիորդի,
Եվ շատ ցավեցրեց փափուկ օրիորդի մեջքը,
Արագորեն իր բանակը հասցնելով»:

Արտաշեսն ու Սաթենիկը ամուսնանում են, տեղի է ունենում շքեղ հարսանիք, որի ժամանակ

«Ոսկե անձրև էր տեղում
Արտաշեսի փեսայության ժամանակ.
Մարգարիտ էր տեղում
Սաթենիկի հարսնության ժամանակ»:

Ապրելով երկար և երջանիկ կյանքով՝ Արտաշեսը մահանում է ծեր հասակում: Նրան թաղում են ոսկե դագաղում, բազմաթիվ զարդերով: Շատերը, չցանկանալով ապրել իրենց սիրելի թագավորից հետո, ինքնասպան են լինում: Այս բոլորը տեսնելով՝ թագաժառանգ Արտավազդը, նախանձելով հոր փառքին, նեղսրտած դիմում է նրան.

«Երբ դու գնացիր,
Ու ամբողջ երկիրը քեզ հետ տարար,
Ես այս ավերակների վրա
Ո՞ւմ թագավորեմ»:

Հայրն անիծում է նախանձ և փառասեր որդուն.

«Թե դու (ձի) հեծնես որսի գնաս
Ազատն ի վեր, դեպ Մասիս
Քաջքերը քեզ բռնեն տանեն
Ազատն ի վեր, դեպ Մասիս,
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»:

Արտաշեսի անեծքը կատարվում է: Որսորդության ժամանակ քաջքերը բռնում են Արտավազդին և շղթայակապ արգելափակում Մասիս լեռան մի քարանձավի մեջ:

Հին հայկական վիպական շարքում իր ուրույն տեղն ունի Մեծն Տիգրանի վեպը: Այստեղ գունեղ խոսքերով ներկայացվում են Տիգրան Մեծի անձը, գործերը, նրա հաղթանակները, նրա արդարադատ բնավորությունը: Հատկապես տպավորիչ է հայկական բանակի նկարագրությունը. «(Նրա ժամանակ) հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարս(ատիկն)երով կռվողները հաջող աղեղնավորներ, լախտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատվեցին վահաններով ու երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու»:

### *բ. ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ԿՐՈՆԸ*

***Հայերի հին կրոնը:*** Հին հայերը եղել են բնապաշտ. նրանք պաշտել են բնության երևույթները, կենդանական ու բուսական աշխարհի տարբեր ներկայացուցիչների: Հին հայկական դիցարանը ձևավորվել է դարերի ընթացքում: Հին հայերը եղել են բազմաստված, այսինքն՝ պաշտել են տարբեր աստվածների: Գլխավոր աստվածը եղել է Հայկը, որը հանդես է գալիս որպես հսկա որսորդ: Հայկն աստվածացված Հայկ Նահապետն է, որը ժողովրդի երգերում դարձել է լուսավոր ու գեղեցիկ մի համաստեղություն, որ հայերն անվանել են Հայկի անունով:

**նկ. Միհր-Ապոլոնի արձանը Կոմագենեից**

Հին Հայաստանում լայն տարածում է ունեցել Արայի պաշտամունքը: Արան բնության, բուսականության, երկրագործության աստվածն է եղել: Նա մեռնող և հարություն առնող աստված է, որ ամեն տարի ուշ աշնանը մեռնում է, իսկ վաղ գարնանը՝ հարություն առնում: Նրանով է կենդանանում ողջ բնությունը, նա կյանքի խորհրդանիշն է:

Հին Հայաստանում ամենասիրված աստվածներից է եղել Վահագնը: Նա քաջության, որոտի, կայծակի և պատերազմի աստվածն էր, որ բազմիցս փրկել էր Հայոց աշխարհը արհավիրքներից: Մովսես Խորենացին գրի է առել Վահագնի ծննդյան երգը, որ ոչ միայն հայկական, այլև համաշխարհային պոեզիայի սքանչելի գոհարներից է: Վահագնը գեղեցիկ և քաջ երիտասարդ է, որ ծնվում է բնության չորս տարրերի՝ օդի, հողի, ջրի, կրակի, և բուսական աշխարհի միասնությունից.

«Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը,
Երկնում էր և ծովը ծիրանի,
Երկունքը ծովում բռնել էր
Նաև կարմրիկ եղեգնիկին:
Եղեգնի փողից ծուխ էր ելնում,
Եղեգնի փողից բոց էր ելնում
Եվ բոցի միջից դուրս էր վազում
Մի խարտյաշ պատանեկիկ:
Նա հուր մազեր ուներ, (ապա թե)՝
Բոց մորուք ուներ,
Եվ աչիկներն էին արեգակներ»:

***Հայերի հեթանոսական նոր դիցարանը:*** Անցումը հին դիցարանից նորին տեղի է ունեցել Ք.ա. V-IV դարերի սահմանագծում: Նոր աստվածները հին դիցարանում մինչ այդ զբաղեցնում էին երկրորդական տեղ, այժմ նրանք սկսում են զբաղեցնել գլխավոր տեղերը:

**նկ. Հայոց գլխավոր աստված Արամազդը**

Որպես գերագույն աստված Հայկին փոխարինում է Արամազդը: Նա համարվում էր բոլոր աստվածների հայրը, երկրի և երկնքի արարիչը, որը բերք ու բարիք էր պարգևում աշխարհին և արիություն՝ մարդկանց: Հայոց աշխարհում կառուցվել են Արամազդին նվիրված բազմաթիվ տաճարներ, որոնցից գլխավորը Եփրատի ափին գտնվող Անի ամրոցի տաճարն էր: Ի դեպ, այստեղ էր գտնվում հայոց թագավորների դամբարանը:

Հին հայերի ամենասիրելի աստվածուհին Անահիտն էր: Նա մայրության, պտղաբերության ու արգասավորության դիցուհին էր, Հայոց աշխարհի ու մասնավորապես Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր աստվածուհին: Անահիտն անվանվել է նաև Ոսկեհատ, Ոսկեմայր, քանզի միակն էր, որին նվիրված արձանը ոսկեձույլ էր: Այն դրված էր Եփրատի ափին գտնվող Երիզա ավանում: Անահիտի քույր Աստղիկը համարվում էր սիրո և գեղեցկության, ինչպես նաև լույսի աստվածուհի: Նրանց կրտսեր քույրն էր Նանեն՝ իմաստության և ողջախոհության դիցուհին: Աստվածների աստղաբույլում իր կարևոր տեղն ուներ Միհր աստվածը, որը Արեգակի և կրակի խորհրդանիշն էր, ջերմություն և կյանք պարգևողը: Տիր աստվածը հովանավորում էր գիրն ու գրականությունը, ուսումն ու ճարտարապետությունը: Վանատուրը հյուրընկալության աստվածն էր:

Հելլենիզմի դարաշրջանում տեղի է ունենում հայկական հեթանոսական դիցարանի հելլենականացումը: Դա տուրք էր երկրում հաստատված նոր՝ հելլենիստական հարաբերություններին և տարածվող մշակույթին: Հայկական աստվածները համադրվում են համապատասխան հունական աստվածների հետ: Այսպես՝ Արամազդը նույնացվեց Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Վահագնը՝ Հերակլեսի, Աստղիկը՝ Ափրոդիտեի, Նանեն՝ Աթենասի, Տիրը՝ Ապոլոնի հետ և այլն: Հայկական մեհյաններում դրվեցին հունական աստվածների արձանները: Սակայն հայ ժողովուրդը երբեք չմոռացավ իր ազգային աստվածությունները և շարունակեց նրանց պաշտել, իսկ հունական աստվածները աստիճանաբար մոռացվեցին:

### *գ. ԳԻՐԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

***Գիրը:*** Ուսումնասիրողները հիմնավոր ցույց են տվել, որ Հին Հայաստանում գոյություն են ունեցել հայերեն մեհենագրեր[13], որոնք լայն տարածում չեն ունեցել և օգտագործվել են միայն մեհյաններում: Պաշտոնական գրագրության համար օգտագործել են արամեերեն և հունարեն լեզուները: Թագավորներն այդ լեզուներով թողել են իրենց արձանագրությունները, իսկ դրամները հատել են միայն հունարեն գրությամբ: Արմավիրում պահպանվել են Ք.ա. III դ. վերջերին վերաբերող հունարեն արձանագրություններ, որոնցից մեկը հայոց քրմապետի ուղերձն է Երվանդ Դ թագավորին:

Սևանա լճի ավազանում, Հարավային Սյունիքում և Սպիտակում հայտնաբերվել են 10-ից ավելի արամեերեն արձանագրություններ Արտաշես Ա-ի թողած սահմանաքարերի վրա: Պահպանվել են նաև Տրդատ Ա-ի և Տրդատ Գ-ի թողած հունարեն արձանագրությունները: Հունարեն և լատիներեն արձանագրություններ են հայտնաբերվել նաև Էջմիածնում, Արտաշատում, Վեդիում, Խարբերդում, Տիգրանակերտում և այլուր:

**նկ. Մեհենագիր երկու արձանագրություն Փառախոտից**

***Գրականությունը:*** Տիգրան Բ Մեծի օրոք Տիգրանակերտում է հաստատվում հույն նշանավոր հռետոր Ամփիկրատես Աթենացին: Նա հեղինակել է պատմագիտական բազմաթիվ երկեր, այդ թվում «Տիգրանի վարքը» վերտառությամբ մի աշխատություն, որը, ցավոք, մեզ չի հասել: Տիգրան Բ-ի արքունիքում էր ապրում նաև նշանավոր հույն փիլիսոփա և հռետոր Մետրոդորոս Սկեպսացին, որը հեղինակել է մեզ չհասած «Տիգրանի պատմությունը» աշխատությունը: Պատմական ողբերգությունների և գրական երկասիրությունների հեղինակ է եղել նաև հայոց Արտավազդ Բ թագավորը: Ք. հ. II դարում Հայաստանում են գործել ասորի պատմագիրներ Յամբլիքոսը և Բարդածանը, որոնք նույնպես գրել են Հայաստանի պատմությունը: Հայոց թագավորների և նրանց գործերի մասին հայերեն մեհենագրերով գրվել է մեզ չհասած այսպես կոչված Մեհենական պատմություններում: Մովսես Խորենացին հիշատակում է դրանց հեղինակներից մեկին՝ Անիի քուրմ Ողյումպին:

**նկ. Անդիմակ և դիմակավոր դերասանների մանրանկարներ**

Ք.ա. II դ. ասորի հեղինակ Մար Աբաս Կատինան շարադրել է Հայաստանի հին պատմությունը, որից լայնորեն օգտվել է Մովսես Խորենացին:

***Թատրոնը:*** Հին հայ մշակույթի կարևորագույն բնագավառներից էր թատրոնը: Հույն հեղինակները վկայություններ ունեն Տիգրանակերտի ու Արտաշատի թատրոնների և անգամ խաղացանկի ու դերասանների մասին: Օրինակ, Ք. ա. 53 թ. Արտաշատում բեմադրվել է հույն նշանավոր թատերագիր Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» ողբերգությունը: Թատրոններն ունեին հունական բացօթյա ամֆիթատրոնի տեսք և կարող էին տեղավորել մի քանի հազար հանդիսականների: Բացի հունական թատերախաղերից, այստեղ բեմադրվել են նաև հայ հեղինակների գործեր: Քաղաքներում և բնակավայրերում եղել են նաև ժողովրդական թատրոններ, որտեղ բեմադրվել են ներկայացումներ, կազմակերպվել հանդեսներ, պարեր, հանդես են եկել միմոսներ, խեղկատակներ, պարուհիներ և այլն:

Հայկական հելլենիստական մշակույթը կարևոր դեր ունեցավ վաղ միջնադարի հայկական մշակույթի վերելքի համար:

---

13 Հեթանոսական տաճարներում՝ *մեհյաններում*, հայերեն գրերով պատմություններ են գրվել: Այդ գրերը հայտնի են *մեհենագիր* անունով:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Ի՞նչ կրոն են դավանել հայերը մինչև քրիստոնեությունը:**
2. **Ինչպիսի՞ն է եղել հայերի հնագույն հեթանոսական կրոնը:**
3. **Հայոց հոգևոր մշակույթի մեջ ի՞նչ տեղ էին զբաղեցնում առասպելներն ու վիպական երգերը: Սովորաբար ովքե՞ր էին դառնում դրանց հերոսները:**
4. **Ո՞ր դարաշրջանում հայկական աստվածներն սկսեցին նույնացվել հունական աստվածների հետ: Ցո՛ւյց տվեք դրանց զուգահեռները:**
5. **Ի՞նչ գիտեք նախամաշտոցյան գրի և գրականության մասին:**
6. **Պաշտոնական գրագրության մեջ ի՞նչ օտար լեզուներ են օգտագործվել:**
7. **Ի՞նչ զարգացման է հասել թատրոնը Հին Հայաստանում:**
8. **Բնութագրե՛ք Հին Հայաստանի մշակույթը:**

## ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ

**• Հայկ • Անահիտ • Աստղիկ • Միհր • Նանե • Վանատուր • Տիր • Առասպել •**
**• Տորք Անգեղ • Շամիրամ • Վեպ • Արտաշես և Սաթենիկ • Դիցարան •**
**• Զևս • Արտեմիս • Հերակլես • Ափրոդիտե • Աթենաս • Ապոլոն •**
**• Մեհենագիր • Ամփիկրատես Աթենացի • Յամբլիքոս • Բարդածան •**

**11-րդ թեմայի ամփոփում**

1. Հին հայկական մշակույթի ակունքները հասնում են մինչև տոհմա-ցեղային շրջան: Հայկական մշակույթը բուռն վերելք է ապրում անհիշելի ժամանակներից: Այդ են ցույց տալիս հնագիտական պեղումների նյութերը:
2. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների հետևանքով Ք.ա. III դարից Հայաստանում սկսում է բուռն զարգացում ապրել հայկական հելլենիստական մշակույթը, որը տևում է շուրջ 6 դար: Այդ շրջանում մեծ նվաճումներ են ձեռք բերում քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը, ճարտարապետությունը, քանդակագործությունը, կերպարվեստը և այլն: Այդ մասին հավաստում են ոչ միայն հնագիտական պեղումները, այլև հունա-հռոմեական հեղինակների և Մովսես Խորենացու աշխատությունները:
3. Մեզ են հասել հնագույն առասպելներ կամ առասպելական պատմություններ, որոնք արտացոլում են հայկական հեթանոսական դիցարանը: Այդպիսի անզուգական նմուշներից են «Վահագնի ծնունդը» երգը և բազմաթիվ վիպական այլ երգեր, որոնք տեղեկություններ են պահպանել մեր ժողովրդի հեռավոր անցյալի մասին: Հիշատակության արժանի են «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» վիպական զրույցները: Հայաստանում գոյություն է ունեցել ոչ միայն հելլենիստական, այլև ժողովրդական թատրոն: Մեհյաններում հայերեն նշանագրերով գրվել են «Մեհենական պատմություններ», իսկ պաշտոնական լեզուները եղել են հունարենը և արամեերենը: Արամեերեն լեզվով արձանագրություններ են պահպանվել Արտաշես Ա-ի սահմանաքարերի վրա, իսկ դրամները հատվել են հունարեն գրությամբ:

## Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

Պատանի՛ բարեկամներ, դուք այս տարի ուսումնասիրեցիք մեր ժողովրդի հնագույն և հին շրջանի պատմությունը: Իմացաք, որ հայոց պատմությունը պարբերացվում է հետևյալ դարաշրջանների՝

**Հնագույն շրջան** – անհիշելի ժամանակներից մինչև Վանի թագավորության անկումը,

**Հին շրջան** – Երվանդունիների թագավորության կազմավորումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակվելը (IV դարի սկիզբ),

**Միջնադարի շրջան** – քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց մինչև XVII դարի կեսերը կամ հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը: Միջնադարն իր հերթին բաժանվում է ***վաղ, զարգացած և ուշ միջնադարի ժամանակաշրջանների:***

**Նոր պատմության շրջան** – XVII դարի հայ ազգային-ազատագրական շարժումներից մինչև Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը 1918 մայիսի 28-ին,

**Նորագույն պատմության շրջան** – Հայաստանի առաջին Հանրապետությունից մինչև մեր օրերն ընկած շրջանը:

Հայ ժողովուրդը կազմավորվել է ***Առաջավոր Ասիայի*** մի տարածաշրջանում, որը կոչվում է ***Հայկական լեռնաշխարհ***: Վերջինս ունի շուրջ 400 հազար քառ. կմ տարածք, գտնվում է Փոքրասիական բարձրավանդակի ու Իրանական սարահարթի միջև և ունի ծովի մակերևույթից 1500-1800 մ միջին բարձրություն: Այստեղից են սկիզբ առնում Եփրատը, Տիգրիսը, Երասխը, Կուրը և այլ գետեր: Հայկական լեռնաշխարհում են գտնվում Սևանա, Վանա և Ուրմիո մեծ լճերը:

Հայկական լեռնաշխարհը մարդու հնագույն օրրաններից մեկն է: Նախնադարյան մարդկային հասարակության պատմությունը հաշվվում է մեր հայրենիքում շուրջ մեկ միլիոն տարի: Այն բաժանվում է հետևյալ դարաշրջանների՝ ***հին քարի դար (պալեոլիթ), միջին քարի դար (մեզոլիթ), նոր քարի դար (նեոլիթ), պղնձաքար (էնեոլիթ), բրոնզի դար և երկաթի դար:***

Աստիճանաբար առաջանում է մասնավոր սեփականությունը՝ ծնելով գույքային անհավասարություն: Հանդես են գալիս առաջին զինված ջոկատները, ցեղային միությունները և պետական կազմավորումները:

Հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում, որը վաղնջական ժամանակներից բնակեցված է եղել բազմաթիվ ցեղերով, որոնց գերակշիռ մասը հայկական էր: Առաջին պետական կազմավորումը հանդես է եկել մ.թ.ա. III հազարամյակում, որը կրել է ***Արատտա անունը:*** Ավելի ուշ հանդես է գալիս ***Թորգոմի տունը*** կամ ***Թեգարաման,*** որին վիճակված էր վճռական դեր խաղալու հայ ժողովրդի կազմավորման գործում: Կարևոր են եղել ***Հայասա-Ազզի*** պետական կազմավորումը, ***Նաիրի*** և ***Ուրուատրի*** ցեղային միությունները և ուրիշներ: Հարևան ***Խեթական պետության, Միտաննիի*** և ***Ասորեստանի*** հարձակումները նպաստել են, որ նրանց դեմ պայքարում Հայկական լեռնաշխարհի բնակչությունը միավորվի: Հայկական ավանդական պատմության համաձայն հայ ժողովրդի նախնին եղել է ***Հայկը***, որի անունով էլ կոչվել է ժողովուրդը:

Համահայկական առաջին պետությունը, որ հայտնի է ***Այրարատյան թագավորություն*** կամ ***Թորգոմի տուն*** անունով, հանդես է գալիս Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 1032 թ.: Առաջին թագավորը եղել է ***Արամայիսը:***

Ք.ա. IX դարում Վանա լճի ավազանում ծնունդ է առնում ***Վանի*** կամ ***Բիայնիլիի թագավորությունը,*** որն ասսուրական սեպագիր արձանագրություններում հայտնի է ***Ուրարտու*** անունով: ***Մենուա,***

***Արգիշտի Ա*** և ***Սարդուրի Բ*** թագավորների օրոք Վանի թագավորությունը վերածվում է Առաջավոր Ասիայի հզոր տերության: Մայրաքաղաքն էր ***Տուշպա քաղաքը:*** Ք.ա. 782 թ. Արգիշտի Ա-ն Այրարատյան դաշտում հիմնում է Էրեբունի բերդ-քաղաքը: Վանի թագավորությունը թուլանում է կիմմերական, սկյութական ցեղերի և Ասորեստանի հարձակումների հետևանքով և անկում է ապրում Ք.ա. VII դարի վերջերին: Վանի թագավորությունում մեծ զարգացման հասան ***գյուղատնտեսությունը, արհեստները, քաղաքաշինությունը, ջրանցքաշինությունը, կերպարվեստը*** և այլն: Նյութական մշակույթի մասին մեզ հարուստ նյութեր են տալիս հնագիտական պեղումները;

Վանի թագավորության անկումից հետո նրա տարածքում հանդես եկան մի շարք պետական կազմավորումներ, որոնց մեջ սկսեց առանձնանալ ***Պարույրի թագավորությունը:*** Սակայն Հայաստանն ամբողջությամբ իրենց իշխանության ներքո միավորեցին Երվանդական արքայատոհմի ներկայացուցիչները: Սրանց օրոք էլ ավարտվեց հայ ժողովրդի կազմավորումը: Հայերն իրենց ***հայ*** էին կոչում, իսկ հարևանները ***արմեն*** կամ ***արմանիկ*** (հայոց ***Արամանի*** թագավորի անունով):

Հայոց Երվանդականների թագավորությունը աջակցում է պարսից ***Կյուրոս Մեծին***՝ դառնալով նրա դաշնակիցը: Սակայն ավելի ուշ Հայաստանը վերածվեց ***Աքեմենյան տերության*** XIII սատրապության՝ շարունակելով գոյատևել որպես ենթակա թագավորություն: Հզոր էր Ք.ա. VI դարում հայերի հակապարսկական ապստամբությունը, որը պարսից արքունիքը կարողացավ ճնշել միայն հինգ արյունահեղ ճակատամարտերից հետո:

Աքեմենյան տերությունն ընկավ ***Մակեդոնիայի*** թագավոր ***Ալեքսանդր Մակեդոնացու*** բանակների հարվածների ներքո: Հայերը մասնակցեցին Ք.ա. 331 թ. ***Գավգամելայի*** ճակատամարտին պարսիկների կողմում և մակեդոնացիների հաղթանակից հետո հռչակեցին ***Մեծ Հայքի*** և ***Փոքր Հայքի թագավորությունները:*** Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չի արշավել, իսկ նրա ուղարկած զորքերը հայերից պարտություն են կրել:

Ալեքսանդր Մակեդոնացու տերության տարածքում ձևավորված ամենուժեղ թագավորությունը ***Սելևկյան պետությունն*** էր, որին հաջողվում է քաղաքականապես տրոհել Հայաստանը չորս թագավորությունների և իրեն ենթարկել ***Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի*** և ***Կոմագենեի թագավորությունները:***

Քաղաքական իրադրությունը փոփոխվեց հօգուտ հայերի Ք.ա. II դարի սկզբներին, երբ Սելևկյան բանակները ծանր պարտություն կրեցին ***Հռոմեական հանրապետությունից*** Մագնեսիայի մոտ, Ք.ա. 190 թ.: ***Արտաշեսը*** և ***Զարեհը*** իրենց անկախ հռչակեցին՝ վերականգնելով Մեծ Հայքի և Ծոփքի թագավորությունները: Արտաշես Ա-ն, որ հիմք դրեց ***Մեծ Հայքի Արտաշիսյան թագավորությանը, Երասխի*** և ***Մեծամորի*** ջրկիցի շրջանում կառուցում է իր թագավորության նոր մայրաքաղաք ***Արտաշատը:*** Նրա իրականացրած ռազմական, հողային և այլ բարեփոխումների հետևանքով Մեծ Հայքի թագավորությունը խիստ ուժեղացավ: Ետ վերադարձվեցին հարևանների կողմից Հայաստանից խլված տարածքները: Հողային հարաբերությունները կարգավորելու համար Արտաշես Ա-ն սահմանաքարեր կանգնեցրեց:

***Տիգրան Բ Մեծ*** Արտաշիսյան թագավորի օրոք (Ք.ա. 95-55) Մեծ Հայքի թագավորությունը վերածվում է ***Առաջավոր Ասիայի*** հզոր տերության: Վերջինիս սահմանները ձգվում էին ***Եգիպտոսից*** և ***Կարմիր ծովից*** մինչև ***Կովկասյան լեռներ, Միջերկրական ծովից*** մինչև ***Կասպից ծով*** և ***Հնդկաստան:*** Նրա անմիջական ենթակայության տակ գտնվող հողերով և քաղաքական ազդեցության ոլորտում հայտնված երկրների հետ միասին տերությունն ուներ շուրջ ***3 միլիոն***

***քառակուսի կմ տարածք:*** Տերության կառավարումը բարելավելու նպատակով Տիգրան Մեծը կառուցեց ***Տիգրանակերտ մայրաքաղաքը:*** Նրա տերությունը կառավարվում էր արքունի կառավարիչների և տեղական ենթակա թագավորների միջոցով: Նրա հզոր դաշնակիցն էր ***Պոնտոսի*** թագավոր ***Միհրդատ Զ Եվպատորը***, որը Հռոմի երդվյալ թշնամին էր:

Հռոմի հեղինակությունը Արևելքում խիստ խախտվեց, որը վերականգնելու համար Հռոմի հանրապետությունը պատերազմներ սանձազերծեց Հայաստանի դեմ: Թշնամուն, որին առաջնորդում էր ***Լուկուլլոսը,*** հաջողվեց Ք.ա. 69 թ. գրավել Տիգրանակերտ մայրաքաղաքը: Սակայն ընդամենը մեկ տարի անց հռոմեական զորքերը ծանր պարտություն կրեցին Արածանիի ճակատամարտում Ք.ա. 68 թ.: Հռոմեական հաջորդ արշավանքը գլխավորեց նշանավոր զորավար ***Գնեոս Պոմպեոսը:*** Տիգրան Մեծը ստեղծված ծանր իրադրության պայմաններում որոշեց հաշտություն կնքել, ինչը տեղի ունեցավ Ք.ա. 66 թվին Արտաշատ մայրաքաղաքում: Տիգրան Մեծը կորցրեց նվաճած երկրների մեծ մասը, սակայն կարողացավ իր իշխանության տակ պահել հայկական հողերի գերակշիռ մասը և թագավորության անկախությունը:

Հռոմի ճնշումը Հայոց թագավորության նկատմամբ շարունակվեց Տիգրան Մեծի հաջորդ ***Արտավազդ Բ-ի*** և վերջին Արտաշիսյանների օրոք: Դրա դեմ հաջողությամբ պայքարեցին ***Արտավազդ Բ-ն,*** նրա որդի ***Արտաշես Բ-ն*** և ***Տիգրան Դ-ն,*** որը զոհվեց Հյուսիսային Կովկասի լեռնականների դեմ պայքարում:

Սպառվեց Արտաշիսյան արքայատոհմի արական ճյուղը, և Մեծ Հայքի թագավորությունում սկսեցին Հռոմի օգնությամբ գահակալել օտարազգի դրածո թագավորները: Նրանք որպես կանոն զոհ էին դառնում հայոց ավագանու վրեժխնդրությանը: Իր բնական մահով մահացավ միայն ***Զենոն-Արտաշեսը,*** որը մեծացել էր հայերի մեջ և Հայոց թագավորության շահերի ջերմ պաշտպանն էր:

Հայոց ավագանու համաձայնությամբ Ք.ա. 52 թվին հայոց գահ բարձրացավ պարթևական թագավորի եղբայր ***Տրդատ Ա-ն,*** որը հայկական աղբյուրներում հայտնի է ***Արտաշես*** անունով: Հռոմի և Մեծ Հայքի ու Պարթևստանի միջև սկսված 10-ամյա պատերազմից հետո, երբ հռոմեական զորքերը ***Հռանդեայում*** ծանր պարտություն կրեցին, Հռոմը համաձայնեց Տրդատ Ա-ին ճանաչել հայոց թագավոր: Սակայն նա թագը պետք է ստանար Հռոմում կայսր ***Ներոնի*** ձեռքից: Տրդատ Ա-ն վերադարձավ Ք.ծ.հ. 66 թվին, վերականգնեց ավերված Արտաշատը և կառուցեց ***Գառնիի հեթանոսական տաճարը:***

II դարի 60-ական թթ. Հայոց թագավորության մայրաքաղաք դարձավ Վաղարշապատը, իսկ մի քանի տասնամյակ անց թուլացող Հռոմը ճանաչեց ***Հայ Արշակունիների*** ժառանգական իշխանությունը:

226 թ. ***Պարսկաստանում*** իշխանության գլուխ եկան ***Սասանյանները,*** որոնք կամենում էին վերականգնել ***Աքեմենյանների պետությունը*** և Մեծ Հայքում վերացնել Հայ Արշակունիների իշխանությունը: Հայոց թագավոր ***Խոսրով Ա-ն,*** որ օտար աղբյուրներում հայտնի է ***Տրդատ Բ*** անունով, երկար պայքար մղեց Սասանյանների դեմ Պարսկաստանում Պարթև Արշակունիների իշխանությունը վերականգնելու համար: Սակայն 259 թ. նա սպանվեց Սասանյանների գործակալ Անակ իշխանի կողմից: Մանկահասակ Տրդատ արքայազնին փախցրեցին Հռոմ: Մեծ Հայքում իշխանության եկան Սասանյանների ներկայացուցիչները, որոնց իշխանությունը շարունակվեց մինչև III դարի վերջերը:

274 թվին ***Տրդատ Գ-ն*** Մեծ Հայքի արևմտյան մասում հռչակվեց հայոց թագավոր, սակայն շատ

չանցած թողեց երկիրը: 288 թվին նրան հայոց գահ բարձրացրեց Դիոկղետիանոս կայսրը, իսկ Ներսեհ Սասանյանը պահպանեց իր իշխանությունը Մեծ Հայքի արևելյան շրջաններում: Դառնալով Պարսկաստանի արքայից արքա՝ Ներսեհը փորձեց վերագրավել Մեծ Հայքի թագավորությունը, սակայն ծանր պարտություն կրեց 297 թվին և ստիպված եղավ կնքել Մծբինի 40-ամյա հաշտությունը: Մեծ Հայքի թագավորության համար սկսվեց խաղաղ զարգացման մի երկարատև շրջան:

Մեծ Հայքում բարձր զարգացման հասան գյուղատնտեսությունը, արհեստագործությունը և առևտուրը: Առևտրական ճանապարհի հիմնական խաչմերուկը Արտաշատ մայրաքաղաքն էր, իսկ II դարի վերջերից՝ Վաղարշապատը: Առևտրական ճանապարհների մեջ նշանավոր էր ***«Հայոց արքունի պողոտան»***:

Գյուղացիները միավորված էին ***գյուղական համայնքների*** մեջ: Այն հնարավորություն էր տալիս գյուղացիներին պաշտպանել իրենց շահերը, սակայն ձեռնտու էր նաև իշխաններին, քանի որ համայնքը ***համապարտ երաշխավորության*** սկզբունքով վճարում էր նաև չունևորների հարկերը:

Պետության գլուխ կանգնած էր թագավորը արքունիքի հետ միասին և իրականացնում էր իշխանությունը ***գործակալությունների*** միջոցով: Հայոց արքան կրել է ***«արքայից արքա», «Մեծ Հայաստանի մեծ թագավոր»*** տիտղոսները: Նշանավոր գործակալություններից էին ***հազարապետությունը, սպարապետությունը, մաղխազությունը, մարդպետությունը, մեծ դատավարությունը*** և այլն:

Թագավորությունը սկզբում բաժանվում էր 120 գավառների, իսկ ավելի ուշ՝ 20/21 աշխարհների: Իրենից պատկառելի ուժ էր ներկայացնում հայոց բանակը: Ք.ա. VI դարում այն բաղկացած էր 40-հազարանոց հետևակից և 8 հազար հեծյալներից: Տիգրան Մեծի օրոք այն 300 հազար զինվոր ուներ, իսկ Արշակունիների շրջանում՝ 120 հազար, որից 40-հազար զինվորները կազմում էին արքունի գնդերն, որոնց գլուխ կանգնած էին բդեշխները: Բանակի հրամանատարը թագավորն էր, սակայն փաստական հրամանատարությունը պատկանում էր սպարապետին:

Մեծ զարգացման հասավ հայոց մշակույթը: Ալեքսանդր Մակեդոնացու տերության ստեղծումից հետո Հայաստանում տարածվեց ***հելլենիզմը,*** իսկ ավագանու շրջանում՝ ***հունարենը***: Մեծ ծաղկում ապրեց ***քաղաքաշինությունը***: Դրան նպաստում էր նաև Հայաստան բռնագաղթեցված հույն բնակչության առկայությունը: Սակայն հասարակ ժողովուրդը շարունակում էր պահպանել ազգային մշակույթն ու ավանդությունները՝ ազգային խառնվածքն ու դիմագիծը: Հելլենիզմի դարաշրջանը Հայաստանում տևեց 6 դար:

Զարգացան շինարարական արվեստը, ճարտարապետությունը, կերպարվեստը: Հայ մշակույթի անկապտելի մասն էին կազմում առասպելները, ժողովրդական վեպերն ու զանազան ասքերը: Մեծ ծաղկում ապրեց հայերի հին կրոնը, որը հելլենիզմի շրջանում սկսեց հունականանալ: Զարգացան մեհենական գիրը, գրականությունը և թատրոնը: Հայաստանում են գործել հույն նշանավոր գիտնականներ ***Ամփիկրատես Աթենացին, Մետրոդորոս Սկեպսացին*** և ուրիշներ: Ողբերգություններ ու թատերգություններ է գրել ***Արտավազդ Բ թագավորը:*** Ք.ա. II դարում նշանավոր է եղել ***Մար Աբաս Կատինան,*** որի հեղինակած «Հայոց պատմություն»-ից մեծապես օգտվել է ***Պատմահայրը:***

IV դարի սկզբներից Հայոց թագավորությունը թևակոխեց ***միջնադարի ժամանակաշրջան:***

# ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| **Շուրջ 1 մլն տարի առաջ** | Քարի դարի սկիզբը Հայկական լեռնաշխարհում: |
| **Ք.ա. VII հազարամյակ** | Քարի դարի վերջը Հայկական լեռնաշխարհում: |
| **Ք.ա. VI-IV հազարամյակ** | Պղնձաքարի դար (Էնեոլիթ): |
| **Ք.ա. IV հազ. կեսերից-II հազարամյակ** | Բրոնզեդարյան մշակույթի ժամանակաշրջանը: |
| **Ք.ա. XXVIII-XXVII դարեր** | Առաջին վաղ պետական կազմավորումը Հայկական լեռնաշխարհում՝ Արատտա: |
| **Ք.ա. XVIII-XII դարեր** | Խեթական (Խաթթի) պետությունը՝ Խաթուսաս մայրաքաղաքով: |
| **Ք.ա. XVII-XIII դարեր** | Միտաննի պետությունը՝ Վաշուգանե մայրաքաղաքով: |
| **Ք.ա. XIV դար** | Խեթերի արշավանքները Հայասայի դեմ: Խեթերի թագավորի քրոջ և Հայասայի արքա Խուկաննասի ամուսնությունը: |
| **Ք.ա. II հազարամյակի երկրորդ կես** | Նաիրի և Ուրուատրի ցեղախմբերը Հայկական լեռնաշխարհում: |
| **Ք.ա. IX դարի կեսեր** | Վանի թագավորության (Ուրարտու) առաջացումը Տուշպա (Վան) մայրաքաղաքով: |
| **Ք.ա. 810-786 թթ.** | Մենուա: Վանի թագավորության վերածումը Առաջավոր Ասիայի հզոր պետության: |
| **Ք.ա. 786-764 թթ.** | Արգիշտի Ա: |
| **Ք.ա. 782 թ.** | Էրեբունի (Երևան) քաղաքի հիմնադրումը: |
| **Ք.ա. 764-735 թթ.** | Սարդուրի Բ: |
| **Ք.ա. 743 թ.** | Ասորեստանի Թիգլաթ-Պալասար Գ թագավորի հարձակումը Վանի թագավորության վրա: |
| **Ք.ա. 735-713 թթ.** | Ռուսա Ա: Թագավորության նոր մայրաքաղաքի՝ Ռուսախինիլիի հիմնադրումը: |
| **Ք.ա. 714 թ.** | Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի ավերիչ արշավանքը Վանի թագավորություն: |
| **Ք.ա. 685-645 թթ.** | Ռուսա Բ: Կառուցվում է Թեյշեբաինի քաղաքը (Կարմիր բլուր): |
| **Ք.ա. 612 թ.** | Ասորեստանի տապալումը և նրա մայրաքաղաք Նինվեի գրավումը մարերի, բաբելոնացիների և հայերի համատեղ ուժերով: |
| **Ք.ա. VI դարի վերջերին** | Հայ ժողովրդի կազմավորման ավարտը: Հայաստանի Երվանդական թագավորության ծնունդը: |
| **Ք.ա. 550 թ.** | Աքեմենյան դինաստիայի հաստատումը Պարսկաստանում Կյուրոս Մեծի գլխավորությամբ: |
| **Ք.ա. 401-400 թթ.** | Հունական տասհազարանոց զորաբանակի նահանջը Հայաստանի վրայով: |
| **Ք.ա. 331 թ.** | Գավգամելայի ճակատամարտը և Աքեմենյան Պարսկաստանի կործանումը: |
| **Ք.ա. 330 թ.** | Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների հռչակումը: |
| **Ք.ա. 312 թ.** | Սելևկյան պետության հիմնումը: |
| **Ք.ա. 201-190 թթ.** | Սելևկյան գերիշխանության հաստատումը Մեծ Հայքում և Ծոփքում: |
| **Ք.ա. 190 թ.** | Մագնեսիայի ճակատամարտը: Սելևկյան տերության քայքայման սկիզբը: |
| **Ք.ա. 189– մոտ 160 թթ.** | Արտաշես Ա-ի գահակալությունը Մեծ Հայքում: Հայկական հողերի միավորումը և Մեծ Հայքի կենտրոնացված պետության առաջացումը: |

| | |
|---|---|
| **Ք.ա.180-ական թթ.** | Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը: |
| **Ք.ա. 95-55 թթ.** | Տիգրան Բ Մեծի գահակալությունը: |
| **Ք.ա. 94 թ.** | Ծոփքի միացումը Մեծ Հայքի թագավորությանը: |
| **Ք.ա. 89-71 թթ.** | Տիգրան Բ-ի նվաճումները: |
| **Ք.ա. 69-66 թթ.** | Հայ-հռոմեական պատերազմները: |
| **Ք.ա. 69 թ. հոկտ. 6** | Տիգրանակերտի ճակատամարտը: |
| **Ք.ա. 68 թ.** | Արածանիի ճակատամարտը: |
| **Ք.ա. 66 թ.** | Պոմպեոսի արշավանքը Հայաստան և հայ-հռոմեական պայմանագրի կնքումը Արտաշատում: |
| **Ք.ա. 55-34 թթ.** | Արտավազդ Բ: |
| **Ք.ա. 53 թ.** | Կրասոսի պարթևական արշավանքը և հայ-պարթևական ռազմաքաղաքական դաշինքի ձևավորումը: |
| **Ք.ա. 53 թ. մայիսի 6** | Խառանի ճակատամարտը, հռոմեական բանակի ջախջախումը և Կրասոսի սպանությունը: |
| **Ք.ա. 36 թ.** | Անտոնիոսի պարթևական արշավանքը: |
| **Ք.ա. 34 թ.** | Անտոնիոսի արշավանքը Հայաստան: Արտավազդ Բ-ի ձերբակալումը: |
| **Ք.ա. 30-20 թթ.** | Հայաստանի անկախության վերականգնումը: Արտաշես Բ: |
| **Ք.ա. 20-8 թթ.** | Տիգրան Գ: |
| **Ք.ա. 1 թ.** | Արտաշիսյան արքայատոհմի արական ճյուղի սպառումը: |
| **54-64 թթ.** | Հայ-հռոմեական տասնամյա պատերազմը: |
| **62 թ.** | Հռանդեայի (Եռանդի) ճակատամարտը: Հռոմեացիների վտարումը Հայաստանից: |
| **64 թ.** | Հռանդեայի համաձայնագրի կնքումը: |
| **66 թ.** | Տրդատ Ա-ի (Արտաշեսի) թագադրումը Ներոնի կողմից: Արշակունյաց արքայատոհմի հայկական ճյուղի սկզբնավորումը: |
| **114 թ.** | Տրայանոս կայսեր արշավանքը Հայաստան: |
| **117-140 թթ.** | Վաղարշ Ա-ն հայոց թագավոր: Վաղարշապատի կառուցումը: |
| **191-211 թթ.** | Վաղարշ Բ-ն հայոց թագավոր: Հայ Արշակունիների ժառանգական իշխանության սկիզբը: |
| **211-259 թթ.** | Խոսրով Ա Մեծ (Տրդատ Բ): |
| **226 թ.** | Սասանյան արքայատոհմի իշխանության հաստատումը Պարսկաստանում: |
| **274/288-330 թթ.** | Տրդատ Գ Մեծ: |
| **298 թ.** | Մծբինի հաշտության 40-ամյա պայմանագիրը: |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն** ..... **2**

**ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

**Թ Ե Մ Ա 1. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ** ..... **3**

**Թ Ե Մ Ա 2. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ** ..... **9**

1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԸ ..... 9
2. ՔԱՐԻ ԴԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ..... 10
3. ՊՂՆՁԱՔԱՐԻ (ԷՆԵՈԼԻԹ) ԵՎ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ..... 12
4. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ..... 13

**Թ Ե Մ Ա 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ** ..... **16**

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ ..... 16
2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ..... 18
3. ՀԱՅԿՅԱՆՆԵՐԻ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 20

**Թ Ե Մ Ա 4. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք. Ա. IX-VII ԴԴ.)** ..... **23**

1. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ, ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ ..... 23
2. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ..... 27

**Բ Ա Ժ Ի Ն 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

**Թ Ե Մ Ա 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ** ..... **32**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ..... 32
2. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ..... 35
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ..... 37

**Թ Ե Մ Ա 6. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍ Ա** ..... **40**

1. ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԻԱՎՈՐԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 40
2. ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ ..... 41

**Թ Ե Մ Ա 7. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԻԳՐԱՆ Բ ՄԵԾ ..... 44**

1. ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ..... 44
2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 47
3. ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (Ք. Ա. 69-66 թթ.) ..... 49

**Թ Ե Մ Ա 8. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԹԵՎԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 55**

1. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՀՌՈՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ: ԱՐՏԱՎԱԶԴ Բ ..... 55
2. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԱՐՏԱՇԻՍՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ ..... 60

**Թ Ե Մ Ա 9. ՀԱՅԱՍՏԱՆԸ I-III ԴԱՐԵՐՈՒՄ ..... 62**

1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 62
2. ՀԱՅԱՍՏԱՆԸ II-III ԴԱՐԵՐՈՒՄ ..... 66

**Թ Ե Մ Ա 10. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ..... 71**

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ..... 71
2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ..... 74

**Թ Ե Մ Ա 11. ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ..... 77**

1. ՎԱՂ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ..... 77
2. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ..... 78
3. ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ ..... 80

**ԱՄՓՈՓՈՒՄ ..... 86**

**ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... 90**